

**ԻՆՉ ԵՆ ԹԱԶՅՆՈՒՄ
ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԸ**

Բաֆֆի Քոռքոշյան

Սկիզբը նախորդ համարում

Է

Բալուի բերդում 2008 թ. զետեղված էր հետևյալ ցուցանակը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, ցուցանակ է)։

Բնագիր. քուրքերեն.

Palu kalesi
(Urartu dönemi)
(M.Ö.9.-M.Ö.600 y.y)

Kaya üzerine inşa edilen yapı, Urartular devrinde kral Menuas tarafından yaptırılmıştır. Kale üzerinde görülen dış surlar ve bazı yapı kalıntıları, moloz taş kullanılmıştır. Daha sonraki devirlerde onarım görmüştür. Çivi yazısından oluşan kaya kitabe Urartu Kralı Menuas'a aittir. Kalenin güney-doğu yönündeki dış surun bir bölümü ile bazı yapı kalıntıları mevcuttur. İçten kindik taşında son bulan gizli bir kanal ve "Ali gelmez" denilen Murat nehrine açılan, kısmen açık kanal taş merdivenli bir yolu vardır. Urartu kitabesi

bulunmaktadır. Daha sonraki devirlerde Selçuklu, Artuklu ve Osmanlı iskanı görmüştür.

T.C

Palu kaymakamlığı
19 Mayıs 2004

Բնագիր. անգլերեն.

The castle was built on rocks in Urartian period by the king Menuas rubble stones were used on the outer walls that are seen by the castle, and on same ruins of the construction. it was restored in the following ages. The stone Epitaph which was formed by cuneiform writing belongs to the Urartian king Menuas. Today, there are some part of the outer walls on the south-east direction and some ruins of the castle. there are a hidden canal that ends by the Kindik stone and an open canal, named "Ali Gelmez" Which has a rocky staired way. There is an Urartian Epitaph which belongos to the king Menuas in the 3 castle that was a place for people in the Urartian period in the following periods Seljuks, Artuklu people and Ottomans settled here.



Ցուցանակ է

Թարգմ. Բալուի բերդ

Ուրարտական ժամանակաշրջան
(մ.թ.ա 9- մ.թ.ա. 600 թթ.)

Կառուցվել է ժայռի վրա Ուրարտուի թագավոր Մենուայի կողմից: Բերդի պարիսպները և այդտեղ պահպանված մի քանի շինություններ կառուցվել են անմշակ քարերով: Բերդն ավելի ուշ տարբեր ժամանակաշրջաններում վերանորոգվել է: Ժայռավոր սեպագիր արձանագրությունը պատկանում է Ուրարտուի թագավոր Մենուային: Պահպանվել է բերդի արտաքին պարիսպների հյուսիսարևելյան հատվածը, իսկ ներսում՝ մի քանի կառույցներ: Ներքուստ գտնվում է «Քինդրք» տեսակի քարով ավարտվող գետնուղի: Դեպի Մուրատ գետ տանող ժայռավոր աստիճաններով «Ալի Գելմեզ» կոչվող մեկ այլ գաղտնուղի էլ կա, որի մի մասը դրսում է: Ավելի ուշ բերդում բնակվել են սելջուկները, արտուխյունները և օսմանցիները:

Ծանոթ. ցուցանակում նշվել է, որ ուրարտական ժամանակաշրջանից հետո տարածքում բնակություն են հաստատել սելջուկները, արտուխյունները և օսմանցիները:

Այստեղ նախ և առաջ պետք է իրարից տարանջատել տարածքում իր իշխանությունը հաստատած պետական միավորները և սրանց կազմում բնակվող ազգաբնակչությունը, որովհետև անկախ նրանից, թե ով է եղել տիրապետող, դարեր շարունակ Հայկական լեռնաշխարհում հայերը թվաքանակով միշտ եղել են գերիշխող: Բացառություն է կազմում միայն Օսմանյան կայսրության վերջին հիսուն տարին, երբ անընդմեջ ճնշումների և կոտորածների հետևանքով ժամանակ առ ժամանակ որոշ վայրերում երկրի բնիկների թիվը նվազել է: Բալու քաղաքում, ըստ Տերոյանցի, 1870 թ. սկսած, հայերի թիվը «օր ըստ օրե» նվազել, և «...հայ ազգաբնակչության գրեթե հինգերորդ մասը գաղթած է...»¹:

1895 թ. կոտորածների ժամանակ քաղաքում սպանվում է 1200 հայ²:

1915 թ. քաղաքի բոլոր հայերն արքայազն են, և նրանցից շատ քչերին է հաջողվում ողջ մնալ:

Բալու քաղաքը, ամենայն հավանականությամբ, մինչև ԺԲ դարի վերջը՝ Թոռնիկյան իշխանության անկումը, եղել է զուտ հայաբնակ՝ չհաշված Ը-Թ դդ. բերդում տեղակայված արաբական զորամիավորը:

1613 թ. Միմեոն Լեհացին վկայում է. «...հասա Բալու ավանը՝ բազում հայկական գյուղերով... Եվ ուներ սուր բարձր, անառիկ մի բերդ... Եվ կար Ը(8)

1 Տերոյանց Մ., Բալու, «Արաքս», (1894-1895), 1897, գիրք Բ, էջ 38:

2 Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ, համապատասխան հատորով և էջերով), հ. 6, Երևան, 1981, էջ 267-268:

եկեղեցի հայոց՝ վիմաշեն, գեղեցիկ ու նոր, և քրդական մի մզկիթ, և այն՝ անարգ ու հարդով ծածկած, պատերը՝ պարանից»³:

Հաշվի առնելով այն, որ քաղաքում կային հայկական 8 մեծ եկեղեցի և քրդական 1 փոքր մզկիթ, պարզ է դառնում, որ քաղաքը 1613 թ. մեծ մասամբ դեռևս հայաբնակ էր:

1880 թ. բերդաքաղաքում բնակվում էր 585 տուն հայ և 500 տուն մահմեդական⁴:

1892 թ. Բալուն ուներ 3500 մահմեդական և 1700 հայ⁵, 1897 թ.՝ 2500 հայ և 7500 մահմեդական բնակիչ⁶:

Առաջին աշխարհամարտի նախօրեին հիշվում է 780 տուն հայ և 450 տուն մահմեդական բնակիչ⁷:

Ցուցանակում անտեսվել է Ուրարտուից մինչև արտուխյունների իշխանությունն ընկած ժամանակաշրջանը: Ստորև լրացնում ենք ցուցանակում միտումնավոր բացթողածը:

Ուրարտական պետության անկումից հետո տարածաշրջանում ստեղծվում է Արմինա (Հայք) հայկական թագավորությունը: Մ.թ.ա. 520 թ. Աքեմենյան Դարեհ Ա թագավորը կործանում է այն, և տարածաշրջանը մինչև մ.թ.ա. 330 թ. մտնում է Աքեմենյան պետության կազմի մեջ⁸: Մ.թ.ա 330-202 թթ. տարածքն անցնում է Երվանդունիների հայկական թագավորությանը⁹, որից հետո՝ մ.թ.ա 202-189 թթ.՝ Մելիկյան գերիշխանությանը¹⁰:

Մ.թ.ա. 189-մ.թ. 1 թթ. եղել է Արտաշեսյան հայկական թագավորության կազմում¹¹, որի անկումից հետո Մեծ Հայքում քաղաքական ազդեցության համար մրցակցում են Հռոմն ու պարթևները: Նրանցից ամեն մեկը փորձում էր իրեն ենթակա թագավոր կարգել Մեծ Հայքում¹²: Վերջապես մ.թ. 66 թ., երբ կազմվում է Արշակունյաց հայկական անկախ թագավորությունը, Բալուն մտնում է նրա կազմում¹³:

Բալահովիտը (Բալուն) Հայաստանի հարավում գտնվող ինքնավար իշխանություններից մեկն էր, որը մինչև 428 թ. հայկական թագավորության անկումը ենթարկվում էր Արշակունիների: Բայց Ար-

3 Միմեոն Լեհացի, Ուղեգրություն, Երևան, 1997, էջ 117:

4 Նաքսանեան Պ., Արտուր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղ ջուրի եւ Երզնկայու, Կ. Պոլիս, 1883, էջ 30, 32:

5 Փափագեան Տ., Պատմություն Բալահովիտի, Նիւ Եորք, 1963, էջ 14-15:

6 Տերոյանց Մ., նշվ. հոդվ., էջ 38:

7 Հայաջյան Գ., Հայ ազգագրություն և բանահյուսություն, № 5, Երևան, 1973, էջ 77:

8 ՀԺՊ, հ. 1, Երևան, 1971, էջ 435, 438-439, 444, 446, 504:

9 Նշվ. աշխ., էջ 501, 504, 508, 521:

10 Նշվ. աշխ., էջ 516, 521, 526:

11 Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ, համապատասխան հատորով և էջերով), հ. 2, Երևան, 1976, էջ 140:

12 ՀԺՊ, հ. 1, էջ 703-743: Տես նաև ՀՍՀ, հ. 2, էջ 107:

13 ՀՍՀ, հ. 2, էջ 107-108:

շակունիների վերացումից հետո այդ իշխանություններն ինքնուրույն են դառնում: Նրանք ունենին սեփական զինված ուժեր՝ բաղկացած երկրի բնիկներից՝ հայերից: Երբ 485 թ. Ջենոն կայսրի դեմ ապստամբություն է բարձրանում, սրանց հիմնական մասն անցնում է ապստամբների կողմը՝ բացի Բալահովտի իշխանությունից: Հետագայում, երբ Ջենոնը կարողանում է ճնշել ապստամբներին, պատժում է բոլոր ապստամբ իշխաններին, իսկ Բալահովտի իշխանության իրավունքները պահում: Նման իրավիճակը հարատևում է մինչև 529 թ., երբ Հուստինիանոս Ա կայսրը վերջնական հարված է հասցնում հայերի ինքնուրույն իշխանության վերջին նշույլներին¹⁴:

Ը-Թ դարերում ողջ Հայաստանի հետ մեկտեղ Բալահովտը ենթարկվում է Արաբական խալիֆայությանը: Լիմեյով սահմանային գոտի՝ Շինշաթի շրջանը, որտեղ գտնվում էր Բալու քաղաքը, ինքնուրույն միավոր էր Աբասյանների օրոք և ուներ առանձին զինվորական կառավարիչ¹⁵:

885 թ. դրությամբ Տարոնի Բագրատունյաց իշխանության կազմում էր և ենթակա էր Բագրատունիների հայկական թագավորությանը¹⁶: Ավելի ուշ՝ 970-ական թվականներին, ենթարկվում է Բյուզանդական կայսրությանը¹⁷:

Տարոնի Բագրատունյաց իշխանության անկումից հետո նույն տարածքների վրա ստեղծվում է Թռռնիկյանների իշխանությունը¹⁸, որը, չենթարկվելով Բյուզանդական կայսրությանը, մնում է անկախ իշխանություն:

Սելջուկյան արշավանքների ժամանակ Թռռնիկյան իշխանները հաջող պայքար են մղում սելջուկների դեմ և չեն ենթարկվում նրանց: Ըստ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու վկայության՝ 1056 թ. Տավրոսյան լեռների ստորոտում տեղի ունեցած ճակատամարտում Թռռնիկյանների բանակը հաղթում է սելջուկներին: Նրանց էին պատկանում Սասունը, Ճապաղզուրն ու Աշմուշատը: Թռռնիկյանների հզոր ժամանակաշրջանն ավարտվում է 1184 թվականից հետո, և իշխանությունը սեղմվում է Սասունի լեռնային շրջաններում¹⁹:

Ը

Բալու բերդաքաղաքի եկեղեցու մուտքի մոտ 2006 թ. զետեղված էր հետևյալ ցուցանակը (ցուցա-

նակ Ը): Նույն ցուցանակը 2008 թ. տեղահանվել էր, սակայն գտնվում էր եկեղեցու մոտ՝ գետնին:

Բնագիր. բուրբերեն.

Kilise

(Bizans İmparatorluğu dönemi)

(475-1453)

Kesin tarihi bilinmemekle beraber bir Bizans eseridir. Kilisenin yalnız naos kısmı ayakta. Diğer kısımları yıkılmıştır. Kare planlı mekânın üzeri kubbe ile örtülüdür. Kubbe, bu gün yıkıktır. Sadece kubbe kasnağı mevcuttur. Kubbe, kasnağında yuvarlak kemerli pencereler yer alır. Kubbeye geçiş pantatiflerle sağlanır. Kubbeyi taşıyan dört kemer, payelerle oturtulmuştur. Derin, dışarı taşkın apsis üzeri yarım, kubbe önü ise tonozla örtülüdür.

Duvar freksleri apsis, kemeri yazı firizlidir. Tonoza yakın kısımda iki kanatlı melek, kemerin alt köşesinde sağda Hz. Meryem, solda Hz. Cebrail motifi vardır. Apsisin yarım kubbesinde Hz. İsa tasviri tamamen harap olmuştur. Apsis önü tonoz ortasında ise, güneş tasviri yer almaktadır. Kubbe kasnağında iki pencere, aralarında ise, aziz tasvirleri pantatiflerde ise 4 incilin yazar figürü görülür.

T.C

Palu kaymakamlığı

19 Mayıs 2004

Բնագիր. անգլերեն.

Church

(Byzantium period)

(475-1453)

Though when it was built is unknown, it is abyzantine master. Only the naos part of the church has come to our time. Other parts had collapsed. The square shaped place is covered with a dome This dome is collapsed now. There is only a dome hoop at present. There are windows with circle arches on the dome hoop. Passing through the dome is by means of pendentive. The four arches carrying the dome are put in ranks. The arch which is deep and extending out wards is half and front part of the dome is covered with vault. The wall presgoes: The abscisca and arch are writing frieze. Are an angel with two wings near the vault, vigin Mary at the bottom, on the right corner and on the left a motif of archangel Gabriel. The motif of Christ is completely ruind. In the middle part of the vault which is in front of the abscisca, there is a description of the sun. There are two windows on the dome hoop; between them are the descriptions of the saints and on the pendentives we see the figures of writers of the four ribles.

14 ՀԺՊ, հ. 2, Երևան, 1984, էջ 219-221:


15 Նշվ. աշխ., էջ 362-365:

16 **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Երևան, 1983, էջ 116, 121-122:

17 Նշվ. աշխ., էջ 181:

18 **Պետրոսյան Վ.**, Սասունի Թռռնիկյան իշխանությունը. Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, Երևան, 1955, № 2, էջ 85:

19 ՀԺՊ, հ. 1, էջ 435, 438-439, 444, 446, 504:



Ցուցանակ Ը

Թարգմ. Եկեղեցի

Բյուզանդական կայսրության շրջան
(475-1453)

Կառուցման ճշգրիտ թվականը հայտնի չէ, սակայն բյուզանդական կոթող է: Կանգուն է միայն եկեղեցու նավը, մնացածը քանդվել է: Ուղղանկյուն հատակագծով այս բաժինը ծածկված է եղել գմբեթով, սակայն այժմ գմբեթը քանդված է: Կանգուն է միայն գմբեթի թմբուկը, որի վրա գտնվում են կամարներով պատուհաններ: Դեպի գմբեթ անցումը կատարվել է առագաստների միջոցով: Գմբեթակիր չորս կամարները ծածկվել են աստիճանաձև քիվերով: Արտաքուստ շեշտված խորանի խորքի մասը ծածկված է գմբեթարդով, իսկ առջևի մասը՝ թաղով: Խորանի կամարի վրա կա ներկագիր արձանագրություն: Խորանը զարդարված է որմնանկարներով, թաղի մոտ կան երկու թևավոր հրեշտակներ, կամարի աջ կողմում՝ Սբ. Մարիամ Աստվածածնի, ձախ կողմում՝ Գաբրիել հրեշտակապետի պատկերները, իսկ թաղի կենտրոնում արև է նկարված: Գմբեթարդում նկարված Հիսուսի պատկերն ամբողջովին քայքայվել է: Թմբուկի պատուհանների միջև ևս կան որմնանկարներ, որտեղ պատկերված են առաքյալները, իսկ առագաստների վրա՝ 4 ավետարանիչները:

Շանոթ. ճիշտ է, եկեղեցու կառուցման թվականը հայտնի չէ, սակայն բյուզանդական կոթող չէ, ինչպես նշվել է ցուցանակում: Եկեղեցու հայկականու-

թյունը փաստող արխիվային նյութերի պակաս չկա: Սակայն հիմնական նյութական փաստը եկեղեցու խորանի կամարի վրա գտնվող հայերեն ներկագիր արձանագրությունն է (տե՛ս լուսանկար 1-2), որը տեսել է ցուցանակի հեղինակը և նշել ցուցանակում, սակայն միտումնավոր կերպով անտեսել է նրա՝ հայերեն լինելը:

Ըստ արխիվային նյութերի՝ եկեղեցին կոչվել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ: Գրչօջախ է հիշվում ԺԷ դարում: 1628 թ. գրիչ Մարտիրոս սարկավազը «...ի քաղաքն Բալու, ի դուռն Ս. Գրիգորին» ստեղծում է Շարակնոց²⁰:

1647 թ. Թաղևոս գրիչն ընդօրինակում է Ճառընտիր «...ի գիղաքաղաքս Բալու, ընդ հովանեաւ [Ս.] Լուսաւորչի...»²¹:

1652 թ. Թուխման գրիչը ստեղծում է Ժողովածու «...ի գիղաքաղաքս Բալու, ընդ հովանեաւ Ս. Գրիգորի Լուսաւորչին...»²²:

1653 թ. նույն Մարտիրոս երեց գրիչը ստեղծում է Տոնացույց «...ի Բալու քաղաքս, ի դուռն Ս. Գրիգորայ...»²³:

Որպես գործող հայոց եկեղեցի՝ հիշվում է ավելի ուշ՝ 1788 թ.²⁴: Սակայն, ամենայն հավանականու-

20 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, կազմ.՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1978, էջ 303:

21 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմ.՝ Հակոբյան Վ., Երևան, 1984, էջ 276:

22 Նշվ. աշխ., էջ 503:

23 Նշվ. աշխ., էջ 580:

24 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, հատոր Բ, Երևան, 2003, էջ 349:



Լուսանկարներ. 1) հեղ.՝ Ժամ-Միշել Թիերրի, 1970 թ., 2) հեղ.՝ Րաֆֆի Քոթրոշյան, 2006 թ.

թյամբ, եկեղեցու ներկա շինությունը կառուցվել է ԺԹ դարում հին եկեղեցու տեղում: 1880-ական թվականների սկզբին ականատեսը նշում է. «Ս. Լուսատրչայ եկեղեցին նորաշէն եւ խաչածեւ գմբեթաւոր է...»²⁵: Հայտնի է, որ 1890-ական թվականների կեսերին ժողովրդի սակավության պատ-

ճառով քաղաքում ժամերգություն էր կատարվում միայն Սբ. Գրիգոր Լուսավորիչ և Սբ. Աստվածածին եկեղեցիներում: Այդ թվականներին Սբ. Լուսավորիչը համարվում էր քաղաքի մայր եկեղեցին²⁶: Գտնվում էր քաղաքի կենտրոնում՝ շուկայի մոտ.

²⁵ Նաբանեան Պ., նշվ. աշխ., էջ 33:

²⁶ Տերյեանց Մ., Բալու, «Արաքս», 1897 (1894-95), եօթերորդ սարի, էջ 42:

«Քաղաքը երբ հեռուէն կը տեսնուէր ճամբորդներու, առաջին անգամ անոնց կ'երեւնար Ս. Լուսաորիչ եկեղեցոյ բարձր և սիրուն կաթողիկէն իր վրայ ծածկուած կարմիր կղմինտրներովը»²⁷:

Ի դարի սկզբին՝ 1910-ական թվականներին, ականատեսը նշում է. «Շատ մեծ չէր այս եկեղեցին, այլ չափաւոր: Խաչածէւ էր ան և գրեթէ աւելի քանակուսի մօտ ձեւ մը ունէր: Հարաւային կողմն ունէր երեք հատ բաւական մեծկակ լուսամուտներ: Առանց սիւնի էր այս հոյակապ եկեղեցին, որ կը փայլէր իբր գոհար մը իր հիանալի գեղեցկութեամբը: Փառաւոր, շքեղ, սիրուն տեսք մը ունէր ան, որքան նայելու ըլլայիր անոր համաչափ և կոկիկ կաթողիկէին, քեզ առիւթնող խաչկալին, ճաճանչաւոր սեղաններուն, մանաւանդ աւագ խորանին ոսկեգօծուած նուրբ, բայց խորհրդաւոր շինուածքին, գամուած կը մնայիր քեզ սքանչազնող անոնց զմայելի գեղեցկութեամբ»²⁸:



Վանի բերդի մուտքին 2006 թ. գետեղված էր հետևյալ ցուցանակը (ցուցանակ Թ).

Բնագիր. քուրքերեն.

Van Kalesi

Kale M.Ö. 825 yılında Urartu Kralı Sardur 1 tarafından inşa edilmiştir. Urartular M.Ö. 900. 600. yılları arasında bölgede üstün bir medeniyet seviyesine ulaşmışlardır. O zamanki adı Tuşba olan Van Kalesi 100 yıl kadar Urartuların başkenti olmuştur. Kalede 12 mezar odası bir açık hava mabedi ve çivi yazılı kitabeler vardır. Urartulardan sonra kale Selçuklu'lar ve Osmanlı'lar tarafından kullanılmıştır. Bu dönemlerden kalede ve eskişehirde bir çok camii mevcuttur.

Բնագիր. անգլերեն.

Fortress

The fortress was built in 825 B.C. by the Urartian king Sardur 1. Urartu had ...theadan impressive level of civilization in the region between 900-600 B.C. The fortress was called Tuşba and it was the capital city for about hundred years there are 12 cravt chanbers an openair teple and in scriptions in cuneiform script within the fortress was used also by Selçuk and Ottoman from their time date several mosgues are surviving in the fortress and in the old town.

Թարգմ. Վանի բերդ

Կառուցվել է մ.թ.ա 850 թ. Ուրարտուի թագավոր Սարգուրի Ա-ի կողմից: Ուրարտացիները մ.թ.ա. 900-600 թթ. տարածաշրջանում հասել էին քաղա-



Ցուցանակ Թ

քակրթական բարձր մակարդակի: Վանի բերդն այդ ժամանակ կոչվում էր Տուշպա և 100 տարի ուրարտացիների մայրաքաղաքն էր: Բերդում գտնվում են ժայռափոր 12 դամբարաններ, բացօթյա 1 մեհյան և սեպագիր արձանագրություններ: Ուրարտացիներից հետո բերդը գործածվել է սելջուկների և օսմանցիների կողմից: Բերդում և հին քաղաքում այս ժամանակաշրջանին պատկանող շատ մզկիթներ կան:

Շանթ. ցուցանակում նշվել է, որ ուրարտական պետությունից հետո բերդը գործածվել է սելջուկների և օսմանցիները կողմից: Այստեղ չի ներկայացվել ուրարտական պետությունից մինչև սելջուկների ժամանակաշրջանը: Ստորև լրացնում ենք ցուցանակում միտումնավոր բացթողածը:

Ուրարտական պետության անկումից հետո՝ մինչև մ.թ.ա. 520 թ., բերդը գործածվում է Արմինա (Հայք) հայկական թագավորության, մ.թ.ա. 520-330 թթ.՝ Արեմենյան պետության, մ.թ.ա 330-202 թթ.՝ Երվանդունիների հայկական թագավորության, մ.թ.ա 202-189 թթ.՝ Սելևկյան գերիշխանության²⁹, մ.թ.ա. 189-մ.թ. 1 թթ.՝ Արտաշեսյան, մ.թ. 66-428 թթ.՝ Արշակունյաց հայկական թագավորության³⁰, Ը դարում՝ Արաբական խալիֆայության կողմից³¹: Մինչև 774-775 թթ. Հայաստանում արաբների դեմ ծավալված ապստամբությունը Վանը Ռշտունյաց, իսկ 775 թ. հետո՝ Արծրունիների իշխանական տոհմի կենտրոնն էր:

908-1016 թթ. Վանը դառնում է Վասպուրականի հայկական թագավորության մայրաքաղաքը³²: 1016 թ. Սենեքերիմ թագավորը բերդը հանձնում է բյուզանդացիներին. «ՆԿԵ (1016). Սենեքերիմ թագաւորն Վասպուրականի ետ զՎան՝ ի Վասիլ թագաւորն Յունաց, և էառ զՄուվազ փոխան նորա. և

29 ՀԺՊ, հ. 1, էջ 435, 438-439, 444, 446, 501, 504, 508, 516, 521, 526:

30 ՀՄՀ, հ. 2, էջ 107-108, 140:

31 ՀԺՊ, հ. 2, էջ 362-365:

32 ՀՄՀ, հ. 2, էջ 76:

27 Մարգիսեան Յ. (Ալեքս), Բալու. իր սովորյթները, կրթ. ու իմաց. վիճակը եւ բարբառը, Գահիրէ, 1932, էջ 229:

28 Նույն տեղում:

ինքն գնացեալ անդ հինգ որդուքն»³³, որից հետո անցնում է սելջուկներին:

Ինչ վերաբերում է ցուցանակում նշված բազմաթիվ մզկիթներին, որոնք գտնվում են բերդում և հին քաղաքում, պետք է նշել, որ եղել են և կան մաս շատ եկեղեցիներ: 1891 թ. բերդում եղել են մեկական մզկիթ և եկեղեցի, իսկ հին քաղաքի պարիսպների մեջ՝ 7 եկեղեցի և 6 մզկիթ³⁴:

Ժ

Անիի Աբուղամրենց եկեղեցու մոտ 1990-ական թվականների վերջերին զետեղված էր հետևյալ ցուցանակը (լուս.՝ Չավեն Մարգսյանի, ցուցանակ Ժ):

Բնագիր. թուրքերեն.

Polatoğlu kilisesi (Abughamrents). Horasandan gelen Pahlavli byelerbeyi Abulamir tarafından yapılmıştır.

Բնագիր. անգլերեն.

The church Polatoğlu of Abughamrents. It was built in 994 A.D. by Pavlavli king Abulamir who was come from Horasan.

Թարգմ. Փոլաթօղլու եկեղեցի (Աբուղամրենց)

Կառուցվել է 994 թ. Խորասանից եկած Պալավլու մինի իշխանաց իշխան Աբուլ-Ամիրի կողմից:

Ծանոթ. եկեղեցու կառուցման թվականը և կառուցողի անունը սխալ են նշված:

Եկեղեցու մուտքի բարավորին 994 թ. փորագրված նվիրատվական արձանագրության առկայությունը հուշում է, որ եկեղեցու կառուցումն ավարտված է եղել մինչև այդ թվականը³⁵: Ամենայն հավանականությամբ, կառուցվել է 980 թ.³⁶ հայոց իշխան Աբուղամրի կողմից: Ավելի ուշ՝ 1040 թ., եկեղեցու հյուսիսային կողմում կառուցվում է Աբուղամրենց տոհմական դամբարանը, որի շինարարական արձանագրությունն է. «Ի թվին ՆՁԹ (1040), ես Ապղարիայ հայոց մարզպան որդի Գրիգորի և թոռն Ապուղամրի հայոց իշխանաց, թեպետ և անտես էի ի հարե իմնե, յազագս կրտսերութեան այլ հարկեցայ ի ծնադական սիրոյն և շինեցի զայս հանգրստարան հար իմոյ Գրիգորի և եղբարն իմոյ Համգէի և Հոյմատեղայի և շինեցի սենեակ Բ (2), սուրբ Ստեփաննոսի և սուրբ Գրիգորի...»³⁷:


33 Գիան հայոց պատմութեան, գիրք Ժ, կազմ.՝ Աղանեանց Գ., Թիֆլիս, 1912, էջ 123:

34 V. Cuinet, La Turquie d'Asie, Géographie administrative, Paris, 1891, t. I, p. 693.

35 Անի-1050, հեղ.-կազմ.՝ Կարապետյան Ս., Երևան, 2011, էջ 77:

36 Բաանաջեան Կ. Յ., Անիի անցեալն ու ներկան, «Բազմավեպ», սեպտեմբեր, 1923, էջ 264:

37 Չարլանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1853, էջ 13:



Ցուցանակ Ժ

Ինչ վերաբերում է Աբուղամրի տոհմական ծագումնաբանությանը, այստեղ անհրաժեշտ ենք համարում մանրամասն ներկայացնել՝ նկատի ունենալով, որ ցուցանակը նպատակ է հետապնդում մոլորեցնել ընթերցողին:

Միջնադարյան Հայաստանի Պալավլու մինների հայ իշխանական տոհմը, ըստ հին տեղեկությունների, սերել է Պարթևաց Արշակունիների տոհմաճյուղերից՝ Սուրենյան և Կարենյան Պալավլիկներից: Պարթև Արշակունիների տապալումից և Մասանյան մոր արքայատան հաստատումից հետո Կարենյան Պալավլիկները փորձում են Պարսկաստանից անցնել Հայաստան, սակայն կոտորվում են գաղթի ճանապարհին: Փրկվածներից Պերգամատը փախչում է Միջին Ասիա: Նրա որդին՝ Կամսարը, Գ դարի վերջերին գալիս է Հայաստան, Տրդատ Բ արքայից Երասխաձորում ու Շիրակում կալվածքներ ստանում՝ դառնալով Կամսարականների հայ տոհմաճյուղի հիմնադիրը:

Կամսարական Պալավլու մինները Թ դարի առաջին կեսերից հետո այլևս չեն հիշվում: Այնուհետև նրանց շառավիղները հիշատակվում են Ժ դարից: Նոր Պալավլու մինների գլխավոր ճյուղերից մեկի նախնին է համարվում Արտակ իշխանը, որի որդին էր Աբուղամրը³⁸:

ԺԱ

Կեչրոբ բերդի մուտքի մոտ 2008 թ. զետեղված էր հետևյալ ցուցանակը (լուս.՝ Մամվել Կարապետյանի, ցուցանակ ԺԱ):

Բնագիր. թուրքերեն.

Keçivan Kalesi

M.Ö.650-M.S.16 yılları arasında, Kafkaslardan gelerek Aras boylarına yerleşen Saka Türkleri'nin hükümdarı Alp-Er Tunga'nın yaylaklarından olduğu rivayet edilen bu kalenin adı, çeşitli cenk hikayelerinde geçmektedir.

38 ՀՄՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 98-99:



Ցուցանակ ԺԱ

Arsaklılar döneminde, Artageyra adıyla da anılan Keçivan Kalesi, M.S.5 yılında Romalılara bağlanmıştır.

M.S.618 yıllarında, Kars bölgesinde adı bilinen bu tek şehir, Oğuzlar'dan Kamsarakan beyleri'nin malikhanesi olmuştur.

Abbasi halifesi El Mustansır Billah hükmünde iken, Moğol Hulağü Han'ın Harapetli-İbuşehir, Karakoyunlu Karayusuf tarafından Mamur edilmiş, Timur tarafından tekrar yapılmıştır.

1579'da Osmanlılar'ın eline geçerek onartılan Keçivan Kalesi 1828 Türk-Rus savaşlarında kuşatılarak toprakları yıkılmıştır.

Tek kapılı şehir ile anılan Keçivan Adı 1960 sonunda Tunçkaya olarak değiştirildi.

Թարգմ. Կեչիվանի բերդ

Ավում է, որ այս բերդը մ.թ.ա. 650-մ.թ. 16 թթ. Կովկասից եկած և Արաքսի հովիտներում հաստատված Սակա թուրքերի (Իսկիթ) ղեկավար Ալ-փեր Թունգալի արտավայրերից է եղել: Բերդը հիշվում է հերոսական տարբեր հեքիաթներում:

Արաքրըների ժամանակաշրջանում կոչվել է նաև Արթագեյրա անվամբ: Ե դարում անցել է հռոմեացիներին:

Մ. թ. 618 թ. անունը հայտնի միակ քաղաքն էր Կարսի շրջանում և պատկանում էր օղուզներից սերված Կամսարական իշխաններին:

Արքայի Էլ-Մուսթանսըր Բիլլահ խալիֆայի օրոք ավերվել է մոնղոլ Հուլաղու խանի կողմից: Հետագայում կարակոյունլու Քարայուսուֆի կողմից բարեկարգվել, իսկ Թիմուրի կողմից՝ վերակառուցվել է:

1579 թ. բերդն անցել է օսմանցիների ձեռքը և նորոգվել: 1828 թ. թուրք-ռուսական պատերազմի ժամանակ պաշարվել է ռուսների կողմից և թնդանոթներով ավերվել:

Որպես մեկ դարպաս ունեցող քաղաք հիշվող Կեչիվանի անունը 1960 թ. փոխվել է և անվանվել է Թունչքայա:

Ծանոթ. ցուցանակի առաջին բաժինն ամբողջությամբ անհեթեթություն է: Միջին Ասիայի տափաստաններում բնակվող սակերը (Իսկիթները) երբեք չեն քափանցել Հայկական լեռնաշխարհ: Սա են փաստում նաև թուրքերենի պետական տեսչության բառարանի տվյալները. «Իսկիթ. մեր թվարկությունից առաջ Միջին Ասիայից դեպի հարավային Ռուսիա գաղթելով այնտեղ կայսրություն հիմնող մի ցեղ»³⁹:

Ցուցանակում, որպես բերդի այլ անուն, նշված է Արթագեյրա (օտար պատմիչների մոտ՝ Artagera, Artogerassa, հայ պատմիչների մոտ՝ Արտագերս, Արտագերից), որը չի համապատասխանում իրականությանը: Արտագերից բերդն այս բերդին շատ մոտ է գտնվում⁴⁰: Սա է փաստում նաև 1656 թ. Աշխարհացույցի հիշատակարանը. «...գաւառն Գաբեղենից և բերդն Կապուտ, որ կոչի Արտագերեից, անդ է և Կեչրար քաղաքն և Ճառաքարի Վիմափորի վանքն, ուր կա գերեզման Կեչառեցի Խաչատուր վարդապետին...», որտեղ Կեչրորը հիշվում է անշատ միավոր⁴¹:

Իսկ ինչ վերաբերում է բերդի՝ Կամսարականներին պատկանելու փաստին, այո, ճիշտ է, սակայն նրանք թուրքական օղուզ ցեղից սերված տոհմ չեն և գոյություն են ունեցել նախքան այդ ցեղի ծագումը⁴²: Սա են փաստում նաև թուրքերենի պետական տեսչության բառարանի տվյալները⁴³:

39 www.tdk.gov.tr İskit: Milattan önce Orta Asya'dan Güney Rusya'ya göç ederek burada imparatorluk kuran kavim.

40 **Ցուցանակներ** Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 669-674:

41 Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, կազմ. **Թօփման Յ.**, Վաղարշապատ, 1898, էջ 77:

42 Կամսարական հայ նախարարական տոհմը (Գ-Ը դարեր) սերվել է Պարթև Կարենյան իշխանական տոհմից, որին Գ դարի կեսին կոտորել են պարսից Սասանյանները: Փրկված Կարենյաններից Պերգոմոնտի որդին՝ Կամսարը, ապաստանում է Հայաստանում: Հայոց արքա Տրդատ Մեծը 321 թ. (**Քամսարեան Կ. Յ.**, նշվ. հոդվ., էջ 263), որպես ժառանգական կալվածք, նրանց է պարգևում արքունապատկան Շիրակ և Երասխածոր (հետագայում անվանվել է Արշարունիք) գավառները՝ նրանց դասելով հայ ավագ նախարարների կարգին: Շուտով խնամիանում են Մամիկոնյանների և Արշակունիների հետ և 5 դար շարունակ հավատարմաբար ծառայում հայ ազգին (ՀՄՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 215): Հայ նախարարական Կամսարական տոհմի մասին տե՛ս 5-րդ դարի պատմիչների երկերում (**Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն թուրք Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 100, 134, 148, 152, 154, 168, 176, 194, 198, 204, 244, 252, 260, 268, 294, 296, 300, 302, 304, 314, 316, 324, 326, 328, 336, 338, 340, 352, 358, 360, 362, 398, 452, 468, 496: Եղիշեի Վարդանանց պատմությունը, Ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1958, էջ 71, 91, 106, 171):

43 www.tdk.gov.tr «Օղուզ. թուրքական ցեղ, 11-րդ դարում ապրել են Խորեզմում, ավելի ուշ գաղթել են դեպի արևմուտք, համարվում են թուրքմենների, ազերիների, գազավուզների և Թուրքիայի թուրքերի նախահայրերը»: Oğuz: XI. yüzyılda Harezm bölgesinde toplu olarak yaşayan ve daha sonra batılıya doğru göç ederek bugünkü Türkmen, Azeri, Gagavuz ve Türkiye Türklerinin aslınlı oluşturan büyük bir Türk boyu.



Յուզանակ ԺԲ

ԺԲ

Բաբերդի բերդի պարսպի վրա 2007 թ. գետեղված էր հետևյալ ցուցանակը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, ցուցանակ ԺԲ):

Բնագիր. բուրբերեն.

Bayburt Kalesi

Kuruluşu 1. bine kadar uzanan kale bir çok uygarlıklara sahne olmuş, Türklerin eline geçmeden önce Roma, Ermeni, Bizans, Arap kommenos hakimiyetinde kalmıştır.

Bayburt Kalesi anadolu kaleleri içinde oldukça sağlam kalan Selçuklu mimarisinin güzel örneklerinden birisidir. İlk defa Roma İmparatoru Justinien tarafından tahkim edilmiş, daha sonra Saltuklular zamanında yeniden başlatılan inşaat Erzurum Meliki Mugisüddin Tuğrul Şah tarafından 1200-1230 yılları arasında mükemmel şekilde tamamlattırılmıştır. Asıl önemli olan bu kaleye “Çini Maçın” isminin verilmesine sebep olan çini süslemelerdir. Bunlar kalenin batı ve güney dış yüzeyinde tezyinat olarak mor firuze çiniler kullanılmıştır.

Gerek savaşlar, gerekse tahribatlar yüzünden bu yerlerin dışında çinilerden eser kalmamıştır.

Բնագիր. անգլերեն.

The Bayburt castle

Established in the year of 1000, the castle had been a stage for many civilizations. Befor being conguered by Turks, Byzantine and Arabic commenos.

The Bayburt castle, which is one of the most important reflections of the architecture of Seljuk, remained as a undestroyed structure among the castles of Anatolia. The castle had been fortified by Justinianus, the Roma emperor. After that, the construction which was started by Saltuks had been completed in an excellent way by Mugisuddin Tuğrul Şah, the ruler of Erzurum, during the period of 1200-1230. Because of the tile ornaments, the castle had been named as “Tile Machin” the west and east sides of the castle had been decorated with purple turquoise tiles. As a result of wars and destruction, there is impossible to find tiles except these sides of the castle.

Թարգմ. Բաբերդի բերդը

Հիմնվել է 1000 թ. և ակնատես է եղել շատ քաղաքակրթությունների: Մինչև բուրբերի կողմից նվաճվելը եղել է Հռոմի, հայերի, բյուզանդացիների և արաբների տիրապետության տակ: Անատոլիայի բերդերի մեջ լավ պահպանված սելջուկյան ճարտարապետական գեղեցիկ նմուշներից է: Առաջին անգամ ամրացվել է Հռոմի կայսր Հուստիանոսի կողմից: Ավելի ուշ՝ սալթուքլուների ժամանակ, շինարարական աշխատանքներ են սկսվել և հիասքանչ կերպով ավարտվել 1200-1230 թթ.՝ Էրզրումի Մելիք Մուգիսուդդին Թուրքուլ շահի օրոք:

Բերդը զարդարող հախճաասպերի պատճառով այն անվանվել է «Չինի Մաչին»: Մանուշակագույն և երկնագույն հախճաասպերն օգտագործվել են բերդի արտաքին պարիսպների արևմտյան և հյուսիսային մասերը զարդարելու համար: Պատերազմների և ավերումների պատճառով բերդի այլ մասերում հախճաասպեր չեն պահպանվել:

Ծանոթ. բերդի հիմնադրման 1000 թ. սխալ է: Առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին. «Արդ՝ իբրև լսէ Սմբատ որդի Բիրատայ զբօքն Սանատրկոյ եւ զգոյժ կոտորման որդոց նորա՝ առեալ զերկուս դստերս իւր, զՍմբատանոյշ եւ զՍմբատուհի՝ նստուցանէ ի Բայբերդի, արս քաջս թողլով ի վերայ ամրոցին...»: Նա նշում է, որ հիշատակած դեպքը պատահել է Դարեհ Վերջինի գահակալության (մ.թ.ա. 336-330 թթ.) 7-րդ տարում⁴⁴:

Ըստ Հ. Մանանդյանի՝ Խորենացու նշած դեպքը պետք է տեղի ունեցած լիներ մ. թ. առաջին դարում⁴⁵: Հետևաբար, ըստ Խորենացու, բերդը գոյություն է ունեցել Երվանդունիների (մ.թ.ա 330-202 թթ.), իսկ ըստ Հ. Մանանդյանի՝ Արշակունյաց հայկական թագավորության (մ. թ. 66-428 թթ.) ժամանակաշրջանում:

Ինչ վերաբերում է Մեծն Հուստինիանոսի կողմից վերանորոգման փաստին, ըստ Պրոկոպիոս պատմիչի, այն իրականացվել է Չ դարում⁴⁶: Այստեղ նշենք, որ ցուցանակի հեղինակը հակասում է ինքն իրեն՝ հիշելով Չ դարում Մեծն Հուստինիանոսի վերանորոգումը և միևնույն ժամանակ բերդի հիմնումը վերագրում 1000 թ.:

Ճիշտ է, ցուցանակի թուրքերեն բաժնում, ի թիվս տիրապետողների, առաջին անգամ նշվել է նաև հայերի անունը (որը քողարկվել և չի ներկայացվել ցուցանակի անգլերեն բաժնում): Ելնելով այն իրողությունից, որ բերդը հայերն իրենց բնօրրանում են հիմնել, ցուցանակում նախ և առաջ պետք է նշվեր բերդը ստեղծող ազգի անունը և հետո միայն դարերի ընթացքում այն տիրապետած ազգերինը:

44 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 161-163:

45 Յովհաննեսն Մ., նշվ. աշխ., էջ 22:

46 Յովհաննեսն Մ., նշվ. աշխ., էջ 23:

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ «ԱՆՍԵՂ» ՀՐԳԵՀՆԵՐԸ

Մամվել Կարապետյան

Արևմտյան Հայաստանի նոր շրջանի պատմությունն իրենից ներկայացնում է ավելի քան քառորդ դարի ընթացքում (1894-1923 թթ.) փուլ առ փուլ իրականացված ցեղասպանական գործողությունների շղթա, որոնց միջոցով ի վերջո թուրքական պետությունն իր համար լուծեց նվաճված, սակայն ազատության ձգտող բնիկ ազգերից մեկի չեզոքացման խնդիրը: Լուծում, շնորհիվ որի միայն թուրքական պետությունը կարողացավ սեփական երկրի սահմանների ներքո ամրագրել արդեն չորս դար նվաճված, սակայն անվերջ ազատության և անկախության ձգտող Հայաստանը:

Հայերի ցեղասպանության խնդիրներին հետամուտ մասնագետները նշում են, որ Առաջին աշխարհամարտը, ըստ էության, այն պատեհ առիթն էր, որ թուրքական իշխանություններն օգտագործեցին «Հայկական հարցը» լուծելու համար, որն իրենց ընկալմամբ ոչ այլ ինչ էր, եթե ոչ պարզապես պետության ազատագրումը նրա՝ ազգությամբ հայ քաղաքացիների ֆիզիկական ներկայությունից:

Անշուշտ հստակ է, որ 1915-1918 թթ., օգտվելով պատերազմական իրադրությունից, թուրքերը նախ Արևմտյան Հայաստանում, ապա նաև Արևելյան Հայաստանում և մինչև Բաքու ընկած ողջ տարածքում բնաջնջեցին ավելի քան երկու միլիոն հայերի, որով և, ըստ էության, ոչ միայն վիժեցրին հայկական պետականությունն Արևմտյան Հայաստանում վերականգնելու հայերի երազանքը, այլև նպաստեցին «Աղբբեջան» անվամբ հորինված թուրքական երկրորդ նորաթուխ պետության կազմում հայկական մարզերի բռնակցմանը:

Պարզ է նաև, որ նվաճված երկրամասերը պետության կազմում պահպանելու խնդրում ցեղասպանությունը՝ իբրև արդյունավետ միջոց, թուրքերն արդեն փորձարկել էին 1894-1896 և 1909 թթ., ընդ որում, դրանք իրականացրել էին աշխարհի երկրների համար միանգամայն խաղաղ ժամանակահատվածում, երբ չկար որևէ «համաշխարհային-նով» պայմանավորված ընդհանուր խառնակ վիճակ:

Մրանից հետևում է, որ 1915 թ. ցեղասպանությամբ հայրենիք կերտելու ծրագրում հաջողության հասնելու թուրքական իշխանությունների վստահությունը սնվում էր նախորդիվ գործադրված ցեղասպանական ծրագրերի հաջող և անպատիժ իրականացման փորձառությունից: Հարց է ծագում, իսկ անպատիժ մնացած ո՞ր գործողություններից հետո կան

դրանց շնորհիվ, այն էլ աշխարհի համար խաղաղ իրավիճակում, թուրքերը համարձակություն ունեցան սանձազերծել երեք տարի շարունակ հայերի գլխին պայթած Համիդյան սպանողը և Կիլիկիայի հայության ջարդերը:

Պատասխանը, անշուշտ, կարելի է գտնել դեպի այլոց հայրենիքներ թուրքական ցեղերի առօրյա ոճրագործություններով ուղեկցված ներթափանցման և հատկապես պետության բացառապես արյունոտ պատմության ցանկացած էջը թերթելիս, սակայն ստորև ցանկանում ենք ուշադրություն հրավիրել մասնավորապես Արևմտյան Հայաստանում հայտնի ցեղասպանություններին նախորդած պետական այն ծրագրերի քննությանը, որոնք դեռ մինչև ցեղասպանական ծրագրերի գործադրումը նույնպես միաված են եղել նվաճված բնիկ ժողովրդի տկարացմանը և ծնկի բերելուն:

Ինչպես ցույց են տալիս 1870-1880-ական թթ. Օսմանյան կայսրության սահմաններում տեղի ունեցած իրադարձությունները, պետությունը նվաճված ազգերին գրեթե ստրկական հնազանդության մեջ պահելու համար կարևորում էր վերջիններիս տնտեսական և մշակութային զարգացման խոչընդոտումը, որն առանձնապես հայաբնակ շրջաններում գործադրվում էր մերթ ընդ մերթ իրականացվող լայնածավալ հրդեհների միջոցով:

Վերջիններիս միջոցով պետությունը հաշված ժամերի ընթացքում փոշիացնում էր «անհավատարիմ» նկատված սեփական քաղաքացիների՝ տասնամյակների անդադրում աշխատանքի արգասիքը, զրոյացնում դժվարություններով, մինչև իսկ զոհողություններով ստեղծած ամեն բարիք և ստիպում, որ հայ հպատակները սևեռվեին սոսկ հանապազօրյա հաց հայթայթելու և մի կերպ միայն գոյությունը պահպանելու խնդրի վրա:

Ստորև ցանկանում ենք ներկայացնել թուրքական իշխանությունների իրագործած ծրագրային ոճրագործությունների առավել «մեղմ» դրսևորումների շարքին դասվող «պատահական» հայտարարված հրդեհների իրական նենգամիտ էությունը, որը, մեր կարծիքով, հակառակ խոսույն և մեծաթիվ տեղեկությունների առկայությանը, ցարդ պատշաճ ուշադրության, քննության, մեկնաբանության և որակման չի արժանացել: Մինչդեռ 1870-ականներին թուրքական իշխանությունները հենց հրդեհների միջոցով էին փորձում լուծել քաղաքական խնդիրները:

Այսպես, երբ «...թուրք թերթերը ահագանգ հնչեցուցին, ըսելով թե Վանի նահանգը ռուսական սահմանին մօտ ըլլալով, պատերազմի մը պարագային կրնար լուրջ վտանգ մը ըլլալ. ուստի կը հրաւիրէին կառավարութիւնը կանխարգելիչ միջոցներ ձեռք առնել Վանի նահանգին մասին, որ այն ատեն մօտ 250000 հայերով բնակուած էր: Այդ գրութեանց առաջին արդիւնքը այն կըլլայ, որ Վանի շուկան կը հրդեհուի, ահագին նիւթական վնաս պատճառելով հայերուն, 1876 թ.-ի դեկտեմբերին»¹:

Ռուս-թուրքական պատերազմի նախօրէին նշյալ «կանխարգելիչ» միջոցառման մասին ավելի մանրամասն նշվել է. «Դեկտ. 1-ի գիշերը, քաղաքացի հայերն յանկարծ կը նշմարեն հրդեհի բոցեր շուկային մէջէն և ընդոստ կը վազեն մարելու կրակը: Սակայն շրջակայ գիւղերէն և Շամիրամի թաղէն համախմբուած թուրք և մասամբ քիւրտ խումանը և անոնց հետ խառն ծպտուած թուրք զինուորներ՝ սակրերով, տապարներով ու դանակներով՝ կարգիլէն: Սինչ զանազան կէտերէ կրակը կը տարածուէր, խումանը տապարներով կը խորտակէր խանութներու դռները, կը կողոպտէր գտածը և պատրաստ գրաստներով աւարը կը փոխադրէր նախապէս որոշուած թաքստոցները՝ մօտակայ թաղերու մէջ: Ձեւի համար թոյլ կը տրուի որ Երեմիա Եպիսկոպոս և պատահաբար քաղաքը գտնուող Պօղոս Վ. Մելիքեան, խումբ մը ոստիկաններու և հայերու ընկերակցութեամբ, պարտին գիշերով այրեացաւեր շուկայի փողոցները, մինչ թալանն ու հրձիգութիւնները կը շարունակուէին անարգել և աւելի մեծ աւերներ պիտի պատճառէին՝ եթէ Թիմուրզատէ Հասան պէյ, սուր ի ձեռին, չկասեցներ զանոնք, որովհետև շուկայի մէկ մասը իր գերդաստանի կալուածն էր, ուրիշ մասն մըն ալ զանազան մզկիթներու վագրք. հագիւ երրորդ մաս մըն հայ անհատներու կամ եկեղեցիներու կը պատկանէր: Շատ քիչ բան կը յաջողուի ազատել նոյն գիշերը, իսկ յաջորդ օրը իսկոյն եւեթ խառն յանձնախումբեր կը կազմուին՝ խուզարկութիւններու միջոցաւ կողոպտուները երեսն բերելու. այս ալ թուրքական հանրաժանօք ձեռնաձուլութեան մէկ խաղն էր...»²:

Հրդեհի պատճառաւ վնասների չափի մասին նշվել է. «Եօթանասնական թուականներին Վանի մէջ մեծ ոգևորութիւն էր տիրում, առևտուրը կենդանի վիճակի մէջ էր, շուկան օրեցօր լցում էր ապրանքներով, սակայն 1876 թուի դեկտեմբերի 1-ին յանկարծ մի հրդեհ է ծագում շուկայի մէջ, և 1000-ի չափ խանութներ են այրում, որի հետևանքը լինում է ընդհանուր յուսահատութիւն. նշանաւոր վաճառատները սնանկանում են, հասարակ խանութ-

պանները լքում են և այդպէս կանգ է առնում Վանի առևտուրը...»³:

Չինվորական պատմաբան Ա. Կոլյուբակինի վկայությամբ՝ հրդեհի հետևանքով հայ առևտրականները կորցրել էին իրենց ունեցվածքի 4/5 մասը⁴:

Արդեն 1876 թ. դեկտեմբերի 20-ի հեռագիրը տեղեկացնում է, «...թե Վսեմ. Նագիֆ Էֆենդի և Խաչատուր Խան Էֆենտին քննիչ կարգուած են դեկտ. 1-ի սուկայի հրդեհին համար և թե քիչ օրէն Վան կը հասնին: Խան Էֆենտին դեռ չէ եկած, իսկ Նագիֆ Էֆենտին ալ թէև հոս հասած, բայց իւր պաշտօնին չէ ձեռնարկած: Կերևի թե այդ քննութիւնը յետաձգուած է առայժմ, Վանի «միւլթեսարթութիւնը» Կարինէն անջատուած և կուսակալութիւն դարձած լինելով և թե հետեւապէս այս մասին արժան եղածը Վանի նորընտիր կուսակալը պիտի տնօրինէ...»⁵:

Իշխանությունները ստեղծում են քննիչ հանձնաժողով մեկ սովորական առաքելությամբ՝ կոծկել խնդրի բուն էությունը: Սկզբում գործի քննությունը հանձնարարվում է Մարկոս Աղաբեկյանցին, սակայն շուտով նրան փոխարինում է Բարձր դասն գործակալ Սկրտիչ Աղաթոնյանը. «...Աղաթոնեան, որ 1876 դեկտ. 1-ի հրդեհի համար քննիչ եկած էր Բ. Դուռնի կողմէն, թուրք կառավարութիւնին հաճոյանալ ուզելով, մի այնպիսի տեղեկագիր շինեց, որով թուրք հասարակութիւնն և զօրքերն կարդարացուներ և մինչև իսկ կողոպտուի գործն ալ հայերի վրա կը ձգէր: Բննիչ մասնաժողովին թուրք անդամներն միայն ստորագրեցին այդ տեղեկագիր, իսկ հայ անդամներն չը ստորագրեցին: Աղաբեկեան, որչափ կրնար, դէմ կեցաւ այդ տեղեկագրին, յայտնելով թէ բոլորովին անիրաւ և կողմնակալութիւնով գրուած է: Բ Դուռն ընդունեց Աղաթոնեանի այդ ստայօղ տեղեկագիր, Աղաբեկեան պաշտօնէ ձգուեցաւ, Աղաթոնեան վարձատրուեցաւ նորա տեղ անցնելով»⁶:

Վանի հրդեհը փորձում են ներկայացնել նաև կասկածելի տարրերի խժոժությունների կամ էլ սուկ պատահարի արդյունք⁷:

Սակայն միտումնավորությունն ավելի քան ակնհայտ էր, ուստի պատահական չէ, որ Ա. Կոլյուբակինն ուղղակի նշել է. «Վանի շուկայի ավերումը թուրք զինվորների կողմից»⁸:

Քննելով հրդեհին առնչվող հանգամանքները՝ Ե. Տեր-Սկրտչյանը եզրակացրել է. «Վանի հայոց խանութներ հրդեհելը նախապէս ծրագրուած էր

1 Պանոսիկեան Ա., Տեր, կեցո, դու գիայս (Ապրումներ), «Վարագ», 1969, հունվար, № 63-64, էջ 51-52:

2 Երամեան Հ., Յուշարձան, Աղեքսանդրիա, հատոր Ա, 1929, էջ 93-94:

3 Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, «Մուրճ», 1904, № 8, էջ 21: Տե՛ս նաև Երիցեան Ա., Ֆելիէտօն (Բարեգործութիւնը հայոց մէջ), «Արձագանք», 1882, № 17, 13 յունիսի, էջ 264-265:

4 Коллюбакян А., Материалы для военного-статистического обозрения Азиатской Турции, том III, часть I, Тифлис, 1891, с. 325:

5 Փորտուգալյան Մ., Նամակ Թորքիայից, «Մշակ», 1877, № 23, էջ 3-4 (քաղված «Մանգումէի Էֆթեար» լրագրից):

6 «Մշակ», 1877, № 46, էջ 3:

7 Երամեան Հ., նշվ. աշխ., էջ 100:

8 Коллюбакян А., նույն տեղում (բնագրում՝ «...разгром турецкими солдатами базара в Ване...»):

հրդեհի ժամի ու ժամանակի հրամանը եկած էր վերեն...»⁹:

Խնդրո առթիվ բրիտանացի Ջ. Բրայսն էլ նշել է. «...1877 թ. Վանի շուկայի հրդեհումն ու կողոպուտը ոչ այնքան քրդերի, որքան թուրք զինվորների ձեռքի գործն էր, և սա հաստատվել է այն անհերքելի փաստերով, որոնք հասել են այս երկիր: Հարց է ծագում, թե ինչու հայերը չեն ըմբոստանում այսօրինակ բռնությունների դեմ, ինչպես մի ժամանակ իրենց նախահայրերն էին պայքարում սելևկյանների կամ պարթևների դեմ: Մասամբ, որովհետև նրանք զենք չունեն, մասամբ, որովհետև հայ բնակչությունն այնքան էլ խիտ չէ և ապրում է թաքարների, քրդերի և օսմանյան թուրքերի մեջ: Գլխավոր պատճառը, սակայն, այն է, որ դարավոր ստրկությունը կոտրել է ժողովրդի ոգին, նրանք առաջնորդ չունեն, համատեղ գործողություններ իրականացնելու միջոցներ չունեն, և ոչ էլ որևէ հեռանկար կա, թե եվրոպական տերությունները կհասկանան և կօժանդակեն իրենց...: Թերևս միևնույն պատճառներն էլ նրանց խանգարում են հասնել անկախության կամ ինքնավարության...»¹⁰:

Նույն՝ 1876 թ. կառավարությունը հրդեհում է նաև Սիվրի-Հիսար քաղաքի հայոց թաղը. «...քաղաքին մեջ եօթը հարիւր (700) հայու տուն հրոյ ճարակ եղած է: ...երբ քաղաքապետն կիմանայ որ հրկիզութիւնն հայոց թաղն է, թող տուէք, թող կեսվորներն այրին և նստելու տեղ չունենան, կրսէ, և այսպէս զուրկ կառավարչական օգնութենէն հազարատը հայք մոխրոյ վերայ կը նստեն...»¹¹:

Վանի շուկան հրդեհելուց մեկ տարի անց հրդեհվում է նաև Չմշկածագ քաղաքի շուկան, որի մասին 1886 թ. նշվել է. «Բաւական ճոխ շուկայ ունի որ

1877-ի միահաղոյն հրդեհէն դեռ նոր սկսած է վերականգնիլ: Բայց առեւտրական շարժումն նշանակալի բան մը չ'է»¹²: Նույնպես չեն պարզվում Չմշկածագում 1890-ականներին տեղի ունեցած հրդեհի հանգամանքները. «...1890ական թուականներու հրդեհէն ետքը, որ զիշերն է պատահեր եւ որուն պատճառ անյայտ մնաց»¹³:

1884 թ. հուլիսի 27-ին և 1887 թ. հուլիսի 26-ին իշխանություններն իրենց խնդիրները հրդեհով են կարգավորում նաև Ջեթրոնում՝ առաջին դեպքում հրդեհելով շուրջ 1000 տուն, իսկ երկրորդ դեպքում 2000 շենքերից ազատվում է միայն 100-ը¹⁴:

Ինչ վերաբերում է Արաբկիրի հրդեհմանը, ապա այստեղ գործն իշխանությունները վստահել էին կողոպուտիչներին և վաղօրոք «զինել» նրանց. «Դիրավառ նիւթեր ու գործիքներ յանձնած էին անոնց, որոցմով կողոպուտած ու դատարկած տունները կրակ կը ձգէին ու կը հրդեհէին: Արաբկիրի շենքերը առ հասարակ քարուկիր ըլլալուն համար շատ դժար կայրէին, ուստի մասնաւոր ջանքով կրակ ձգեցին տուններուն ներսի կողմը ու այրեցին բոլոր այն շենքերը, որ ընդհանուր հրդեհի մը այրելու կը յամառէին: ...Այսպէս մի քանի օրան մեջ Արաբկիրի 2000 հայոց տունները այրեցան ու մոխիր դարձան: Տխուր ատերակներու կոյտեր կը ներկայացնեն այսօր քաղաքին հայոց շէն ու գեղեցիկ թաղերը և անոնց մէջ Տերպէտերեանց, Քօլանճեանց, Եկանեանց և այլ և այլ, շքեղ ու բազմածախ ապարանքներն, ինչպէս նաև 1000-էն ատէլի ընդարձակ, բազմայարկ ու խիստ գեղեցկայարկ բնակարաններ: Հրդեհը լափեց տարաւ նոյնպէս մեծ ու փոքր շուկաներն ամբողջ, որոց կրակներն մեծ մասամբ հայոց և մասնաւորապէս Մայր-եկեղեցույ սեփականութիւնն էին: Այն տունները կանգուն մնացին, որոնք կառավարութեան դրան կամ թուրքաց թաղերու մօտ կը գտնուէին և կամ որոնց մէջ թուրքերը կը նստէին, իբրև վարձակալ ու ատոնց թիւն ալ 150-300 է: Սակայն աւարառութիւն ու հրդեհ միայն բաւական չէին Արաբկիրի հայութիւնը փչացնելու. սուկալի և երկարատև կոտորածով մը հարկ էր, որ անոր գէթ արական սեռը բնաջինջ ըլլար. ուստի աւարառաց բազմութիւնը կողոպուտելու և հրդեհելու զբաղած ատեն միանգամայն կը զարներ կը վիրատրեր ու կը սպանէր իրեն հանդիպած այր մարդը անխնայ: Ջարդը տեղի կունենար ոչ միայն տուններու և փողոցներու մէջ, այլ պարտէզներու, ճորերու և ուրիշ անմատչելի վայրերու մէջ, ուր փախած ապաւինած էր հայոց բազմութիւնը: Որովհետև մի քանի օրէն կարելի չեղաւ հայերը իրենց ապաստանած տուններէն ու թագստոցներէն բոլորովին հանել

9 Տեր-Մկրտիչեան Ե., Գանձեր Վասպուրականի, Կ. առաջին, Պոսթոն, 1966, էջ 518:

10 Transcaucasia and Ararat by James Bryce, London, 1896, pp. 344-345 (բնագրում) “The Ottoman Porte has not the power, even if it had the will, to interfere. ...the burning and plunder of the bazaar at Van in 1877 was the work, according to the uncontradicted narrative that reached this country, not so much of Kurds as of Turkish soldiers. Why, it may be asked, do the Armenians not rise in rebellion against these outrages, as their forefathers did against the Seleucids or the Parthians? Partly because they are unarmed, partly because the population is thin, with Tatars, Kurds, and Ottomans scattered among them, but mainly because ages of slavery have broken the spirit of the nation, because there is no one to lead them, no means of combined action, no such prospect of sympathy or support from European powers... The same causes, it will be argued, unfit them for independence or self-government. True enough; none of the subject races of Turkey is now fit for self-government. But the question is not so much whether they are fit as rather whether any sort of self-government, however bad, must not be better than the kind of tyranny from which they now suffer, and whose bitterness is in a measure intensified by comparison with the peace and security enjoyed by their countrymen under the rule of Russia. The alternative to some sort of independence for the Turkish Armenians is absorption by Russia...”):

11 «Մեղու Հայաստանի», 1876, № 39, 9 հոկտեմբերի, էջ 3: Նաև՝ Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց, Պէյրոս, 1965, էջ 115-116:

12 Նաթանեան Մ., Չմշկածագ, «Մասիս», 1886, № 3815, մարտ 29, էջ 819

13 Գասպարեան Հ., Չմշկածագ եւ իր գիւղերը, 1969, էջ 85:

14 Պողոսյան Հ., Ջեթրոնի պատմությունը, Երևան, 1969, էջ 302-303:

ու կոտորել, հարկ եղաւ կոտորածը շարունակել մինչև տասն օր: Յատուկ ջանք մը կար սպանել զանոնք, որոնք իրենց խելքով ու դրամով անուն ունէին քաղաքին մէջ: Շատ ընտանիքներուն մէջ մէկէ աւելի այդ մարդիկ կամ մի քանի եղբայրներ միասին զոհեցան մի քանի ազգատոհմերու այդ մարդ բնաւ չմնաց: Տասն օր տևող այս ահռելի կոտորածը բնաջինջ ըրաւ հայ ժողովրդեան գրեթէ արական սեռին մեծ մասը»¹⁵: «Տասն և հինգ օր յետոյ միայն կոտորածն ու հրդեհը դադարեցնելու շնորհն ըրաւ կայսերական բարեգութ զառաքարութիւնը, բայց, այնուհետև փողոցէ փողոց, տունէ տուն ողջ մնացած հայեր կը փնտռէին բանտարկելու համար: 15 տարեկանէ վեր և 60 տարեկանէ վար որու հանդիպելու լինէին կը բանտարկէին: Այս կերպով 4-500 հայեր լեցուցին Արաբկիրի բանտը...»¹⁶:

1896 թ. սեպտեմբերի 3-ին Ակն քաղաքում տեղի ունեցածի մասին նշվել է. «Յարձակումը սկսաւ Վեր-թաղ կոչւած տեղէն: Գժոխալուր գոռ ու գոչ մը ամեն կողմ կը թնդացներ, աղէկտուր ձայներու և սրախողխողներու հռնդիւններու արձագանքը ամենէն քարասիրտ սիրտերն իսկ կը յուզէր և արտասուել կուտար: Սակայն ասով չէր վերջացած տեսարանը, դիրավառ նիւթերու բորբոքիչ ազդեցութեան տակ՝ իրենց հարստութենէն ու պերճութենէն զրկւած դադարկ տուներ, բոցերու մէջ կը կեղդէին այս բոլոր ձայները. հետզհետէ բոցը կը հանդարտէր, ձայները

կը մարէին և մահաշուք լռութիւն մը կը տիրէր այդ գեղեցիկ թաղի ատերակներու վրայ. լռութիւն մը, որ կը խանգարէր երբեմն վայրագ և անգութ խուժանին գոռէն ու ուրախութեան պոռչրտութէն: Թաղեցան այդ ատերակներու տակ աճին դարձած հարիւրաւոր այրեր և կանայք, հարսներ և երիտասարդներ, որոնցմէ՝ եթէ երբէք կարենային ազատիլ հրդեհին բոցերէն, լախտի և տապարի հարածներու տակ դիտապաստ կիյնային: Վերջապէս մի քանի ժամուան մէջ Վերին-թաղ իր 800 տուներով և բոլոր բնակիչներով կորաւ փճացաւ»¹⁷:

Խարբերում տեղի ունեցածի մասին էլ նշվել է. «Խարբերդ քաղաքին այն գեղեցիկ թաղը, որ Տաշ-Գաբուն էլաձ ատենդ կերևի, բոլորովին կողոպտուել է ետքը, 8-10 տուն քարիւղով կրակ տւին, ամբողջ թաղը մոխիրի վերածեցին, հրդեհը 6 ժամ տևեց...»¹⁸:

Ամփոփելով հարկ է արձանագրել, որ, սկսած 1870-ական թվականներից, թուրքական պետութիւնը սկզբում ծպտյալ, ավելի ուշ արդեն բացահայտ իրականացված հրդեհների միջոցով հետամուտ է եղել իրականացնելու իր իշխանության ներքո գտնվող հայ ժողովրդին տնտեսապէս քայքայելու ծրագիրը, որն անընդմեջ տևել է շուրջ կես դար և դադարել հայ ժողովրդին սեփական հայրենիքում ցեղասպանություններով սպառնելուն զուգահեռ¹⁹:

¹⁵ Կոտորածներ Արաբկիր, «Գրօշակ», 1896, № 7, էջ 54-55:

¹⁶ Արաբկիրի անլուր կոտորածը, «Հնչակ», 1897, № 2, էջ 14:

¹⁷ Ակն քաղաքի կոտորածը, «Գրօշակ», 1896, № 26, էջ 195:

¹⁸ «Գրօշակ», 1896, № 1, էջ 6:

¹⁹ 1990-ական թթ. հրկիզմամբ ավելի քան 400 քրդաբնակ գյուղերի ոչնչացումը ցույց է տալիս, որ այլազգիների բնակավայրերը փորձված հնարքով ոչնչացնելը թուրքական բանակի բնութագրելի գործելաոճն է մաս մեր օրերում:

ՄԱՀԼԱՄԻ ՊԱՆԹԵՈՆՆԸ

Էմմա Արրահամյան

«Նահատակներ չը...»

Այդ մեծ մեռելները ամենէն քիչ իրենց եւ իրենց կուսակցութեանց կը պատկանին, ամբողջովին՝ իրենց ցեղին եւ պատմութեան:

Իրենց ընտրած ճանապարհի բերմամբ նրանք կաշխատեն ու կը գոհաբերեն այս կամ այն կուսակցութեան դրօշի տակ, նահատակելով՝ նրանք, կազգայնանան, կը դառնան սրբազան սեփականութիւնը ողջ ազգի: Չկան կուսակցական նահատակներ ու հերոսներ, կայ ու կը մնայ ազգային մարտիրոսագրութիւնը եւ հերոսականը»:

Գարեգին Նժդեհ

Հայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ առանձնանում են ԺԹ դարի 90-ական թվականներին կազմավորված զինակիր խմբերը, որոնց անդամները, տոգորված հայրենիքի ազատագրության գաղափարով, անձնվիրաբար ստանձնել էին դեպի Երկիր գեներ տեղափոխելու դժվարին և կարևորագույն գործը: Յավոք, այդ խմբերի անդամներից շատերի անուններն անգամ հայտնի չեն, իսկ անշիքմաքար աճյուններն անհիշատակ սփռված են սրբազան Հայրենիքում:

Այս առումով թերևս եզակի բացառություն է պատմական Ջարեհավան (հետագայի ավելի լայն ընդգրկումով՝ Մալմաստ) գավառի՝ մինչև 1946 թ. հայաբնակ Մահլամ գյուղի գերեզմանոցի արևելյան եզրին՝ հյուսիս-հարավ ուղղությամբ ձգվող մեկ շարքով, միմյանցից հավասարաչափ հեռավորության վրա գտնվող նույնատոմս միևնույն ամսաթիվը կրող ինը տապանաքարերից բաղկացած ազատամարտիկ-նահատակների պանթեոնը:

Նշյալ տապանաքարերի ներքո հանգչում են մոկսեցիներ Խաչո Մ. Հարությունյանն ու Հարություն Խաչոյանը, ոգմեցի անբաժան ընկերներ Նախո Ղազարյանն ու Հարություն Արրահամյան Փոխանյանը («Մանկութիւնից Նախոյի ընկերն էր, միասին մտել էին յեղափոխական կեանքի մէջ»¹), շատախցի Հարիկ Արգարյանը, Շատախի Կարփի գյուղից Գաբրիել (Ժածկանունը՝ Մնջո) Մուրադյանը, Խանասորի արշավանքին մասնակցած նորդուզցի Գալուստ Գուլյանը, խիզանցի Ստեփան Պետրոսյանը և Չմշկածագի Հազարի գյուղից Ավետիս Օհանեսյանը:

Արդ, ովքե՞ր են հիշյալ զինյալ-նահատակները, և ազատամարտի ո՞ր դրվագն է Մահլամի գերեզմանատունը դարձրել նրանց հավերժական հանգրստավայրը:

Ազատամարտիկ-նահատակները 1897 թ. Մալմաստում կազմակերպած խմբապետ Փոխիկի² զինակիր խմբի անդամներն էին, ովքեր 1898 թ. ամռանը հասնում են Վան, սակայն «...այնտեղ չկար այլևս Տերոյեանը, որ սպանուած էր Կոտուրաշի կռուին եւ զինուորական խմբի պահելը Վանի մէջ



Փոխիկի խումբը 1898 թ.

դարձած էր դժուար: Այնտեղ եւս այդ ատենները յուսահատութիւն եւ յուսալքում կը տիրէր: Փոխիկը կը ստիպուի թողնել Վանը եւ 10 հոգիով վերադառնալ դէպի Մալմաստ»³: Դժվարին և երկարատև ճանապարհից հոգնած՝ ազատամարտիկների խմբապետը հիվանդանում է և չկարողանալով ճանապարհը շարունակել՝ մնում է Ղալասար գյուղում, իսկ մյուսները հասնում են Մահլամ և «...մտնում են մի տեղացու տուն: Գիւղացիները, իմանալով այդ մասին և երկիւղ կրելով գիւղատէր և դատաւորի օգնական Հաջի-խանից, պահանջում են եկտոր հիւրերից անմիջապէս թողնել գիւղը: Վտանգաւոր և դժուար ճանապարհներով անցած խմբակը՝ քաղցած, յոգնած և տկար՝ խնդրում է գիւղացիներից մի-երկու օր ժամանակ տալ իրենց, միայն փոքր ինչ հանգստանալու, կազդուրելու համար, և հեռանում է գիւղից դէպի այգիները, պատսպարուելու մի հնձանում: Գիւղական մի քանի ցեղեր, սակայն, դրանով էլ չեն բաւականանում և

1 Մալան Ստեփանեանի յուշերը, գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, 1966:

2 Փոխիկ (Օհան Օհանյան, նույն ինքը՝ Վահրամ Հովհաննիսյան. 1873, Շատախի Մակ գյուղ - 1904): Մասնակցել է Դերիկի կռիվին (1896 թ. գարուն) և Խանասորի արշավանքին (25.07.1897):

3 Ռոբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ, Թեհրան, 1982, էջ 49:

դրանցից մեկի, այն է աղա-Չարոյի առաջնորդութեամբ դիմում են Խոյի և Սալմաստի դատարո Չարդամ-իւ-Միւլքին, խնդրելով ձերբակալել հայ «ղաչաղներին» և խստիւ պատժել նրանց: Չարդամ-իւ-Միւլքը գիտական մատնիչների և Հաջի-խանի առաջնորդութեամբ իսկոյն ուղարկում է հայերի վրայ մի վաշտ զօրք երկու թնդանօթներով և 300 հոգի էլ հարևան Սօմայի քիւրդ զինուորներից: Խիստ հրամաններ ստացած այս խուժանը շրջապատում է հայերի գտնուած այգին և անմիջապէս սկսում է հրացանաձգութիւն հրացաններից և թնդանօթներից: Դէպքը տեղի է ունենում հոկտեմբերի 13/25-ին, երեքշաբթի լուսաղէմին: Դժբախտ զինակիրները, միանգամայն չկամենալով որևէ համարձակ քայլով վնասել տեղական հայ ժողովրդի շահերին. այսինքն երկիւղ կրելով, որ մի գուցէ տուժի, եթէ իրենք դիմադրութիւն ցոյց տան կառավարութեան՝ դուրս են գալիս զօրքի առաջ և յայտարարում, որ իրենք երբեք պարսկական կառավարութեան դէմ ոչինչ չեն ունեցել, որ հետները ունեցած զէնքը միայն աւազակների դէմ ինքնապաշտպանութեան համար կարող է ծառայել, և որ զէնք կրելում նրանք յանցանք չէին կարող տեսնել, քանի որ Պարսկաստանում սովորաբար արգիլուած չէ այդ. բայց եթէ, այնուամենայնիւ, կառավարութեան կողմից կայ իրենց վերաբերմամբ որևէ կասկածներ՝ ապա նրանք կը յանձնեն իրենց մօտ եղած հրացանները և իրենք էլ անձնատուր կը լինեն: Ահա այն սուկալի րօպէն, երբ գուգաղիպում են արևելեան բարբարօսութիւնը մի կողմից և ժողովրդասէր զինակիրների անձնագոհութիւնը միւս կողմից... Թէև մինչ օրս Պարսկաստանում հայերի և առհասարակ քրիստօնեաների վերաբերմամբ յայտնի չեն սպանման կամ գլխատման պատժի դէպքեր, բայց այս անգամ, իբր պատասխան ինը հերօսների մեծահոգութեան՝ զօրքը նրանց սրի ճարակ է դարձնում, իսկ Հաջի խանը՝ ընկածների գլուխները անմիջապէս կտրել տալով՝ ուղարկում է Չարդամին...»⁴:

4 «Դրօշակ», 1898, № 11, էջ 96-97: Ի դեպ, ողբերգական այս դեպքի վերաբերյալ հավելյալ տեղեկութիւններ է հաղորդում նաև Ռուբեն Տեր-Մինասյանը, որն իր հուշերում գրում է. «Մահլամի գիւղացիք խորհուրդ կընեն եւ կորոշեն չընդունիլ Փոխիկին խումբը եւ կառաջարկեն անոնց չմտնել իրենց գիւղը: Բայց զինուորները յոգնած ու դադրած, ոտքերնին ուռած, չեն կրնար գիւղէն հեռանալ (եւ ո՞ր հեռանային), եւ կը տեղատուին գիւղէն դուրս, այգիներու մէջ, բացօթեայ, իսկ Փոխիկը, որ ծանր հիւանդ էր, կը տանին Գալասար՝ բժշկելու համար: Մահլամի գիւղացիներու «մեծամեծները» կու գան Դաշնակցութեան ներկայացուցչին՝ Սամսոնին մօտ, կը պատմեն անոր եղելութիւնը եւ կը խնդրեն հեռացնել գիւղէն այդ զինուորները, հակառակ պարագային, իրենք պիտի երթան եւ յայտնեն Չարդամին եւ կառավարութեան: Սամսոնը կը համոզուի, որ գոն մի երկու օր միջոց տան, բայց գիւղի ներկայացուցիչները, կարծելով, որ կուզէ ժամանակ վատակել՝ որպէսզի զինուորները կամաց կամաց ոտքի տեղ ընեն ու մտնեն գիւղը, ուղիղ կերթան Չարդամին ու կը խնդրեն, որ իրենց գիւղէն դուրս ընեն ֆէտայիները եւ կամ բանտարկեն: Մահլամ գիւղի այգիի մէջ տեղատուրուած 8 զինուորներէն միայն 3ը հրացա-

Սահմուկեցուցիչ լուրն անմիջապէս տարածվում է: Սալմաստի փոխանորդ Խաչիկ վարդապետ Դադյանը⁵ «պահանջում է Չարդամից նահատակւածների գլուխները, նա պատասխանում է, որ յանձնել է տաճիկ կառավարութեան, մինչդեռ դէմքերի լուսանկարները առնելով, նա թաղել է տալիս գլուխները Բէօհնա-Շահար գիւղի փողոցներից մեկում: Այդպիսով Խաչիկ վարդապետին յաջողում է ստանալ միայն սպանւածների դիակները և թաղել Մահլամի գերեզմանատանը»⁶:

Խաչիկ վարդապետ Դադյանն Ատրպատականի թեմի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Այվատյանի⁷ հետ շարունակում է բողոքել, որի շնորհիվ էլ նահատակների գլուխները երկու շաբաթ անց ևս վերադարձվում են, և կատարվում է վերաթաղում Մահլամի գերեզմանոցում. «Այս բողոք եղելութիւնները զանազան առիթներով և զանազան տեղերում, իհարկէ, բողոքներ և միջամտութիւն յարուցին. Խաչիկ վարդապետ Դատեանը, Ատրպատականի առաջնորդ Այվատեան եպիսկոպոսը, անգլիական և ռուսաց հիւպատոսները Ամիր-Նիզամին և Սադրագամին դիմեցին: Խաչիկ վարդապետին թոյլ տուին իր պաշտօնատեղին վերադառնալ, Հաջի-խանը պաշտօնանկ եղաւ: Ուրիշ ոչ մի առանձին հետևանք: Չարդամը իբր Սալմաստի և Խոյի դատարո՝ առ այժմ Խոյ քաշուց... անգլիական ընդհանուր հիւպատոս Վուտի միջամտութեամբ պարսից և քիւրդ զինուորների ձեռքով սպանուած 9 նահատակների գլուխները յետ տուին հայերին և հոկտեմբերի 30-ին կատարուեց նրանց կրկնակի թաղման տխուր հանդէսը...»⁸:

նով էին: Արշալոյսին պարսիկ սարբազները կու գան եւ կը շրջապատեն այդ զինուորները: Պարսկաստանի մէջ արգիլուած էր կռիւ ընել պարսիկներու դէմ, ուստի առանց կռուի մերթնը կուզեն հեռանալ ու բարձրանալ լեռ: Գնապարհին անոնցմէ մէկը կը սպաննուի, իսկ միւսները կերթան եւ կը մտնին բուրջի մը մէջ: Այդտեղ պարսիկները կը սպաննեն եւ կամ կը վիրաւորեն մէկ-երկու հոգի, թէւ մերթնը որեւէ դիմադրութիւն ցոյց չեն տար, եւ ապա կը ձերբակալեն միւսները: Այդ դժբախտները այնպէս կը կարծէին, որ զիրենք պիտի չսպաննեն եւ պիտի կրնան կաշառքով ազատիլ, ինչպէս ցարդ եղած էր: Բայց սխալած էին. բողոքն ալ կը սպաննեն, գլուխները կը կտրեն ու կը տանին Դիլման, յայտարարելով, որ կռուի մէջ են սպաննած բողոքն ալ» (Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ, Թեհրան, 1982, էջ 49):

5 Խաչիկ Ծ. վարդապետ Դադյանը 1898 թ. հունիսի 8-ին նշանակվել է Սալմաստի թեմի փոխանորդ և պաշտօնավարել մինչև 1899 թ. նոյեմբեր (ՀԱԳ, ֆ. 319, ց. 1, գ. 179, թ. 2 շրջ. և 15):

6 «Դրօշակ», 1898, № 11, էջ 97: Ի դեպ, Մահլամի ինը նահատակների լուսանկարի համար, ամենայն հավանականութեամբ, պարտական ենք Խաչիկ վարդապետ Դադյանին, որին հավանաբար հաջողվել է գտնել լուսանկարչին և ինչ-ինչ միջոցներով ձեռք բերել այդ հազվագյուտ պատկերը:

7 Սահակ Այվատյանը (1853-1924) 1882 թ. վարազավանքում վարդապետ է օծվել Սկրտիչ Խրիմյանի ձեռքով: 1887-1888 թթ. վարել է Եվրոկիայի, 1889-1890 թթ.: Բելգիայի, 1890-1894-ին՝ Մարսելի թեմերի առաջնորդի պաշտոնը: 1895 թ. նշանակվել է Ատրպատականի թեմի առաջնորդի տեղապահ: 1898 թ. ընտրվել է նույն թեմի առաջնորդի պաշտոնում, ապա կարճ ընդհատումներով գլխավորել Պարսկա-Հնդկաստանի թեմը:

8 «Դրօշակ», 1898, № 11, էջ 97:



Ազատամարտիկ-նահատակները (զորձ՝ պարսիկ լուսանկարչի)

Դեպքի առնչությամբ խմբապետ Փոխիկը հանրավի հեռացվում է Հայ հեղափոխական դաշնակցությունից, սակայն կարճ ժամանակ անց վերականգնվում է և իր կազմավորած նոր խմբով շարունակում զբաղվել զենքի փոխադրությամբ⁹:

Ինչպես ցույց է տվել հայ ազատամարտի պատմությունը, մատնությունները երբեք անպատիժ չեն մնացել: Բացառություն չէր կարող լինել նաև Մահլաճի դեպքը: Չպասելով կուսակցության կողմից որևէ հրամանի՝ Եփրեմ խանը¹⁰ «...նոյն օրն իսկ կը հաւաքէ 6-7 հոգի զինուորներէն, որոնց մէջ Սարբազ Խէչոն, Դամոն, Գրէն եւ միւսները, եւ առանց

հաշուի առնելու, որ Մահլաճի մէջ նստած էին Ջարդահի զինուորները, որպէսզի պաշտպանեն դաւաճանները, կերթայ գիշերով այդ գիւղը, կը մտնէ Մուղսի Դաւիթի տունը¹¹, որ հեղինակներէն էր զինուորներու սպանման եւ սուրի կը քաշէ Դաւիթը եւ անոր ընտանիքին բոլոր անդամները: Յետոյ նորէն ծածուկ դուրս կելլէ գիւղէն: Առաւօտեան, երբ Մուղսի Դաւիթի դուռը չի բացուիր, ժողովուրդը եւ գիւղը գտնուած պարսիկ զինուորները ներս կը մտնեն անոր տունէն եւ կը տեսնեն սոսկալի պատկերը: Այս սպանութիւնը այնքան կազդէ սարբազներու վրայ, որ փոխանակ շարունակելու մնալ գիւղը, դուրս կելլեն այդտեղէն ու կը հեռանան»¹²:

Այնուհետև Հայ հեղափոխական դաշնակցության Պարսկաստանի կոմիտեն որոշում է ընդունում մահապատժի ենթարկել մյուս մատնիչներին. «Դեպքի տպաւորութիւնը մեծ էր: Յնցեց ոչ միայն Սալմաստի ամբողջ ժողովուրդը, այլև նոյնիսկ տեղական կառավարութիւնը, որ վախենում էր անգլիական հիւպատոսի միջամտութեան հետեւանքներից: Սակայն անցան օրեր-շաբաթներ, ամէն ինչ վերջապես հանդարտեց եւ ժողովուրդը դիմեց իր առօրեայ կեանքին: Մենք միայն, նահատակածներին ճանաչողները, նրանց ընկերները, հանգստութիւն չունէինք: Ընկածների պատկերները դեռ կենդանի էին բոլորիս առաջ եւ սոսկալի վրէժ էին պահանջում.– վրէժ գոնէ այն դաւաճաններից, որոնք ամենալկտի կերպով մորթել տւին՝ տուն-տեղ, մահ ու վտանգ արհամարհած մեր ընկերներից ամբողջ ինը հոգի...: ...տեղում ժողոված տեղեկութիւնները ներկայացւեցին Պարսկաստանի Կենտրոնական կոմիտէի հայեցողութեան: ...Կենտրոնական կոմիտէի վճռի համաձայն, մատնիչներից երկուսը՝ Ստեփան եւ Խոս Առաքել՝ արդէն տեղորի են ենթարկւած: Ստեփանը, իբր գիւղական յայտնի մատնիչ, յարաբերութիւն ունէր Սալմաստի կառավարիչ Հաջի խանի հետ եւ դէպքում մեծ դեր էր խաղացել: Խոս Առաքելը մի սարսափելի փչացած արհեստատուր էր, որ դէպքի ժամանակ «վալաղի» (ուղեցոյցի) դէր էր կատարել քիւրդ ձիաւորների համար: ...Կառավարութեան ներկայացուցիչներից, որոնք այնքան անխիղճ դեր կատարեցին 9 զինակիրների վերաբերմամբ, Հաջի խանը, որ սկզբում հեռացրել էր պաշտօնից, կրկին ծառայութեան է կանչւել, իսկ Ջարդահը (Սալմաստի եւ Խոյի ընդհանուր կառավարիչը) միայն վերջերս պաշտօնանկ եղաւ եւ այժմ Թաւրիզ է կանչւած բացատրութիւնների համար»¹³:

⁹ Պատմագրութիւն Հայ յեղափոխական դաշնակցութեան, հ. Բ, Արէնք, 1991, էջ 479:

¹⁰ Եփրեմ խանը (Եփրեմ Դավթյան. 1868, Հյուսիսային Արցախի Շամխորի շրջանի Բարսուն գ. - 6.5.1912, Իրան, Մուրջե գ.) 1880-ական թթ. անցնում է Արևմտյան Հայաստան և միանում հայրուկային խմբերին: 1890 թ. Ս. Կուկունյանի արշավանքին մասնակցելու համար ձերբակալվում է և 1892 թ. արտրվում նախ Սիբիր, ապա Մախալին: 1896 թ. հաջողվում է փախչել արտրից և կրկին անցնել Արևմտյան Հայաստան: 1897 թ. մասնակցում է Խանասարի արշավանքին, իսկ 1905-1911 թթ.՝ իրանյան հեղափոխությանը: Իրանի կառավարությունը, գնահատելով նրան որպես ռազմական գործիչ, շնորհում է գեորագույն գործադրամատարի (սարդարի) կոչում: Չոհվում է 1912 թ. Համադան քաղաքի մոտ գտնվող Մուրջե գյուղի ճակատամարտում:

¹¹ Այլ վկայությամբ՝ Եփրեմ խանը 9 նահատակների համար վրէժ է լուծում աղա Ջարդից. «...աղա-Ջարդի մասին միայն յայտնի է, որ նա իր կնոջ և աղջկայ հետ իր բարենիստ հպատակութեան համար վարձատրւել է մահով» («Դրօշակ», 1898, № 11, էջ 97):

¹² Առաքել, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ, Թեհրան, 1982, էջ 49:

¹³ «Դրօշակ», 1899, № 3, էջ 41-42:

Ի վերջո, 1899 թ. հունվարի 3-ին (նոր տոմարով)՝ երեկոյան ժամը 6-ին, իրենց արժանի պատիժն են ստանում «...9 նահատակ զինուորներու մատնութեան գործին գլխաւոր հեղինակներէն երկուքը՝ Ստեփան եւ Խոս Առաքել»¹⁴:

Այս ինը նահատակ-ազատամարտիկներից միայն Նախտ Ղազարյան Ամիրբեկյանցի մասին հայտնի են որոշ տեղեկություններ: Ծնվել է 1858 թ. Վասպուրականի Մոկս գավառի Ոգմ գյուղում: Եղել է Արմենական, ապա մտել է Հայ հեղափոխական դաշնակցության շարքերը և անդամագրվել Նիկոլ Դումանի հայդուկային խմբին: Մասնակցել է բազմաթիվ մարտերի և Խանասորի արշավանքին: 1897 թ. խմբապետ Փոխակի զինակիր խմբի կազմում էր: Անմահացել է Ավետիս Ահարոնյանի «Խայր» պատմվածքում. «...գեղջուկ մի դեմք էր այն, ուր չարքաշ կեանքը որել էր իր կոշտութեան կնիքը... երիտասարդ մարդ էր, բայց երևում էր, որ շատ էր ապրել. քանձր բեխերի տակ երևում էին երկու հաստ շրթունքները պինդ իրար վրայ սղմած, որ տալիս էին նրա դեմքին յամառ արտայայտություն. աչքերը մանր էին, բայց շարժուն, կրակոտ...: «Խայր»-եր շատ կային Օ. գիւղում, գնացին. այս մեկը ուշացած կռուների պէս մուրալ չուզեց, պահապան եղաւ. տեղացիք անունը լաւ չգիտէին, Նախտ կանչելու տեղ՝ ոմանք Մխո կանչեցին, ոմանք էլ Մկո ասացին, բայց վերջիվերջոյ՝ խօսքերը կարծես մէկ արած՝ սկսեցին պարզապէս «Խայր» կանչել: Այսպէս լաւ էր, հեշտ էր. համ էլ՝ իրաւ, որ նա «խայր» էր, որովհետեւ Հայաստանցի էր, Ոգմը գիւղացի»¹⁵:

Ոգմեցի խմբապետ Ասլան Ամիրբեկյան-Ստեփանյանցն էլ իր հուշերում հորեղբորորդու՝ Նախտյի մասին գրում է. «...մի հսկայ տղամարդ, սեւ փափախը գլխին, ինչ որ տարօրինակ հագուստով: ...այդ տղամարդը հայրուկ եւ յեղափոխական ռազմիկ Նախտն էր, որին ընկերանում էր ոգմեցի ռազմիկ Յարութիւնը, որ եղել էր իմ կնքահայրը: Դումանը իր խմբով Շատախի լեռներ էր ապաստանել: Նա մի օր Նախտյին ուղարկում է, որ գնայ հայ զինդերից հաց բերի: Նախտն ճանապարհին հանդիպում է մի քրոջի: Երկուսը միասին ականատես են լինում օձի եւ արագիլի օրհասական կռիւն: Վերջ ի վերջոյ օձը փաթաթում է արագիլի վզին եւ յետդրում նրան: Նախտն քրոջի կողքից յանկարծ խլում է դաշոյնը եւ մինչեւ կոթը խրում է նրա կուրծքը ու սպանում: Ահա այս իրական դէպքն է, որ Աւետիս Ահարոնեանը գրի է առել ու հիստել իր գեղեցիկ



Մահլամի պանթեոնը (2011 թ.)

պատմուածքը՝ «Խայր»...: Նախ Արմենական կազմակերպութեան անդամ էր, հետագային մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, դառնալով Վազգէնի (Տիգրան Տէրոյեան) հաւատարիմ զինուորներից մեկը: Վազգէնի խմբի հետ 1896-ին անցնում է Սալմաստ, մտնում Նիկոլ Դումանի հայդուկային մեծ խմբի մէջ եւ մասնակցում Բողազքեասանի ու Խանասորի կռիւներին...: Նախտն 1896-ի աշնանը Վանում մասնակցում է Փախչանեց տան քեթե կռիւին...»¹⁶:

Յավոք, մյուս ութ ազատամարտիկ-նահատակների մասին, հակառակ մեր պրպտումների, կենսագրական տվյալներ չհաջողվեց գտնել: Հետևաբար, ստորև ներկայացնելով նրանց տապանագրերը, հարկ ենք համարում նշել, որ Խաչիկ վարդապետ Դադյանին ենք պարտական նրանց անուն-ազգանունները և որտեղացի լինելն իմանալու համար:

¹⁴ «Գրօշակ», 1899, № 2, էջ 18: Մեկ այլ տեղեկությամբ՝ իրենց համագործակցի սպանությունից հետո վախեցած մատնիչները փախչում են գյուղից, սակայն չեն խուսափում վրիժառույթումից. նրանցից մեկը «...կը սպաննուի շուտով, իսկ միւսը, որ փախած էր Ռուսաստան, կը յաջողին սպաննել միայն 1905 թուին» (Ռաքէն, նշվ. աշխ., հ. Բ, էջ 49):

¹⁵ Գարիբ. «Խայր» (Նախտյի յիշատակին), «Գրօշակ», 1899, № 2, էջ 29:

¹⁶ Ասլան Ստեփանեանի յուշերը, գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, 1966: Քրոջին սպանելու վերաբերյալ Ա. Ահարոնյանը գրել է, որ 1896 թ. Նախտյին Վարդանը «...ուղարկում է Կըզը-ղաշ գիւղից հաց բերելու, սակայն մեր կռիւն արգելք է լինում նրան վերադառնալու սարը, յետոյ էլ ուղղում է դէպի Շատախ, բայց ճանապարհին մի գիւղում բռնում է մի ինչ որ քիւրդ բեկի խօլամից (դրանիկ), «Ֆէդայի» անունով. ո՛չ մի երդումով, ո՛չ մի փաստով չի կարողանում նրան հաւատացնել, որ ինքը հասարակ հայ է և ո՛չ «Ֆէդայի»: Քիւրդը նրան յետևը գցած տանում է դէպի քաղաք հիւրըմաթին յանձնելու: Բայց Նախտն չի թողնում նրան իր մտադրութիւնն իրագործելու. յետևից վրայ է թռչում, նրա երկու խեղճարները խլում գոտուց, և խրում երկու կողերը, սպանում ինչպէս շան, խողխողում և կողպտելով՝ յետ դառնում» («Գրօշակ», 1897, № 1, էջ 7: Հմտտ. Խանասորա Վարդանի յիշատակարանը, Երևան, 1992, էջ 169, 171):

Աստ հանգչի ողմեցի Նախօ / Ղազարեան, նահատակեցաւ / 1898 հոկ(տեմբերի) 14-ին¹⁷:



Աստ հանգչի շատախցի Յարիք / Արզարեան, 1898 հոկ(տեմբերի) 14-ին / նահատակեցաւ:



Աստ հանգչի ողմեցի Յարութիւն / Փոխանեան, նահատակեցաւ / 1898 հոկ(տեմբերի) 14-ին:



Աստ հանգչի շատախցի Գարրիէլ Մնջօ / Մուրատեան, 1898 հոկ(տեմբերի) 14-ին / նահատակեցաւ:



Աստ հանգչի մոկացի Խաչօ Մ. Յարութիւնեան, նահատակեցաւ / 1898 հոկ(տեմբերի) 14-ին:



Աստ հանգչի խիզ(ա)նցի Սեփան Պետրոսեան, նահատակեցաւ / 1898 հոկ(տեմբերի) 14-ին:



Աստ հանգչի մոկեցի մեծագլուխ / Յարութիւն Խաչօեան, նահատակեցաւ / 1898 հոկ(տեմբերի) 14-ին:



Աստ հանգչի հազարեցի Աւետիս / Օհանեսեան, 1898 հոկ(տեմբերի) 14-ին / նահատակեցաւ:



Աստ հանգչի նորո(ու)զցի Գալուստ / Գուլօեան, նահատակեցաւ / 1898 հոկ(տեմբերի) 14-ին:



Հետագայում այս պանթեոնում են ամփոփվել ևս մի քանի ազատամարտիկներ: Նրանցից էր Ավետիք Դավթյանը, որի տապանաքարին արձանագրված է.

Թշնամեաց տեմ ընդրիմացար,
Լեռան գլուխըն բարձրացար,
Գնդակահար մարտիրոսեցար,
Մուրբ արիւնովդ կարմրեցար:

Մյուս երեսին

Աստ նահատակի քաջ Աւետիք
մահոտեսի Դաւիթեան
1904, ի հասակի 32 տ.:

17 Դեռևս 1930 թ. հունիսի 21-ին Մախլամի գերեզմանոց է այցելել վանեցի բանասեր Հայկ Աճեմյանը, լուսանկարել և ընդօրինակել է վասպուրականցի ութ ազատամարտիկ-նահատակների տապանագրերը (տես՝ Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեփնդամեակի առթիւ. 1915-1930, կազմ. Աճեմյան Հ., Վենետիկ, 1930):



Մահլամի պանթեոնում գտնվող Ավետիք Դավթյանի տապանաքարի վերին և հյուսիսային կողմերը (լուս.՝ 2011 թ.)

Մահլամի պանթեոնն ամփոփում է Հայրենիքի պաշտամունքով ապրած և հանուն այդ նվիրական ու սրբազան արժեքի իրենց կյանքը զոհաբերած մերագնյա մի խումբ նահատակների մարմինները:

Եվ շտ է, մեր Հայրենիքը ծայրեիծայր ամփոփում է «Վասն Հայրենյաց» նահատակված բազում թանկագին աշյուններ, սակայն պատմությունն այնպես է ընթացել, որ նրանց մեծագույն մասի գերեզմանատեղերը պիղծ թշնամիների ձեռքով

սրբված են Երկրի երեսից, ուստի այս պանթեոնը այն եզակիներից է, որ պահպանվել է ներկայիս հայ պետականության սահմաններից դուրս:

Արդար ենք տեսնում, որ յուրաքանչյուր տարի, օրինակ, Թադեոս առաքյալի վանք այցելող հայազգի բազմահազար ուխտավորների թեկուզ մի փոքր մասն իրենց այցելելիք սրբավայրերի ուղեգծում ներառեն նաև Հայոց հզոր ոգիներն ամփոփած այս նվիրական վայրը:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ԸԳՆԱՐԱՆԸ

Աշոտ Հակոբյան

*Թող որ հռչակված հասնի ազգերին,
Ժողովուրդներին քարոզվի ի լուր,
Տպվի դռներին բանականության
Եվ զգայության սեմերի վրա դրոշմվի ամուր:
Ու թեպետ որպես մի մահկանացու՝ պիտի
վախճանվեմ,
Բայց այս մատյանի հարակալությամբ կմնամ
անմահ:*

Գրիգոր Նարեկացի,
Մատյան ողբերգության, Բան ԶԸ, Բ

Ժ դարում է ապրել մեծահռչակ վարդապետ, բանաստեղծ, փիլիսոփա, երաժիշտ Սրբ. Գրիգոր Նարեկացին:

Ծնվել է 951 թ., որից էր Խոսրով Անձևացու: Ավագ եղբոր՝ Հովհաննեսի հետ աշակերտել է Նարեկավանքում վանահայր Անանիա Նարեկացուն, որը մոր հորեղբայրն էր: Նրա մահվանից հետո Հովհաննեսն ընտրվում է վանահայր, իսկ Գրիգորը ձեռնադրվում է կուսակրոն քահանա և դառնում միայնակյացների վարժապետ: 977 թ. Գուրգեն Արծրունի թագավորի պատվերով գրում է «Երգ Երգոցի մեկնությունը», 983 թ. Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանքով՝ Խիզանի Ապարանից Սրբ. Խաչ վանքի հիմնադրման և կառուցման պատմությունը: Հեղինակ է նաև ներբողական ճառերի, քարոզչական գանձերի, մի շարք տաղերի: Նրա ստեղծագործությունների գլուխգործոցը, սակայն, «Մատյան ողբերգության» աղոթամատյանն է, որն ավարտել է 1002 թ.: Վախճանվել է 1003 թ. եղբոր մահվանից հետո և ամփոփվել Նարեկավանքում՝ Սրբ. Սանդուխտ եկեղեցու արևելյան պատի տակ: Հետագայում նրա գերեզմանի վրա կառուցվել է գմբեթավոր դամբարան և դարձել նշանավոր ուխտատեղի¹: Հայ առաքելական եկեղեցու տոնելի սրբերից է և նրա հիշատակը տոնվում է Թարգմանչաց տոնին Սրբ. Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի և Ներսես Շնորհալու հետ:

Նրա անվան հետ են կապված երկու հրաշապատում ավանդազրույցներ²:

Վիճավոր համալիրը, որտեղ երկար տարիներ ճգնել է Սրբ. Գրիգոր Նարեկացին, հետագայում կոչվել է իր անունով՝ Նարեկացու ճգնարան: Այն գտնվում է Վանա լճի հարավային ափին՝ Ռշտունյաց լեռնաշղթայի հյուսիսային լանջերի արևելահայաց լեռնաճյուղի ժայռերի մեջ՝ Նարեկ (այժմ՝ Եմիշլիկ) գյուղից 2,6 կմ հյուսիս-արևմուտք, իսկ Փայխներ (այժմ՝ Բաղլամա) գյուղից՝ 1,2 կմ հյուսիս-արևմուտք: Հնավայրը գտնվում է հյուսիսից հարավ ձգվող, կրային նստվածքավոր ծակոտկեն, բնական խոռոչներով ուղղահայաց ժայռի կենտրոնում՝ ծովի մակերևույթից մոտ 2100 մ բարձրության վրա: Աշխարհագրական կոորդինատներն են՝ 38°18' 24.13" N, 42°54' 03.27" E:

Նարեկացու ճգնարան այցելել են մի շարք ուխտավորներ ու տեղեկություններ թողել նրա մասին: Մեզ հայտնի այցելուներն են՝ Հայր Ներսես Սարգսյանը³, Խրիմյան Հայրիկը⁴, Գարեգին Սրվանձտյանը⁵, Գևորգ Շերենցը⁶, Երվանդ Լալայանը⁷, Հայկ Աճեմյանը⁸, Բաֆֆին⁹ և Խանասորա Վարդանը¹⁰:

նա հյուրերի առջև դնում է տապակած աղավնիներ, իբրև չէր իմանում, թե ինչ օր է: Երբ հյուրերը հրաժարվում են ուտել՝ պատճառաբանելով, որ ուրբաթ է, Գրիգորը ներողություն է խնդրում և աղավնիներին հրամայում, որ թռչեն, գնան իրենց երանի մոտ: Այդպես էլ լինում է, իսկ ապշահար պատվիրակներն ընկնում են նրա ոտքերն ու ներողություն խնդրում: Դրանով ավարտվում է Սրբ. Գրիգորի դեմ հարուցված ամբաստանությունը (Վարք սրբոց, էջ 593-594):

Երկրորդ հրաշապատումն ավանդում է, որ Նարեկացին իր ճգնարանում աղոթելիս տեսնում է մանուկ Աստվածորդուն գրկին Սրբ. Աստվածածնին Վանա լճի Առտեր կղզու վրա: Այդ տեսիլքով ոգեշնչված՝ սուրբն իջնում է ճգնարանից և գնում ընդառաջ՝ քայլելով լճի վրայով և հասնում է սրբուհուն: Տիրամայրը մանուկին տալիս է նրա գիրկը՝ ասելով. «Առ, տեր քո»: Այս տեսիլքի մասին վկայում է նաև Նարեկացին «Տաղ ծննդեան» տաղում և «Մատյան ողբերգության» պոեմի ԺԲ և ԻԷ գլուխներում (**Մարգիսեան Ն.**, Տեղագրությունը ի Փոքր եւ Մեծ Հայս, Վեներտիկ, 1864, էջ 253):

- 3 **Մարգիսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 253:
- 4 Հրապիրակ Արարատեան, յօրինելով ի չափս Հայկականս ի Մկրտչէ Խրքմեան Վանեցոյ, Կ. Պոլիս, 1850, էջ 95:
- 5 **Վարդ.** Նարեկի վանքը, «Արաքս», 1898, Ա, էջ 82:
- 6 **Շերենց Գ.**, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 127-129:
- 7 **Լալայեան Ե.**, Վասպուրական. Նշանավոր վանքեր. Նարեկայ վանք, «Ազգագրական Հանդես», գիրք XXI, 1911, էջ 41-42:
- 8 **Աճեմեան Հ.**, Հայրենի յիշատակներ, Ա, Գեղի Նարեկայ վանքը, Էջմիածին, 1918, էջ 10-12:
- 9 **Բաֆֆի,** Կայծեր, Երկերի ժողովածու, հ. V, Երևան, 1963, էջ 314-315:
- 10 Խանասորա Վարդանի հիշատակարանը, Երևան, 1992, էջ 66:

1 Վարք սրբոց, Բեյրութ, 1975, էջ 591-595:
 2 Առաջին հրաշապատումն ավանդում է, որ երբ չարախոսությունները շատանում են Սրբ. Գրիգորի մասին, այն ժամանակ եպիսկոպոսներն ու վարդապետները իշխաններով և տանուտերերով հավաքվում են՝ քննելու նրա վարքը: Պատվիրակներ են ուղարկում՝ նրան ատյան կանչելու: Երբ գալիս են նրան տանելու, սուրբը զվարթերես դիմավորում է նրանց և կանչում հյուրասիրության: Օրն ուրբաթ էր՝ պահոց օր, իսկ



Սուրբ Գրիգոր Նարեկացու ճգնարանը, հեռվում՝ Մոկսը Ռշտունիքից սահմանագատող լեռնաշղթան (լուս.՝ 2011 թ.)



Սուրբ Գրիգոր Նարեկացու ճգնարանի ընդհանուր տեսքն արևելքից (լուս.՝ 2007 թ.)

2010 թ. հոկտեմբերին և 2011 թ. օգոստոսին մենք ևս առիթ ունեցանք այցելելու մեծահամբավ ճգնարան և առաջին անգամ իրականացրինք մասնագիտական ուսումնասիրություններ:

Նարեկացու ճգնարանը զետեղված է հյուսիսից հարավ ձգվող մոտ 125 մ երկարությամբ, ուղղահայաց ժայռերի կենտրոնական առավելագույն՝ 24 մ բարձրությամբ հատվածում: Ժայռի հյուսիսային կեսը հարուստ է մեծ ու փոքր բնական խոռոչներով: Այս հատվածում ժայռի տակ ընկած են մեծ ժայռաբեկորներ: Ժայռի հարավային կեսը զուրկ է բնա-

ջրվեժից մնացել է ցամաքած հունը, որի ջրերը ջրանցքով տարվել են քրդաբնակ դարձած Փայխներ գյուղի այգիները ոռոգելու:

Ճգնարանից «...բացում է մի սքանչելի տեսարան. կապուտակ լճի մեջ ցցում են Առ տեր և Աղթամար կղզիները, փոքր ինչ արևելահիսիս բարձրանում է Արտոս լեռը, ուղիղ հանդեպը տարածում է Վան քաղաքը, իսկ փոքր ինչ արևելահարավարևմտյան կողմից լիարժեք Մատրիկան քերթ է Գալիլիա գազաթնջրով, որոնք ամեն առաօտ փողփողում են արշալուսի երփներանգ լուսով»¹²:



Սուրբ Գրիգոր Նարեկացու ճգնարանից բացվող տեսարանը. Առտեր և Աղթամար կղզիները (լուս.՝ 2010 թ.)



Ճգնարանից դեպի Նարեկ գյուղ (հեռվում՝ Արտոս լեռը) բացվող տեսարանը (լուս.՝ 2010 թ.)

կան խոռոչներից, և դեպի հարավ նրա բարձրությունը աստիճանաբար նվազում է և ավարտվում թեք քարքարոտ լանջով: Ժայռի հարավային եզրին՝ վիմափոր համալիրից մոտ 40 մ հեռավորության վրա, եղել է ջրվեժ, որի մասին Ե. Լալայանը նշել է. «Քարայրից փոքր ինչ հեռու, նրա հարավային կողմում քարաժայռի բարձունքից մի ջրվեժ է ժայթքում, փոքր ինչ խանգարելու քարայրերում տիրող անհուն անդորրութիւնը»¹¹: Ներկայումս այդ

Ավելի քան մեկդարյա վաղեմություն ունեցող նկարագրությանը հարկ ենք համարում հավելել, որ ներկայիս տեսարանը 1951 թ.-ից ի վեր¹³ գրկված է հազարանյա հռչակավոր Նարեկավանքից, որի՝ բնությանը ներդաշնակ գմբեթների փոխարեն այժմ վեր է խոյանում Եմիշլիկ վերանվանված քրդաբնակ գյուղի՝ 1970-ական թթ. կառուցված մզկիթի սրածայր ճեղմակ մինարեն:

Մեզ հայտնի առաջին տեղագիր հեղինակը, ով տվել է ճգնարանի համառոտ նկարագրությունը, Ն.

11 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 41: Ի դեպ, ջրվեժը նկարագրել է նաև Հ. Աճեմյանը. «...ուրկէ ակնապիշ կը դիտենք ժայռին գագաթէն հոտող սառնորակ ու վճիտ ջրվեժը, որու մարգարտակաթիլ անուշ ջուրը կերթայ կը թափուի մեջ ծովու աղի ջուրին» (Աճեմյան Հ., նշվ. աշխ., էջ 10):

12 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 41:

13 1951 թ.-ին Նարեկավանքը քանդվել է մահանգապետարանի հրամանով, որի մասին տեղեկությունը զետեղված է Գյալվաշ գավառի պետական կայքէջում՝ www.gevas.gov.tr/default_B1.aspx?content=1027:

Սարգսյանն է. «Շինուածն յերկուս բաժանեալ ի ներքնայարկ և ի վերնայարկ՝ ինն սենեկօք սահմանի, հինգ ի ներքինն և չորս ի վերինն, պատուհանաձև բացուածս ունելով յարկաց իւրաքանչիւր ծովահայացս: Մի միայն է մախադուռն, ընդ որ փոքր մի դժուարաւ լինի ելանել ընդ քարածայռն և մտանել. այդ առաջին մուտ մէջ ընդ մէջ դրամբք հանէ յամենայն սենեակս ներքնայարկին, որոց ի միումն ի կողաց լերինն փորեալ է բոլորչի տեղի կանգնաչափ խորութեամբ, յաւազա՞ն ջրոյ արդեօք թե յայլ ինչ պէտս չէ յայտ: Ի ներքնայարկէն դիւրագոյն ելանելօք լինի անցանել ի վերնայարկն. ի սմա ևս մէջ ընդ մէջ դրամբք հաղորդին ընդ միմեանս սենեակքն չորեքին. յորոց մին է փոքրիկ մատուռն հանդերձ վիմեղեն սեղանով. անդ, ասեն, պատարագէր սուրբն»¹⁴:

Ավելի ուշ հրապարակված մի քանի հպանցիկ հիշատակությունների շարքում ճգնարանի առավել հանգամանալից նկարագրությունը ներկայացրել է Ե. Լալայանը. «Այս քարայրերը դասաորում են միմեանց վերև, կազմելով երեք յարկ: Ստորին յարկը միանգամայն մատչելի է, մէջին յարկը բարձրանալու համար պէտք է անցնել չափազանց նեղ կածաններով, իսկ երրորդ յարկը բարձրանալու համար անհրաժեշտ է կօշիկները հանել և մեծ զգուշութեամբ մագլցել քարէ արդէն մաշուած սանդուղի վրայով: Սակայն և այնպէս՝ շատ քչերին է յաջողում բարձրանալ երրորդ յարկը: Ստորին յարկի քարայրերն առանձնապէս ուշագրաւ չեն: Երկրորդ յարկը բարձրանալիս՝ պատահում ենք նախ մի սրահի, որ մօտ 3 մետր երկարութիւն, 2 մետր լայնութիւն և 1,1/2 մետր բարձրութիւն ունի: Այստեղից մի դռնաձև անցք բացուած է մի ուրիշ, 2 մետրաչափ քառակուսի քարայրի մէջ: Սրա արևմտեան կողմում գտնուած է մի կամարակապ փորուածք, որ 1,1/2 մետր բարձրութիւն, նոյնքան լայնութիւն ու մի մետր խորութիւն ունի: Մի քիչ հեռու, կէս մետրաչափ բարձրութեան մի բեմաձև տեղ կայ, որի մէջ երկու մետր խորութեան մի փոս կայ, երկի իբր ջրամբար շինուած...: Այս քարայրի հարաւային պատի մէջ փորուած մի դռնով կարելի է անցնել մի ուրիշ քարայր, որ 2 մետր երկարութիւն և 1,1/2 մետր լայնութիւն ունի: Սրա արևմտեան պատի մէջ ևս խորանաձև մի փորուածք կայ, մի մետր բարձրութեան, նոյնքան խորութեան և 0,70 մետր լայնութեան: Իսկ սրա առջև մի թոնրաձև փորուածք՝ դեպի արևելք դարձած սնուածքով: Այս միջին յարկից հինգ աստիճանի մի քարէ սանդուղիով կարելի է բարձրանալ վերին, երրորդ յարկի առաջին սրահը, որ 3 մետր երկարութիւն, 2 մետր լայնութիւն և 1,1/3 մետր բարձրութիւն ունի: Այս սրահը դեպի արևելք մի մեծ և մի փոքր բացուածք ունի, յատակի վրայ կան երկու քառանկիւնի ծակ, որ բացուած են միջին յարկի երկրորդ սրահի մէջ: Մի անկիւնում կայ թոնրաձև մի փո-

րուածք, իսկ պատերի մէջ խորշեր: Հիւսիսային պատի մէջ փորուած մի դուռ բացուած է մի ուրիշ քարայրի մէջ, որ երկու մետր երկարութիւն ունի, 1,1/2 մետր լայնութիւն և երեք մետր բարձրութիւն, կամարաձև ձեղումով: Արեւելեան կողմը կայ կիսաբոլոր մի կոզակ, մի մետր բարձրութեան բեմով: Ըստ երևութիւն սա այս քարայրերում բնակուողների ընդհանուր աղօթատեղին է եղել: Կոզակի մօտ կայ մի բացուածք դեպի արևելք, որտեղից առատ լոյս է թափանցում: Այս գլխատր այրի հիւսիսային պատի մէջ բացուած դռնից կարելի է մտնել մի փոքրիկ այր, որ հազիւ 1,1/2 մետր երկարութիւն և մի մետր լայնութիւն ունենայ, սրա արևելյան կողմը գտնուած է մի վեմքար, իսկ յատակի վրայ փոսիկներ: Աւանդաբար պատմուած է, թե սա է ս. Գրիգոր Նարեկացու աղօթատեղին, և այդ փոսիկները յառաջացած են նրա անթիւ ծունրադրութիւններից»¹⁵:

Շատ ավելի համառոտ, սակայն ուշագրավ է նաև Խանասորա Վարդանի նկարագրությունը. «Այրը բարձրանալու համար հատուկ ոտնատեղեր էին պատրաստված: Բավական ընդարձակ ու գեղեցիկ այր էր փորած լեռան մէջ: Հարմար ու կանոնավոր սենյակներ ուներ՝ մաքուր ու կոկիկ տաշված պատերով, առաստաղով ու հատակով: Երկհարկանի էր: Վարի երեք սենյակներում թոնիրներ էին փորված հաց թխելու համար, իսկ վերևի սենյակում խաչքար ու վեմքար կային: Երևում էր, որ աղօթատեղի էր եղել, ո՞վ գիտէ ինչ ժամանակներում: Այրը պատկանում էր Ս. Գրիգոր Նարեկացուն...: Տեղացիք կոչում էին «Նարեկացու աղօթատեղի»...»¹⁶:

Մյուս այցելուները նույնպես նկարագրել են վիմափոր ճգնարանը, սակայն արդեն ներկայացվածի համեմատ առանձին նորություն չեն պարունակում¹⁷: Հատկանշական է, որ այս նկարագրություն-

15 Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 41-42:

16 Խանասորա Վարդանի հիշատակարանը, նշվ. աշխ., էջ 66:

17 Նարեկացու ճգնարան այցելած հեղինակներից Խրիմյան Հայրիկը գրել է. «Հուպ այս գիտիս ի յարեմուտս հիւսիսակողման նորին՝ գոյ լեռն մի ապառաժուտ յորում են վեց քարայրք, երեքն ի վերոյ երեքն ի ստորեւ, եւ ի մէջ միումն շինեալ կայ սեղան, որ էր տեղի աղօթից Նարեկացոյն...» (Հրապարակ Արարատեան, նշվ. աշխ., էջ 95):


Գ. Սրվանձոտյանցը վիմափոր համալիրը այսպէս է նկարագրել. «Նարեկացու դամբարանից գատ՝ մի սուրբ ու նվիրական տեղ էլ է մնացել մեզ յիշատակ. դա իւր աղօթատեղին, ճգնարանն է՝ հոգեկան վերապացումների վայրը, որը գտնվում է վանքից դեպի հիւսիս, կես ժամաչափ հեռաւորութեամբ, որ ներկայացնում է մի քարածայռ, կրկնայարկ փորուած ինն քարայրներով, որ մի ճանապարհ միայն ունի վեր բարձրանալու համար՝ ուղիղ քարեայ պատ, մի քանի փոքրիկ խորշիկներ, այն էլ որպէս յենարան ձեռքի ու ոտքի» (Վարդ., նշվ. հոդվ., էջ 82):

Գ. Շերենցը ճգնարանի մասին նշել է. «...Փայտներ-գոմեր գյուղի վերևն՝ ապառաժ լեռան լանջովն ընկած Մրբատեղին՝ հարիւրավոր ուխտաւորք մագլցելով, սանելով երբեմն ի վայր գլորվելով և կրկնելով վերելքն, քերմեռանդոթյամբ ուխտի են գնում: Դա ուխտյալ միայնակեցոյն ...քարայր-աղօթատեղին է, վերնայարկ քարասենեակներ, թով վեց, ուր կան նոյնպէս քարասեղաններ, և դոցա վրայ մեկ մեկ խաչ և մոմակալները,

14 Սարգսյան Ե., նշվ. աշխ., էջ 253:

ներում վիմափոր սենյակների քանակը տարբեր է ներկայացվել¹⁸:

Վիմափոր համալիրը բաղկացած է միմյանց վրա բարձրացող երեք հարկերից: Առաջին հարկը փոքր մակերես է զբաղեցնում, քան երկրորդ ու երրորդ հարկերը, որոնք սկսվում են առաջին հարկի հյուսիսային եզրին համապատասխան և ձգվում են



Ճգնարանային համալիրի ուղղանկարն արևելյան կողմից

ավելի հարավ և ավարտվում ժայռի կամարածև առաջակարկառ վերնամասի տակ: Բոլոր հարկերն էլ ունեն հարթ մշակված պատերով և առաստաղով սենյակներ, որոնք զուրկ են հարդարանքի միջոցներ-


բոլոր զարդն են քարայրին» (Շերենց Գ., նշվ. աշխ., էջ 127-128):

Հ. Աճեմյանը կարճառոտ նշել է. «Աղօթատեղին կը բաղկանայ ինը քարափոր խցիկներէ, որոնք փոքրիկ անցքերով կը միանան իրարու, Նարեկացու բուն աղօթարանին մէջ կայ քարէ սեղան մը...» (Աճեմեան Հ., նշվ. աշխ., էջ 11):

Վերջապես Բաֆֆին իր «Կայծեր»-ում այսպես է նկարագրել վիմափոր համալիրը. «Բայց բոլորից հետաքրքիր են այն քարանձավները, որոնք մի ժամանակ Նարեկացու ճգնարանն են եղել: Նարեկ գյուղից մի ժամ հեռավորությամբ, ծովափի մոտ, բարձրանում է մի այլ քարաժայռ: Նրա մեջ կան մի քանի մեծ և փոքր բնական այրեր: Բացի այդ բնական այրերից, նույն բարձրադիր ապառաժի մեջ փորված են թվով ինն սենյակներ: Այդ վիմեղեն սենյակները անհիշելի ժամանակների գործ է: Նրանք երկու հարկերի են բաժանված, որոնցից հինգը ներքին հարկն է կազմում, իսկ չորսը՝ վերին հարկը: Հայոց հին սորամուտների (արոգլողիստների) այդ քարեղեն բնակարանը այնքան անմատչելի, այնքան բարձր է գետնի մակերևույթից, որ Նարեկացու նման հրաշագործ անձը միայն կարող էր մուտք գործել այդտեղ: Գլխավոր դուռը բացվում է ներքնահարկի առաջին սենյակի մեջ, և հետո մեջեմեջ դռներով տանում է դեպի մյուս սենյակները և հանում է մինչև վերին հարկը: Յուրաքանչյուր սենյակ պատուհանաձև լուսամուտ ունի, որ նայում է դեպի ծով: Վերնահարկի սենյակներից մեկը ձևացնում է մի փոքրիկ մատուռ, քարեղեն սեղանով: Այստեղ էր բնակվում Նարեկացին, այստեղ էր գրում իր սքանչելի գիրքը» (Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 314-315):

18 Հեղինակներից Խրիմյան Հայրիկը և Գ. Շերենցը համալիրը համարում են 6 սենյակներից բաղկացած՝ 3-ը՝ վերին, իսկ 3-ը՝ ստորին հարկերում: Նրանք չեն հաշվել 2-րդ հարկի միջանցքը և 3-րդ հարկի ճգնարանը: Իսկ Ն. Սարգսյանը, Գ. Սրվանձտյանցը, Հ. Աճեմյանը և Բաֆֆին հաշվում են 9 սենյակներ, 4-ը՝ վերին, իսկ 5-ը՝ ստորին հարկերում: Ստորին հարկի հարավային բազմանկյուն սենյակին կից մեծ խորշը համարել են առանձին սենյակ: Ե. Լալայանը վիմափոր համալիրը նկարագրելիս անտեսել է 2-րդ հարկի միջանցքը և 3-րդ հարկի հարավային հնգանկյուն սենյակը:

րից: Դրանք լուսավորվում են արևելյան արտաքին պատի բացվածքներից, որոնք նայում են Վանա լճին: Առաջին հարկը համեմատաբար ավելի հեշտ հասանելի է, քան երկրորդ և երրորդ հարկերը, նաև չունի որևէ ներքին կապ վերին հարկերի հետ: Այն հավանաբար նախատեսված է եղել ուխտավորների, իսկ երկրորդ և երրորդ հարկերը՝ միայնակյաց-



Եռահարկ ճգնարանային համալիրի ընդհանուր հատակագիծը


ների ապրելու և գործելու համար: Այդ իսկ պատճառով ճգնարան այցելածները, բացառությամբ Ե. Լալայանի, հիշատակում են երկհարկ վիմափոր սենյակներ՝ անտեսելով առաջին հարկը:

Գետնից մոտ 7,5 մ բարձրությամբ առաջին հարկը կազմված է երկու հատվածից՝ նախասրահից (Ա) և եկեղեցուց (Բ): Առաջին հարկ տանող աստիճանների մնացորդները գտնվում են նախասրահի արևելյան մասում, սակայն այսօր առաջին հարկ կարելի է թափանցել եկեղեցու խորանի արևելյան պատի մեջ առաջացած փլվածքի միջով: 6,10 x 3,70 մ առավելագույն չափերով անկանոն հատակագծով նախասրահը (Ա) իրենից ներկայացնում է արևելյան մեծ բացվածքով, դեպի ներս 2,60-ից մինչև 1,80 մ աստիճանաբար նվազող բարձրությամբ կիսավիմափոր անձավ, որի պատերին




մ առավելագույն չափեր: Եկեղեցու՝ շեղ քառանկյուն հատակագծով սրահն ունի հյուսիս-արևելք-հարավ-արևմուտք երկայնական առանցք, իսկ կիսաշրջանին մոտ հատակագծով խորանը՝ արևելք-արևմուտք ուղղություն: Երկայնական պատերի տակ վիմակերտ նստարաններով սրահը ծածկված է թեք քիվերից սկիզբ առնող տափակ թաղով, որն արևմուտքում ավելի ցածր է (2,41 մ), քան արևելքում (2,64 մ): Արևմտյան պատի կենտրոնում գտնվող դռան վերնամասում ամփոփված է քիչ խորությամբ կամարածև մեծ խորշ: Հատակից 0,35 մ բարձրությամբ բեմով խորանի հյուսիսային պատի մեջ գետեղված է կամարածև խորշ, արևելյան պատին՝ լուսամուտ, և նրանից ցած՝ մեկ այլ խորշ, որոնցից արևելյան պատի փլվածքի պատճառով պահպանվել են մնացորդներ: Եկեղեցու սրահի հարավարևմտյան անկյունը մինչև դռան հարավային կողմ այժմ փլված է, որի պատճառով եկեղեցին և նախասրահը ընկալվում են որպես մեկ ամբողջություն:

Դժվարամատչելի է մոտ 13 մ-ով գետնից բարձր երկրորդ հարկը, որի մուտքը բացված է ուղղահայաց ժայռի մեջ: Մուտքը գտնվում է առաջին հարկի



Ճգնարանի առաջին հարկում պահպանված նախասրահի (Ա), Եկեղեցու (Բ) տեսքը և հատակագիծը

պահպանվել են խորշերի հետքեր, իսկ արևելյան պատի եզրին՝ լուսամուտի վերին հատված: Եկեղեցու դուռը բացված է նախասրահի հյուսիսային պատի մեջ: Հատակին առկա է դեպի դուրս թափվող հորիզոնական առվակով եռանկյունաձև ավազանանման մեծ փոս: Եկեղեցին (Բ) միանավ հորինվածքով վիմափոր կառույց է և ունի 2,80 x 2,20



Ճգնարանի երկրորդ հարկում գտնվող միջանցքի (Գ), մեծ քառանկյուն սենյակի (Դ), փոքր քառանկյուն սենյակի (Ե) և բազմանկյուն սենյակի (Զ) հատակագիծը



Ճգնարանի երկրորդ հարկում գտնվող միջանցքը (Գ), մեծ քառանկյուն սենյակը (Դ) և փոքր քառանկյուն սենյակը (Ե)

եկեղեցու խորանի լուսամուտի վերևում և եկեղեցու հատակից բարձր է 5,40 մ-ով: Երկրորդ հարկի մուտքին հասնելու համար պետք է վիմափոր համալիրի հյուսիսային կողմից ժայռի տակ ձգվող նեղ կածանով բարձրանալ մինչև առաջին հարկի եկեղեցու արևելյան կողմը և մագլցել ուղղահիգ ժայռի մեջ փորված ձեռքի ու ոտքի համար նախատեսված փոսերով: Երկրորդ հարկը բաղկացած է հյուսիսից հարավ միմյանց մեջ բացվող միջանցքից (Գ), մեծ քառանկյուն սենյակից (Դ), փոքր քառանկյուն սենյակից (Ե) և բազմանկյուն սենյակից (Զ): Միջանցքը (Գ) նեղ հաղորդակցման միջոց է և ունի 2,83 x 1,46 մ առավելագույն չափեր, 1,54-1,67 մ բարձրություն, որը սկսվում է մուտքի անցքով և ավարտվում միջանցքին հաջորդող մեծ քառանկյուն սենյակի մեջ բացվող նեղ դռնով: Այն իր երկայնական առանցքով զուգահեռ է առաջին հարկի եկեղեցու

սրահի առանցքին, ունի հյուսիս-արևելք-հարավ-արևմուտք կողմնորոշում: Միջանցքի մուտքից բացվում են լճի համայնապատկերը և Առտեր կղզին: Սակավ լուսավորված մեծ քառանկյուն սենյակը (Դ)՝ 4,65 x 3,18 մ չափերով և 2 մ առավելագույն բարձրությամբ, անկանոն քառանկյուն հատակագիծ ունի: Այն իր երկայնական առանցքով միջանցքի առանցքի շարունակությունն է: Սենյակի հարավարևելյան անկյունում՝ առաստաղի տակ, նեղ կլոր լուսամուտ է բացված դեպի դուրս, իսկ հարավարևմտյան անկյունում՝ հատակին մոտ, պատի գրեթե ողջ բարձրությամբ գետեղված է կիսաշրջանաձև ձգված խորշ, իսկ խորշի հատակին՝ շրջանաձև փոքր փոս: Սենյակի կենտրոնական մասում՝ հատակին, փորված է 0,64 մ տրամագծով և 0,40 մ խորությամբ թոնրաձև փոս, որը, ինչպես գյուղական տների գլխատան մեջ, նախատեսված է եղել խա-



Ճգնարանի երկրորդ հարկում գտնվող փոքր քառանկյուն (Ե) և բազմանկյուն (Ձ) սենյակները


րույկի համար: Մակայն առաստաղը երդիկ չունի, այլ կլոր լուսամտուն է օդանցքի դեր կատարել: Այս սենյակը հավանաբար եղել է միայնակյացների սեղանատունը: Մեծ սենյակը փոքր քառանկյուն սենյակի հետ հաղորդակցվում է հարավային պատի արևմտյան կեսում բացված դռան միջոցով: 2,95 x 2,69 մ չափերով փոքր քառանկյուն սենյակը (Ե) ծածկված է 2,24 մ բարձրությամբ հարթ առաստաղով: Սենյակն առատ է լուսավորված արևելյան արտաքին պատի հարավային կեսում գտնվող, պատի գրեթե ողջ բարձրությամբ մեծ դռնաձև բացվածքի շնորհիվ: Այդ բացվածքից ձախ՝ հատակին հավասար, կիսաշրջանաձև փոքր խորշ կա, որից նեղ, կլոր անցք է բացված դեպի դուրս: Սենյակի արևմտյան պատի մեջ՝ հատակից 0,68 մ բարձր, թաղածածկ մեծ ու խորը բեմաձև խորշ է փորված, որի արևմտյան պատի կենտրոնում գտնվող անցքը

բացվում է 2,23 x 2,08 մ չափերով և 3 մ առավելագույն բարձրությամբ հորի մեջ: Կլոր անկյուններով ուղղանկյուն հատակագծով հորը վերնամասում ավելի նեղ է, քան ստորին հատվածում, որտեղ հորը մասամբ գտնվում է բեմաձև խորշի տակ: Այն հավանաբար ջրի ավազան կամ այլ նշանակության ամբար է եղել: Հյուսիսային ու արևելյան պատերի մեջ կան մի քանի խորշեր: Հյուսիսային պատի խորշերը փոքր են ու կանոնավոր, իսկ արևելյան պատինը՝ մեծ ու անկանոն: Հյուսիսային պատի և առաստաղի անկյան միջին հատվածում գտնվող փոքր կլոր անցքը բացվում է երրորդ հարկի եկեղեցու հատակի մեջ, այն հավանաբար նախատեսված է եղել երկրորդ հարկի տաք օդը եկեղեցի փոխանցելու համար: Սենյակի հատակին՝ հարավարևմտյան և հյուսիսարևելյան անկյուններում, նոր փորված անցքեր կան՝ կատարված գանձախույզ-

ների կողմից: Հարթ առաստաղի երկու մեծ դռնաձև անցքերը բացվում են երրորդ հարկի մեջ: Այդ անցքերից հյուսիսայինն ուղղանկյուն է, իսկ հարավայինը՝ սեղանաձև: Հարավային պատի վրայի հինգ աստիճանափոսերից բաղկացած վիմակերտ սանդուղքը բարձրանում է երրորդ հարկ սեղանաձև անցքի միջով: Ուղղանկյուն անցքը հավանաբար երկրորդ և երրորդ հարկերի միջև բեռներ փոխադրելու համար է նախատեսված եղել: Հարավային պատի արևելյան եզրից բացված դուռը տանում է բազմանկյուն հատակագծով սենյակ (Ջ): Այն ունի 2,76 x 2,51 մ առավելագույն չափերով 2 մ բարձրությամբ անկանոն հատակագիծ: Արևմտյան պատին կամարաձև խորշ է զետեղված, իսկ այդ պատի տակ՝ հատակից բարձր հարթության մեջ, երեք փոսեր են: Սենյակի հյուսիսարևմտյան անկյան պատի երկու անցքերը փոքր քառանկյուն և բազմանկյուն սենյակներն իրար են կապում: Հարավային պատի արևմտյան կեսում բացված է հատակից 0,66 մ բարձր, փոքր սենյականման 1,55 x 1,14 մ չափերով խորշ: Նրա առջև՝ սենյակի հատակին, երկու փոսեր են, առաջինը՝ շրջանաձև, իսկ երկրորդը՝ երկար ձգված ավազանանման, կապված միմյանց հետ նեղ անցքով: Ավազանանման փոսն ունի արտաքին պատից դուրս թափվող նեղ, կլոր ելանցք: Բազմանկյուն սենյակը հավանաբար միայնակյացների խոհանոցն է եղել, իսկ հարավային պատի սենյականման խորշը՝ պահեստային մասը: Երկրորդ հարկն ունեցել է կենցաղային և տնտեսական նշանակություն:

Երրորդ հարկը, որն ամենաբարձրն է վիմափոր համալիրի մեջ, հիմնականում ունեցել է պաշտամունքային նշանակություն: Այն բաղկացած է հարավից հյուսիս միմյանց մեջ դռներով հաղորդակցվող հնգանկյուն սենյակից (Է), քառանկյուն սենյակից (Ը), եկեղեցուց (Թ) և Նարեկացու ճգնարանից (Ժ): Հնգանկյուն սենյակն (Է) ունի անկանոն հատակագիծ՝ 3,70 x 2,78 մ առավելագույն չափերով, 2,20 մ առավելագույն բարձրությամբ: Հատակն աստիճանաբար բարձրանում է դեպի ներս: Սենյակի գրեթե կենտրոնում՝ հատակին, քառակուսի փոս է փորված, իսկ հյուսիսարևելյան անկյունում՝ օվալաձև փոքր փոս: Հարավային պատին բացված է բարձր խորշ, որի հատակն ավելի ցածր է սենյակի հատակից: Սենյակը լուսավորված է եղել արևելյան պատի մեջ գտնվող լուսամուտով: Արևելյան արտաքին պատը ողջ երկարությամբ, հատակից մինչև բարձրության կեսը փրված է, որի պատճառով առաջացած մեծ բացվածքի կենտրոնում լուսամուտի վերին հատվածն է միայն պահպանվել: Սենյակը ծածկված է հյուսիս-հարավ ուղղությամբ երկթեք առաստաղով: Բազմանկյուն սենյակը հյուսիսարևմտյան անկյունից և հյուսիսային պատի կենտրոնական մասից բացված երկու դռներով հաղորդակցվում է քառանկյուն սենյակի

հետ: Բազմանկյուն սենյակի հատակից 0,37 մ ցածր հատակով քառանկյուն սենյակը (Ը) ունի 4,65 x 3,00 մ չափեր և ծածկված է 2,01 մ բարձրությամբ հարթ առաստաղով: Հատակի արևելյան եզրի երկու դռնաձև անցքերից հարավայինը՝ 1,13 x 0,70 մ չափերով, երկրորդ հարկի վիմակերտ



ճգնարանի երրորդ հարկում գտնվող հնգանկյուն սենյակի (Է), քառանկյուն սենյակի (Ը), եկեղեցու (Թ) և Նարեկացու ճգնարանի (Ժ) հատակագիծը

սանդուղքով երրորդ հարկ բարձրացող ելանցքն է: Երկու անցքերն էլ հատակի մակերեսին ունեն ավելի մեծ պարագծով փորված եզրագիծ: Դրանք հիմք են տալիս ենթադրելու, որ անցքերը ժամանակին ունեցել են հատակի մակերևույթին հավասար փայտե փեղկեր: Հատակի արևմտյան հատվածում զետեղված է 0,96 x 0,87 մ չափերով ուղղանկյուն թոնրաձև փոս՝ երկու ուղղահայաց առվակներով: Արևմտյան պատի մեջ կան երեք տարբեր բարձրություններով անկանոն խորշեր: Արևելյան արտաքին պատի հյուսիսարևելյան անկյունում՝ առաստաղի տակ, բացված է նեղ լուսամուտ, իսկ հարավ-



Ճգնարանի երրորդ հարկում գտնվող հնգանկյուն սենյակը (Ե), քառանկյուն սենյակը (Ը) և Եկեղեցին (Թ)

արևելյան անկյունում՝ մեծ դռնաձև բացվածք: Երկու փոքր խորշեր կան հյուսիսային պատին՝ դրան աջ ու ձախ կողմերում: Հյուսիսային պատի դուռը

բացվում է 4,78 x 2,30 մ առավելագույն չափերով միանավ Եկեղեցու մեջ, որը քառանկյուն սենյակից ցածր է 0,38 մ-ով: Եկեղեցին (Թ) քարայրերում




Ճգնարանի երրորդ հարկում գտնվող եկեղեցին (Թ) և Նարեկացու ճգնարանը (Ժ)

բնակվող միայնակյացների պաշտամունքային կառույցն է: Միանավ հորինվածքով եկեղեցու սրահն ունի 2,93 x 2,30 մ չափերով 2,60 մ բարձրությամբ քառանկյուն հատակագիծ, որն ամփոփված է տափակ թաղով: Պայտածև հատակագծով, 0,45 մ բարձրությամբ բեմով, կամարակապ խորանի արևելյան պատի մեջ բացված է լուսամուտ, իսկ հյուսիսային և հարավային պատերի մեջ՝ մեկական խորշեր: Խորանի արևելյան պատի մեջ՝ լուսամուտից ցած առաջացած փլվածքի պատճառով գոյացել է մեծ անցք, որից առատ լույս է ներս թափանցում: Սրահի հյուսիսային պատին՝ դռան ձախ կողմում, պահպանվել է երկտող դժվարընթեռնելի արձանագրություն՝ ...կմցի / ...ուստն: Եկեղեցու պատերն ու

առաստաղը, ինչպես նաև խորանը ծածկված են եղել որմնասվաղով, որոնցից մնացորդներ են պահպանվել: Եկեղեցու սրահի հյուսիսային պատի արևելյան եզրին գտնվող դուռը բացվում է փոքրիկ մատուռ-աղոթատեղիի մեջ, որը, ըստ ավանդության, Սր. Գրիգոր Նարեկացու ճգնարանն է (Ժ): Երկար տարիներ այստեղ է ճգնել և ստեղծել իր սքանչելի «Մատյան ողբերգության» պոեմը:

Մատուռի՝ 1,09 x 1,07 մ չափերով, 1,86 մ բարձրությամբ փոքրիկ աղոթարահն արևելքում ավարտվում է հատակից 0,14 մ բարձրությամբ բեմով, 1,47 x 1,32 մ չափերով ուղղանկյուն խորանով: Աղոթարահն ու խորանն ունեն հարթ առաստաղ: Խորանն արևելք-արևմուտք երկայնական առանց-



Ճգնարանի կտրվածքները դեպի արևելք (Ա – Ա), արևմուտք (Բ – Բ), արևելք (Գ – Գ), արևմուտք (Դ – Դ), հարավ (Ե – Ե), հյուսիս (Զ – Զ), հյուսիս (Է – Է), հարավ (Ը – Ը) և հարավ (Թ – Թ)

քով աղոթասրահից շեղված է և ունի հյուսիս-արևելք-հարավ-արևմուտք կողմնորոշում: Աղոթասրահի արևմտյան պատի մեջ գտնվում է փոքր խորշ, իսկ հատակին եղել են փոքր փոսեր, որոնք,

ըստ ավանդության, Նարեկացու ծնկների և արմունկների հետքերն են՝ առաջացած անթիվ ծնրադրություններից: Խորանի հյուսիսային պատի մեջ զետեղված է կամարակապ խորշ, իսկ հարավային պատի մեջ գտնվող լուսամուտը բացվում է եկեղեցու հյուսիսային խորշի մեջ, որի շնորհիվ ճգնարանի խորանը լուսավորվում է եկեղեցու խորանից: Ճգնարանի խորանի արևելյան պատին

կից կա վիճակերտ սեղան, որից պահպանվել է վեմքարը, իսկ վերին հատվածը քանդված է հավանաբար գանձախուզության հետևանքով: Խանասորա Վարդանի նկարագրած խաչքարն այժմ գոյություն չունի¹⁹: Հատակին սփռված են սեղանի քանդված վերնամասի փշրանքները, որի պատճառով հատակի փոսերն այժմ նկատելի չեն:

Նարեկացու ճգնարանը և՛ նվիրական սրբավայր է, և՛ յուրահատուկ է իր ճարտարապետությամբ: Այն միջնադարյան վիճափոր ճարտարապետության յուրօրինակ մի համալիր է, որտեղ դասակարգված են առանձին հարկերում զետեղված կենցաղային և պաշտամունքային բաժինները:

¹⁹ Խանասորա Վարդանի հիշատակարանը, նշվ. աշխ., էջ 66:

ԶԱՐԵՀԱՎԱՆԻ (ԴԵՐԻԿԻ) ՍԲ. ԱՍՏՎԱԾԱՍՈՐ ՎԱՆՔԸ

Մամվել Կարապետյան

Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Չարեհավան (հետագայում ավելի ընդարձակ ընդգրկումով՝ Սալմաստ) գավառում է գտնվում վաղ միջնադարից գոյություն ունեցող և մինչև Ի դարի սկզբները կանգուն, իսկ այժմ ավերակների վերածված Աստվածամոր վանքը:

Տեղադրված է գավառանիստ Սալմաստ քաղաքից 17 կմ հյուսիս-արևմուտք՝ Մուհամմադի աշիրեթին պատկանող 35 տուն բնակիչ ունեցող քրդաբնակ Դերիկ գյուղից փոքր-ինչ վեր՝ գեղատեսիլ ձորակով հոսող վտակի աջ կողմում (N 38.14.117, E 044.34.781)՝ ծովի մակերևույթից 1715 մ բարձրության վրա՝ հարավահայաց ձորալանջին¹:

Վկայված է նաև Չարեհանդի Սբ. Աստվածամայր, Դերիկի Սբ. Աստվածածին, ինչպես նաև Դերիկ-Առնա բնակավայրերի նույնացմամբ՝ Առնավանք անուններով²:

Հակառակ Աղբակ-Սալմաստ հնագույն ճանապարհին մոտ գտնվելու հանգամանքին և մինչև 1940-ական թվականները հայահոծ ողջ Սալմաստ գավառում հանրահռչակ ուխտատեղիի համբավին բազմադարյան այս վանքը, այնուամենայնիվ, երբևէ չի արժանացել տեղազիր հեղինակներից և ոչ մեկի ուշադրությանը: Հենց նշյալ հանգամանքով էլ պայմանավորված՝ ներկայումս մենք չենք տիրապետում վանական համալիրի՝ երբեմնի կանգուն շինությունների ճարտարապետական արժանիք-

ները նույնիսկ ամենահամառոտ կերպով նկարագրած որևէ գրավոր տեղեկության, իսկ առկա սակավաթիվ վկայություններն ավելի պատմական բնույթի են և առնչվում են 1880-1890-ական թթ. վանքում պատահած առանձին դեպքերին:

Հայտնի է, որ 1889 թ. վանքում հաստատվում է խիզախ երիտասարդ Մովսես Միքայելյանը. 1889-ին այս լքված ու կիսավեր վանքում հաստատվել էր Մովսես Միքայելյան անունով քաջ երիտասարդը, որն Ատրպատականի առաջնորդ Մխիթարյանի համաձայնությամբ ձեռնարկում է վանքի շենացման գործը. «...մինչև անգամ բարեշնորհ անձանց միջոցով նորոգվում են խարխուլ խրճիթները և ժամանակների ընթացքում քայքայված եկեղեցու գմբեթը...», սակայն քրդերի հետ կռվում Մովսեսը զոհվում է 1892 թ.³:

1893 թ. վանքում վանահայր է հիշվում Բագրատ վարդապետ Թավաքալյանը, ով փորձում է կարգի բերել վանքի նյութական խնդիրները⁴:

1894 թ. վկայվել է, որ վանքը տիրապետում էր հնուց ի վեր իր անունով վավերացված որոշ կավածքների. «...վանքի մօտ կան 3 հայ և մի քիչ հեռու 10 տուն քիւրդ բնա-



Բագրատ վարդապետ Թավաքալյան

1 Վանքի տեղադրության մասին նշվել է. «...վանքը գտնվում է Սալմաստի կենտրոնից շատ հեռու, և ընկած է այն ձորի մեջ, որ տանում է դեպի Տաճկաստանի Հաղբակայ գաւառը և կոչվում է «Դուշման-դարա» (թընամու ձոր): ...վանքից 20 րօսէ հեռաւորութեամբ դէպի արևմուտք, նեղ ձորի մէջ գտնվում է «Վերին Դերիկ» կոչված քրդաբնակ գիւղը, որի մօտ բխում են երկաթ-հանքային ջերմուկներ 25-75 աստիճան տաքութեամբ» («Մշակ», 1891, № 126, 7 նոյեմբեր, էջ 3); «...վանքից կէս ժամ հեռաւորութեան վերայ գտնուող, քրդաբնակ Դերիկ գիւղ...» (Ալեոսու, Ճանապարհորդական Յիշողութիւններս Պարսկաստանից և Տաճկաստանից (Չուղայից մինչև Մուշ), «Արաքս», 1893, գիրք Ա, էջ 26); «գավառումն է և Դերիկայ ս. Աստուածածնի վանքը Տաճկաց սահմանագլխին» («Արձագանք», 1893, № 9, էջ 2-3); «Վանք տանող ճանապարհը նախ մտնում է քրդաբնակ Նագրավա (Նագար-աւան) գիւղը, ապա վանքը: Այդտեղ են հայաբնակ Ասլանիկ, Հախվերան, Համբանաւան, Քեաթիկ (Կեաթիկ) գիւղերը» («Նոր-Դար», 1894, № 17, էջ 2); «Վանք տանող ճանապարհը դուրս էր գալիս Մավրա գյուղից» («Մշակ», 1894, № 98, 27 օգոստոս, էջ 1-2):

2 «...Չարեհանդայ սուրբ Աստուածամօր մենաստանը, որին կոչում են քրդական լեզուով «Դերիկ», որ ասել է «Փոքր եկեղեցի» («Նոր-Դար», 1894, № 17, էջ 2):

3 «Մշակ», 1892, № 66, 13 յունիս, էջ 3: Վանքի գմբեթի և սենյակների նորոգությունների մասին վկայվել է նաև հետևյալը. «...մի քանի տարի սրանից առաջ Սալմաստի ժողովուրդը մի քանի հոգի վերանորոգել էին խոնարհված կաթողիկէն և շինել էին երկու հատ փոքրիկ խրճիթներ...» («Մշակ», 1891, № 126, 7 նոյեմբեր, էջ 3):

4 Տեղեկագրում մասնավորապես նշված է. «Չարեհանդի Ս. Աստուածամոր մենաստանի (Դերիկի) վանահայր Բագրատ վ. Գեորգ-Թավաքալեանից ստացանք տպագրած հաշիւեցուցակ օգուտ վանքի նիւրատութեանց և ելքի: Այդ հաշիւից հարկ ենք համարում մի քանի կէտեր բերելու, մանաւանդ հասարակութեան մէջ մի քանիսը աշխատում են տարածել իբր թէ վանահայրը հաւաքել է Թարիզում 600 թուման (1800 ռ.) և վատնել ռուսաստանցի հայ վարժապետների հետ: 49-ը ազգանուններով յիշած նիւրատուներից հաւաքած է 753 ղոան, որից ծախսած է 363 ղոան 90 կոպ. առձեռն մնում է 383 ղոան 10 կոպեկ, սրա վրայ աւելացնելով վանահօր աջահամբոյր արդիւնքի մնացորդը՝ 49 ղոան և 20 կոպեկ, պատրաստի դրամների գումարն է 537 ղոան 30 կ., որից հաշիւը տպագրելուց յետոյ՝ ծախսած է վանքի անհրաժէշտ պարագաների համար 12 թուման» («Տարագ», 1893, № 26, էջ 419):



Ջարևանդի Ար. Աստվածամոր վանքի մնացորդների ընդհանուր տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ 2011 թ.)

Պարսկաստանում 8 հոգով լաւ դիրք բռնելով, հարիրաւոր պարսիկ գօրքերի դիմադրել և 70 մարդ կոտորել է: Եւ եթէ դերիկցիները քաջ, լաւ հրացան ձգող չլինեն, ինչպէ՞ս կարող են Գուշմանայ լեռներում, քիւրդերի մէջ վանք պահել. այդ պատճառով 100 գօրք տուէք և պատասխանատուքիւնը ձեր վրայ առէք: Տասն օր գրգռելուց յետ, փաշան համոզում է Աղբակի մարզկեցիների ցեղապետ Շարաֆին, որի ըայեաներից էին 5 սպանված քիւրդերը: Անմեղ և անվեհեր դերիկցիներն արդէն այդ չարագուշակ լուրն առել էին. իսկ ուխտատուներն զգոյշ էին վարվում, միշտ զինված երթալով վանքը: Յուլիսի կիսին մօտ այլ ևս ոչ մի կասկած չմնաց, որ արշաւանքն անխուսափելի է: Գիշեր ցերեկ վանքը լրտեսվում էր, Դերիկի երկու ճանապարհին էլ Բահրի փաշայի սպառազինված քիւրդերով բռնված էր ամբողջ 15 օր: Դրսի հետ յարաբերութիւնը բոլորովին կտրվեց, այլ ևս ոչ մի անցորդ չէր երևում. կատարեալ պաշարման դրութիւն էր երկար ու ձիգ օրեր: Պատահական լրաբերներն առասպելներ էին պատմում. «Շարաֆն այսօր, երեկոյեան դէմ, վաղը, երրորդ օրը կը գայ 50, 100, 500 մարդով»: Մի բուռն դերիկցիք տագնապի մէջ են: Վանքի Վերին Դերիկ կոչված գիւղի քրդերը սարսափից մի գիշեր տները թողին, փախան, որովհետև վտանգաւոր լուրեր էին առել: Վանքի 3 տուն գիւղացիներից մէկն էլ իր կինն ու երեխաներն առաւ քրդերի հետ փախաւ: Դերիկում մնաց մօտ 35 հոգի՝ 4 գիւղացի, 5 միաբան և 12 ուխտաւոր, մնացածը կանայք և երեխաներ: Ուխտաւորներին վանքի փոխանորդ Սարգիսը պաղա-

տանքով պահեց 5-6 օր, ի նկատի ունենալով վտանգը: Աչքի առաջ ունենալով մօտաւորտ արհաւիրքը, գիշեր-ցերեկ զինված պահապաններ է դրվում երեք որոշեալ տեղեր, որոշեալ «պարօլով»: Լրտեսվում է մօտակայ լեռները: Մի բուռն դերեկցիների տագնապը քանի գնում, աճում է: Շրջապատված սահմանագլխի հսկայ Գուշմանի լեռներով ու խոր-խոր ձորերով, անդունդներով, ընկած աւազակ քիւրդ գիւղերի, մշտական գործող հրոսակների մէջ՝ ամեն մարդ իր գլխից արդէն ձեռք է վերցրած: Ոչ մի Սալմաստցի չի համարձակվում օգնութեան հասնել: Իսկ փաշան, նստած սահմանագլխում, ուզում է բօլգարական տեսարան սարքել. խփում է ոտները գետնին, մօրուսը փետում և Դերիկի ասպատակների գլուխները պահանջում: Չուր էին պաշարվածները անհամբեր նայում դիտակով ճանապարհներին. օգնութիւն չկայ, ո՛չ մի Սալմաստցի հայ չուգեց իր սրբավայրը պաշտպանելու վեր կենալ, թէև ամենքը գիտէին գալիք վտանգի մասին: Դերիկցիները յոյսերն իրենց վրայ դրին՝ պաշտպանել վանքը մինչև վերջին շունչը: Սկսվեց ուրախ երգերով տենդային աշխատանք. կրում էին շալակով աղիս ու քար, ցելս շաղախում. երկու օրուայ մէջ երեք փոքրիկ ամրութիւններ շինվեցան, որովհետև փոքրիկ վանքը գուրկ էր որ և է ամրութիւնից: Յուլիսի 21-ի առաւօտը ամեն մարդ հանգիստ, բայց զինված իր գործին էր: Յանկարծ պահապանը հրացանաձգութեամբ նշան տուեց: Հեռուից երևացին մի խումբ ձիաւորներ և սրարշաւ անցան վանքի արևելեան բլուրները, դէպի վանքի և գիւղի փոքրիկ նա-

խիրի կողմը, որն այդ օրը սովորականից քիչ հեռու և տարաբախտաբար բլրի ետևից էր: Մի քանի վարկեան ընդհանուր շփոթութիւն տիրեց, բայց շուտով ամեն մարդ իր տեղը բռնեց: Թշնամին երևաց. դա սուլթան Համիդի «Համիդիէ» գունդն է: Սկսում ենք հրացանաձգութիւնը: Հապա ի՞նչ տեսնենք լաւ է՝ միաժամանակ հրացանաձգութիւն եղաւ քրդերի կողմից: Բայց ի՞նչ. գնտակ չէ, այլ կարկուտ, կարկուտ է թափվում մեր գլխին: Կրակ են անում և՛ արևմտեան, և՛ հիւսիսային, և՛ արևելեան լեռներից: Ամեն ժայռի, ամեն սարի գլխից ծխի սպիտակ քուլաներ են, որ բարձրանում են դէպի երկինք. գնտակների վզոցն ու սուլոցն ականջ են խլացնում, անգութ սարերին արձագանք տալիս: Շրջապատված ենք երեք կողմից բազմաթիւ քրդերով. ճիշտ թուի մասին ոչինչ չգիտենք: Մեզ թում է, թէ հազարներով ենք շրջապատված: Սպիտակ քուլանները բարձրանում են ու բարձրանում և աւելի մօտենում: Մենք աշխուժութեամբ պատասխանում ենք: Վանքում իրարանցումը սաստկացաւ՝ մի կողմից երեխաների ճիչն ու աղաղակը, միւս կողմից կանայք ձեռքերն իրար շրպպացնում, ծնկներին տալիս ու շփոթված դէս ու դէն վազվզում և տուրակներով սև օրուայ համար հաւաքած իւղը, պանիրը ու ալիւրը վանքը բերում շտապով: Վժժում են մեր գլխի վրայ մուխաննաթ սուլթանի դրկած գնտակները: Նայում ենք դիտակով հեռու, հիւսիսային բարձր լեռներից հերոսակային խմբերը ճանճի նման իջնում ու իջնում են դէպի մեզ և խոր ձորերում անհետանում... Թշնամին մօտենում է: «Կոտորած, սարսափելի կոտորած... կանայք, օրիորդներ...» մրմնջում էր ամեն մէկը: Շփոթութիւնն ու պանիկան փոքր ժամանակ տիրեց ամենքին: Ձիաորները կատաղութեամբ սլանում էին մէկ ձորից միւսը, մէկ բլուրից միւսը և մի ակնթարթում մեր աչքից անհետանում: Նրանք միշտ դիմում էին մեր թոյլ կողմը, վանքի վրայ յարձակւելու համար: 100-ից աւելի ձիաորներ, բոլորը 300-400 հոգի, բարձր լեռները բռնած, իսկ մենք, մի բուռը մարդիկ, թով 21 և ցած տեղում, նրանց ոտների տակ, չորս տեղ դիրք բռնած: Թշնամու մէջ էր նաև Բահրի փաշայի խարդախութեամբ սուլթանի հաւատարիմները, այն է՝ սահմանագլխի Խանիկ գիւղի Կորդօնի թուրք հարիւրապետը 50 ծպտեալ զօրքերով: Ի՞նչ էր մնում մեզ անել,– դիրքերից դուրս չգալ և պաշտպանվել մինչև վերջին ընկերոջ մեռնիլը: «Տղերք, ձեզ մեռնիմ, որդիներս, նախիրը...» բղաւեց լեռնական մայրը: Փշում է դերիկցիների փոքրիկ փողը, երգում ենք «ամենայն տեղ մահը մի է...»: Արիութիւն եկաւ ամենքիս վրայ, տագնապը չբացաւ կորաւ: Քիրդերը հեռուից շրջապատել են նախիրը և գնտակոծում են 16 տարեկան նախրապանին ու նրա փոքրիկ եղբօրը (11 տարեկան), որն այդ օրը իր քէֆին գնացել էր նախրի մօտ: Ամեն մի դերիկցի դարձել էր տասը, տեղում էին նախրի շուրջը (1

վերստ հեռու) մեր գնտակները անվրդով, ահա բլուրը շուռ եկան փոքրիկները և վագում են դէպի մեզ, մեր գնտակները սաստկանում են, անպատկառ մուխանաթները չեն կարողանում մօտենալ նրանց: Ուրախութեան արցունք է երևում... Ամբողջ մի ժամ չարչարվելուց և մի քիւրդ գոհ տալուց յետոյ, քշեցին նախիրը: Նրանց փափագը այդ մի քանի սևապոչ տաւարը չէր, այլ ուզում էին զբաղեցնել, գրգռել և մեզ դիրքերից դուրս հանել, որ կարողանան յարձակում գործել. խումբ-խումբ ձիաոր հրոսակները դարան մտած մօտիկ ձորերում, սպասում էին նշանի: Եւ քիչ մնաց յաջողէին: Նախիրը քշելու ժամանակ մեր ընկերներից երկուսը գլխաբաց քրտնամխած դուրս թռան իրանց դիրքերից և սլացան դէպի նախիրը. որոշած էինք նախրի ետևից չգնալ և որպէս զի կորստաբեր սխալ չանենք (կարող էին երկուսին հետևել և ուրիշները), խնդրելով և յանդիմանութեամբ գրգռածներին ետ դարձրինք: Նախիրը քշեցին: Երեխաների ողջ գալը մեծ ուրախութիւն պատճառեց: 3 ժամ անդադար սուլում ու սուլում էր դերիկցիների անխարդախ և անշեղ գնտակը... Նրանք պաշտպանում էին ահագին խառնի ճահանջի դէմ հայի սրբավայրը, Դերիկը, որի հետ կապված են անմոռանալի գործեր... քաղցր յիշողութիւններ... Նրանք պաշտպանում էին հայ կնոջ, աղջկայ նամուսը... Վախկոտ, վատ ասպատակները տեսան անդրդուելի, անվեհեր դիմադրութիւն, նրանց առաջ խաղալը դադարեց: Մենք բոլորս անվնաս էինք: Ապստամբների գլուխ տանողները չուզեցին ճակատ առ ճակատ կռուի բռնել: Առաւօտեան ութ և կեսից սկսվեց կռիւր և կէս օրից մօտ կէս ժամ անցած դադարեց:

Համիդ սուլթանի «Համիդիէ» գունդը քիթ, ընդ քիթ ստացաւ: 400 հոգու հրոսակային խումբը, որը իր ձեռքի տակ ուներ ամեն դիւրութիւն. լեռ, ձոր, քիւրդ գիւղեր, պաշար, մինչև անգամ թուրք զօրք, համարձակութիւն չունեցաւ մի խումբ մարդոց վրայ յարձակվել: Միւս առաւօտ լրտեսեցինք մօտակայ լեռները, ոչ ոք չկար, քիւրդերը հեռացել էին ամօթապարտ: ...Լսեցինք, թէ նախիրից մի էզ գոմէշ սատկել է, լաւ կանի Շարաֆ, եթէ նրա արիւնաթաթախ գլուխը ներկայացնի կատաղած փաշային ասպտամբի գլխի փոխարէն: Հարևան քրդերի պատմելով՝ պաշարող քրդերի կողմից վիրատրվել են ոչ թէ 3, այլ 7 հոգի, բայց այդ ամեն կերպ աշխատում են ծածկել⁷:

Դեպքի առնչությամբ նաև նշվել է, որ հուլիսի 21-ին Վանի Բահրի փաշան թուրք երկու ցեղերի ուղարկում է Դերիկի վանքն ավերելու (գոհված 5 քրդերի փոխարէն) և վանքում եղածների գլուխներն էլ բերելու: Քրդերը 300 հոգով հարձակվում են վանքի վրա, որը պաշտպանում էին 20 հրացանավոր հայեր: Քրդերին հաջողվում է միայն վանքի

⁷ «Գրօշակ», 1894, № 12, էջ 5-6:

նախիրը քշել, տանել (քանի որ վանքից հեռու էր), չնայած այդ էլ չտալու համար Դերիկի հայերը դիմադրություն են ցույց տալիս: Նրանք զգալով, որ վանքին չեն կարող դիպչել, նահանջում են նախիրը փախցնելով: Հայերից ոչ մեկը չի վնասվում⁸:

Այս ընդհարման մանրամասները քննության ենթարկած պարսից իշխանությունները 1898 թ. հեքթում են Դերիկի վանքը զինյալ հայ հեղափոխականների ամբողջ վերածված լինելու մասին թուրքական իշխանությունների պնդումները⁹:

Դերիկում պատահած հիշարժան հաջորդ մարտը տեղի է ունենում 1896 թ. գարնանը. «...բոլոր փորձած հայդուկները զինված էին հրացաններով: Լուսաբացին՝ խումբը, 10 օրայ տաժանելի ճամբորդութեն մը յետոյ, կը մտնեայ Դերիկի Ս. Աստուածածին վանքին, որ արդէն աւերակ էր և անբնակ: Սահմանագլխի քիւրդերը (մագրեկցիք, շրկակներ, մամըտանցիք) երբ կը նկատեն, որ ֆիտայիներու խումբը մտաւ վանք, իսկոյն կը պաշարեն վանքի վրա իշխող բարձունքները և գլխաւորաբար Սպիտակ սարը: Կռիւր կը դառնայ անխուսափելի: Չինված հայդուկները կը գրաւեն պարիսպները և վանքի հիւսիս-արևելակողմի բլուրները, իսկ բոլոր անգէնները կը մտնեն տաճարը: Կռիւր սկսելէ առաջ հայդուկ Շէրօն կը մտնեայ Դերիկի վանքի մէջ թաղւած իր զինակից ընկեր՝ կաճեացի Չաթօի գերեզ-

մանին և համբուրելով՝ կրտ. –Չաթօ ջան, եթէ աստուած տայ, որ Հայրենիքին դուրբան լինիմ, թող ես ալ քո կողքին պառկիմ, ազիզ ընկեր: Եւ արևածագից կռիւր կը սկսի: Քիւրդերը ուժեղ յարձակումով մը, վայնասուններ բարձրացնելով կը փորձին յառաջանալ: Հայդուկները հերոսաբար կը դիմադրեն: Կռիւր աւելի կը սաստկանայ, քիւրդերը ամէն կողմէ մեծաքանակ կոտորներով կը յառաջանան: Շէրօն, յանկարծ, դիրքէն դուրս գալով յարձակման կանցնի, բայց իսկոյն կիյնայ թշնամու գնդակով և կը մեռնի (այսպիսով, կը կատարի Շէրօի կտակը, և անոր մարմինը կը թաղեն Չաթօի գերեզմանի մօտ, կողք-կողքի): Կռիւր ընթացքին կը սպանին նաև կարճկանցի Մանուկը և Յակոբը: Քիւրտերու յարձակումներն այնքան կուժեղանան, որ հայդուկները



Դերիկի վանքում ամփոփված Շատախի Կաճեո գյուղից սերող մարտական անբաժան երկու ընկերները՝ Չաթոն և Շերոն (արտատպություն «Յուշամատեան Դայ Յեղափոխական Դաշնակցութեան» ակբում-ատլասից, հ. Ա, Լոս Անճելէս, 1992):

8 «Մշակ», 1894, № 96, 23 օգոստոս, էջ 3: Դեպքի կապակցությամբ շուրջ մեկուկես տարի անց նշվել է. «Մարզկցիների ցեղապետ Շարաֆը, որը անցեալ տարի 500 հոգով յարձակեց Դերիկի վրայ և ամօթապարտ յետ դարձաւ, այս տարի ևս իր մօտ 400 մարդկանցով, նախապէս թալանելով և աւերակ դարձնելով հայաբնակ Բոնախի գիւղը, յարձակեց Կօթուրի վրայ, որը սահմանագլխի վրայ Պարսից բերդն է համարուած: Հայերը և պարսիկները միացած ամբանում են բերդում, վճռելով մինչև վերջին շունչը դիմադրել Շարաֆի ոյժին: 9 ժամ կռիւ մղելուց յետոյ, Շարաֆը երեք դիակ թողնելով՝ ստիպուած է լինում գլխակոր յետ քաշել, որովհետև պարսիկ խանը զինում է հայերին կառավարական հրացաններով և գործի է բերում թնդանօթներն անգամ: Հայերից թեթև վիրատրվում է կօթուրցի Գրիգորը...» («Դրօշակ», 1896, № 3, էջ 20):

9 «Թէիբանում տեղի ունեցած այս անյաջող խարդաւանքից յետոյ սկսվում են Ատրպատականի շահատակութիւնները և Սալմաստ, տաճիկ կառավարութեան նենգ ու խարդախ արշաւանքների ասպարէզ է դառնում: Քանի անգամ զրպարտուեցաւ Սալմաստ, որպէս հայկական ահագին բանակների կենդրոնավայր և որպէս մեծաքանակ զենքերի ու թնդանօթների մթերանոց, քանի, քանի անգամ ընկիչ պաշտօնեաներ դրկուեցան Սալմաստ, այդ ամենը ստուգելու համար, սակայն ամեն անգամ էլ զուր գրպարտութիւն և ամբաստանութիւն լինելը ապացուցուեց: Թողնենք այն, որ Դերիկի դէպքի, հայերի ու քիւրդերի մէջ տեղի ունեցած 94 թ.-ի ընդհարումից վերջ, Իսահ-խանի կատարած մանրախոյզ քննութիւնները ապացուցին թէ՛ Դերիկի վանքը հեռի է տաճկաց կառավարութեան ցոյց տուած «հայկական մի ամբողջ» լինելուց և այնտեղ «զինուած յեղափոխականների» փոխարէն բնակվում էին մի երկու պառաւ պահապան: Այս ամեն իրականութիւնները ստորագամը թիրքաց դեսպանին յայտնելուց վերջ, աւելացնում է, «յոյս ունիմ թէ, այսուհետև տրամադիր չպիտի լինիք ձեր ամեն լաժծին հաւատ ընձայելու» («Արաքս», 1898, Ա, ութերորդ տարի, Ս. Պետերբուրգ, էջ131-133):

ստիպուած կը լինին թողել իրենց դիրքերը և ամրանալ վանքի մէջ: Քիւրտերը դիւրաւառ բռնկուած ցախեր, փայտեր և քարի մեծ մեծ կտորներ կը ձգեն վանքի մէջ հրդեհ և սպանութիւն առաջացնելու նպատակով: Մինչև այս, մինչև այն, մութը կիյնայ, և հայդուկները կորոշեն պատռել թշնամու պաշարման շրթան և անցնել: Սակայն խմբապետ Նիկոլ-Դումանը կը տանջւեր յողացաւով և չէր կրնար փախչել: Ի՞նչ ընել: Մէջտեղ կուգայ կտրիճ Լորթօն (Հարություն Համբարձումյան) և հիւանդ Դումանը կը շալկէ: Անգէնները մէջտեղ կը մնան, իսկ բոլոր հրացանատրները՝ չորս կողմէն: Լորթօի մէջքին բազմած Դումանը ուժեղ ձայնով կաղաղակէ. –Տղերք, կրակ, յառաջ...: Բոլորը միասին կը կրակեն. քիւրտերը խուճապի մատնելով կը փախչին, իսկ հայդուկներու խումբը թշնամու շրթան պատռելով՝ կը հեռանայ: Լորթօն կը պատմէր, թէ ինչպէս Դերեկի Սպիտակ սարի այդ ահագին վերելքի տարածութիւնը յաջող կերպով, առանց յոգնելու, բարձրացեր էր Դումանը շալակին: Խումբը կը հասնի Սալմաստ, բայց փոխանակ հայոց գիւղերը երթալու, սխալմամբ կը կմտնի Հին Քաղաք (Քէօհնա Շահար) գիւղը, և թուրքի մը մատնութեամբ բոլորն ալ կը ձերբակալին պարսիկներու կողմէ և կը բանտարկւին Դիլմանի մէջ: Դումանը, ի վերջոյ, կա-

շառքով կազատվի, իսկ միսները մեկ քանի ամիս կը մնան բանտի մէջ և կազատին միայն Վանի 1896 թի յունիսի կռիւներէն յետոյ»¹⁰:

1910-ական թթ. վանքը հայտնվում է քուրդ ցեղապետ Իսմայիլ աղայի (Մմկոյի) տիրապետութեան տակ: Ապօրինությունը կանխելու և վանքը հայերին վերադարձնելու ակնկալությամբ Սալմաստի հայերը պարսկական իշխանություններին են ուղղում բազմաթիվ բողոքագրեր, սակայն դրանք բոլորն էլ մնում են անհետևանք, ուստի 1914 թ. Դերիկից քրդերին հեռացնելու պահանջով հերթական գրությունն է հղվում Թեհրանում ռուսական հյուպատոսին¹¹:

Սալմաստի 7 գյուղերի 40 ներկայացուցիչների ստորագրություններով 1914 թ. փետրվարի 12 թվակիր նամակում մասնավորապես նշված էր. «Մենք ներքոյ ստորագրող Սալմաստի հայութեան ներկայացուցիչներս սրանով ձերո գերազանցութեան դիմելով, համարձակում ենք ձեր բարձր ուշադրութիւնը հրաւիրել հետևեալ խնդրի վրայ.

Արդօի քուրդ ցեղապետ Իսմայիլ-աղան, որն իր բազմաթի ու ծանր չարագործութիւնների պատճառով Սալմաստից վտարելով Կոթուրումն էր անցկացնում 6-7 տարիներից ի վեր, անցեալ տարի, չգիտենք ինչպէս, կարողացաւ վերադառնալ Սալմաստ և պետական ծառայութեան կոչել: Նա բացի մեր կրօնական

միրական զգացումները վիրաւորելուց, մեզ միթական մեծ վնասներ էլ է պատճառել: Չմայած պետական ծառայութեան մէջ է գտնուում Իսմայիլ-աղան, հետևաբար պէտք է և պարտաւոր է, որ օրէնքին հակառակող ընթացքի մէջ գտնւելուց խոյս տայ, սակայն նա այս տարի յանդգնութիւն ունեցաւ Սալմաստում գտնուող «Դերիկի» ս. Աստուածածին կոչած վանքը գրաւել, այնտեղից հեռացնելով հայ հոգևոր իշխանութեան այնտեղ նշանակած մօտ 15 տուն խաղաղ, երկրագործ քրդերին, այս մասին Ատրպատականի հայոց բարձրապատիւ առաջնորդի միջոցով մենք մի երկու խնդիր ենք ներկայացրել Խոյի ռուսաց պ. հիւպատոսին, սակայն անցել է աւելի քան 5 ամիս, և մենք մի որևիցէ պատասխան կամ բաարարութիւն չենք ստացել:

Յիշեալ վանքն ունի երկու գիւղ, ընդարձակածաւալ արօտատեղիներ և աղբիւն (ձմերային արեգոլէմ արօտատեղիներ), որոնք շահագործւելով՝ ամեն տարի վանքին ահագին օգուտներ էին բերում, իսկ այժմ վանքը բոլորովին զրկւել է որ և է եկամտոսից: Բացի դրանից, վանքում նստող աւդօիներից սարսափից Սալմաստի հայ ժողովուրդը չի համարձակւում այդ մենաստանը ոտ կոխել և սա ոչ թէ դատարկ երկիւղից է, այլ ինքն Իսմայիլ-աղան իրենց թոյլ է տուել, անգամ գրաւոր կերպով և ամենայնադուրս ոճով սպառնալու, որի համար հայ ուխտատուները սիրտ չեն անում ուխտի գնալու վանքը, որով ուխտատուների կողմից տրւելիք արդիւնքից էլ է զրկւել վանքը...: Նա այս տարի վանքին վնաս է պատճառել ամենապակաս 3000 թուման:

Արդ, դրանով դիմելով ձերո գերազանցութեան, խնդրում ենք, որ Սալմաստի հայ ազգաբնակչութեան այս խոնարհ խնդիրը ձեր բարձր ուշադրութեանն առնելով, պարտ ու պատշաճը տնօրինելու բարեհաճէք...»¹²:

Տասը տարի անց՝ 1924 թ., Դերիկի Սբ. Աստվածածինը հիշվում է որպես գավառի միակ վանքը, քանի որ պաշտամունքային մնացյալ 12 շինություններից 10-ը եկեղեցի էր, իսկ 2-ը՝ մատուռ¹³:

Ըստ ամենայնի, Ատրպատականի հայոց թեմն այդպես էլ չի կարողանում վանքը կառավարելու և պահպանելու որևէ արդյունավետ միջոց գտնել, ուստի ստեղծված իրավիճակում ընտրում է վատթարագույն տարբերակը. վաճառում է վանքապատկան կալվածքը: Այս մասին 1930 թ. փետրվարի 19-ին Էջմիածնի Հոգևոր խորհրդին է զեկուցում Արսեն Ծ. վարդապետ Գլըտճյանը. «Ն. արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան վաճառել է Դերիկի վանքի կալվածքը՝ շուրջ 1500 արտաւար վարելահողով, հանքային ջրերով և արօտատեղերով, գնողն է մի քուրդ, վճարել է իբր թէ 500 թուման...»¹⁴:

10 **Մամիս**, Մեր գոհերը, «Գրօշակ», 1927, № 6, էջ 179-180: Ի դեպ, խմբի մէջ էր նաև Հովհաննէս Ավետիսյանը, ով «1896 թիւն, դեռ Վանի կոտորածից առաջ, դաշնակցական խմբի հետ անցնում է Պարսկաստան, որտեղ Դերիկի կոյից ազատւելով՝ նոյն խմբի հետ Սալմաստում 1-1/2 ամիս տանջւում է բանտում...» («Գրօշակ», 1900, № 4, էջ 58): Հայտնի է, որ երեք տարի անց հայ վրիժառուները սպանում են հիշյալ կռվում քուրդ հրոսակի առաջնորդին. «...1899 թ. Սալմաստ եկաւ Ամիր Ջաշրիւն իր ծառայի ուղեկցութեամբ: Սա 1896 թ. շրջապատել էր Դումանին Դերիկի վանքում: Երբ նրա գալն իմացայ՝ լուր ուղարկեցի Մահլամ մեր տղաներին, որ ահաբեկեն, որ եւ կատարեց Դարմօն իր մի քանի ընկերներով, Մահլամ գիւղի մօտերը» (**Ն. Հանգոյց**, Սամսոնի յուշերը, «Հայրենիք», Պոսթրն, 1924, № 6, էջ 134): Հարկ է նշել, սակայն, որ Ամիր-Ջամշինի սպանության մասին գոյություն ունի բոլորովին այլ մեկնաբանություն ևս, համաձայն որի՝ ոչ թե հայերը, այլ հենց քրդերն են նրան սպանել. «Մահմանակից պարսկահպատակ քիւրդերի մէջ վերջին երեք ամիսները տեղի ունեցան մի շարք հետաքրքիր երևոյթներ, որոնցից յիշատակենք յայտնի ցեղապետ Ջաֆար աղայի արիւնահեղ ընդհարումները Մահմադ աղա ցեղապետի հետ եւ Դերիկի մօտերքում բնակող Ամիր-Ջամշին ցեղապետի սպանութիւնը մի ուրիշ քիւրդի ձեռքով: Այս ցեղապետներից առաջինը՝ Ջաֆար աղան՝ 97 թիւն Խանասարի արշաւանքի ժամանակ օգնութեան էր գնացել Շարաֆին եւ մի վերք էր ստացել ճակատին, սակայն այժմ ուրիշ քիւրդ ցեղապետների հետ դժգոհութիւններ ունենալու պատճառով հայերի հետ աւելի հաշտ է, քան եղել է երբեմնից: Սպանւած Ամիր-Ջամշինը այն ցեղապետն էր, որ 96 թիւն Դերիկում կռի էր բռնել մեր խմբապետ Դումանի մարդկանց հետ, այդ կռումն էր, որ, ինչպէս յայտնի է, գոհեց ժողովրդական հերոս Շերօն» («Գրօշակ», 1899, № 3, էջ 42):

11 **Պատրիկեան Վ.**, Հայերի բողոքը Սըմկոյի դէմ, «Հորիզոն», 1914, № 32, 11 փետրարի, էջ 3: Տե՛ս նաև՝ նույնի, Դերիկի վանքի խնդրի շուրջը, «Հորիզոն», 1914, № 109, 23 մայիսի, էջ 4:

12 **Պատրիկեան Վ.**, Եօթ գլխատր գիւղերի դիմումը ռուսաց դեսպանին, «Հորիզոն», 1914, № 41, 25 փետրարի, երեքշաբթի, էջ 3-4:
13 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 4079, ք. 1:
14 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 4116, ք. 11 և շրջ.:



Ջարևանդի (Դերիկի) Սբ. Աստվածամոր վանքի եկեղեցու մնացորդները հարավից, հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, հյուսիս-արևելքից և հյուսիսից (լուս.՝ 2011 թ.)

Եվս 12 տարի անց՝ 1942 թ., փետրվարի 20-ին, արդեն արքեպիսկոպոս Արսեն Դրլտճյանը, իր ընդարձակ զեկուցագրում վերջին անգամ հիշատակելով Դերիկի վանքը, նշել է. «...արդեն յայտնի է Ներսեսի դիրքը, որ դաշնակների գերին է, շնորհիւ իր արած մի շարք վատ ընթացքների: Ժամանակին

ես զեկուցել եմ, որ Ներսեսը ծախել է Թադեի վանքի ասեղնագործ հին վարագոյրը. Դերիկի վանքի հողերը փոխանցել է մի քուրտի...»¹⁵:


¹⁵ Վառերագրեր հայ եկեղեցու պատմության, Գեորգ Ջ Չորեչեան կաթողիկոս Ամենայն հայոց (1938-1955 թթ.), գիրք 2, Երևան, 1999, էջ 145:



Ջարևանդի (Դերիկի) Սբ. Աստվածամոր վանքի եկեղեցու հյուսիսային կողմի խորանի վերնամասը և հյուսիսային ավանդատան մնացորդները (լուս.՝ 2011 թ.)

Արդեն նշել ենք, որ մինչև Ի դարի սկզբները կամ գուցե կեսերը, երբ համալիրի գլխավոր կառույցը՝ Սբ. Աստվածամոր եկեղեցին, դեռևս կանգուն էր, երբևէ ոչ միայն չի անմահացվել ոչ մի լուսանկարով, այլև գոնե համառոտ կերպով չի նկարագրվել: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ տարբեր

հրատարակություններում նախկինում շրջանառված իբր Դերիկի վանքը ներկայացնող միմյանցից միանգամայն տարբեր երկու հնավայրերի լուսանկարներից և ոչ մեկը խնդրո առարկա վանքի հետ որևէ առնչություն չունի (համոզվելու համար հարկ է համեմատել լուսանկարները):



Զարևանդի (Դերիկի) Աբ. Աստվածամոր վանքի եկեղեցու կործանված գմբեթի զանգվածեղ բեկոր (լուս.՝ 2011 թ.)



Զարևանդի (Դերիկի) Աբ. Աստվածամոր վանքի եկեղեցու կործանված որմերի զանգվածեղ բեկորներ (լուս.՝ 2011 թ.)




Այցելություն Ջարեհավանի (Դերիկի) Աք. Աստվածամոր վանք (7 հունիսի, 2011 թ.)

Ներկայումս երբեմնի վանական համալիրից պահպանվում են ակնհայտորեն պայթեցումով փլատակված քառախորան կենտրոնազմբեք հորինվածքով եկեղեցու մնացորդները՝ առավելապես

քում պոկված որմերի առանձին զանգվածեղ հատվածներ:

Եկեղեցին ամբողջապես կառուցված է եղել միջին և միջինից փոքր-ինչ խոշոր, համակ սրբատաշ քարով, կրաշաղախով: Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթարդին, ամենայն հավանականությամբ, իրականացված է եղել տրոմպների միջոցով: Կործանված թմբուկի պահպանված զանգվածեղ հատվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցին ունեցել է ներքուստ բոլորածև (D=3,60 մ), իսկ արտաքուստ ութանիստ թմբուկ (անշուշտ, առնված սրածայր, նույնպես ութանիստ վեղարի ներքո): Մուտքը բացված պետք է լիներ արևմտյան ճակատից (բացառելի չէ նաև հարավային ճակատից բացված մուտքի հնարավորությունը):



0 1 2 3 4 5 10 մ

Ջարեհավանի (Դերիկի) Աք. Աստվածամոր վանքի հատակագիծը (չափ.՝ ճարտ. Աշոտ Գալոբյանի, 2011 թ.)

հյուսիսային կիսաբոլորակ խորանով խաչաթևը, մասամբ հյուսիսային ավանդատան որմերը, ինչպես և որոշ հատվածների հիմնապատերի չնչին հատվածներ: Եկեղեցու շուրջ՝ հատկապես կառույցի հարավային կողմում, միմյանցից որոշ հեռավորությամբ պահպանվել են պայթեցման արդյուն-

Ներքուստ պատված է եղել սվաղի շերտով, սակայն դրանց պահպանված խիստ սահմանափակ մակերեսներին որմնանկարների հետքեր չեն նշմարվում:

Արտաքին չափերն են՝ 11,68 x 10,89 մ:

Եկեղեցու մնացորդներից զատ երբեմնի վանքից մնացած շինություններից, որոնք էին 2-3 սենյակները, պարսպապատերը, ներկայումս հետք իսկ չի նկատվում:

Նշմարելի չեն նաև ազատամարտի երկու հերոսների՝ Շատախի Կաճետ գյուղից սերող մարտական անբաժան ընկերներ Չաթոյի և 1896 թ. նրա կողքին ամփոփված «ժողովրդական հերոս» Շերոյի նվիրական գերեզմանները:

ՆՈՐԱՅԱՅՏ ԿԱՐԿԱՌՔԱՂԱՔԱՏԵՂԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Գագիկ Սարգսեան, Ալեքսան Յակոբեան

Կարկառը Մեծ Հայքի Արցախ նահանգի միջնադարեան այն եզակի քաղաքային բնակավայրն է, որի անունը պահպանուել է ինչպէս հայկական, այնպէս էլ արաբական եւ վրացական աղբիւրներում: Քաղաքի մասին ժամանակագրորէն առաջին յիշատակումը կատարել է արաբ աշխարհագետ Իբն Խորդադբեհը (820-912), որն իր «Գիրք ճանապարհների եւ թագաւորութիւնների մասին» երկում գրում է. «Կուբադը (=Կուստ Ա Սասանեան արքան) կառուցեց Բայլական, Բարդա'ա (=Պարտաւ) եւ Կաբալա (=Կապաղակ) քաղաքները, ինչպէս նաեւ Սուդդ ալ-Լաբիհը (=Աղիւստ պատնէշ): Անուշիրուանը (=Խոսրով Ա Սասանեան արքան) կառուցեց Շարուրան, *Քարքարա* (=Կառկառ) եւ ալ-Բաբ (=Գերբենդ) քաղաքները»¹: Հետաքրքիր են նաեւ շարունակութեան մէջ առկայ տեղեկութիւնները. «Ջուրգան (=Վիրք) երկրում (Անուշիրուանը) կառուցեց Սուդդաբիլ (=Ցուրտաւ) քաղաքը եւ այնտեղ եւս իր պալատը կառուցեց ու կոչեց Բաբ Ֆիրուզ Կուբադը (=Պերոզ-Կուստաի դուռ): Արմինիայում (=Հայաստան) են նաեւ Խոյր, Սաննարիյան (=Ճանարք), ալ-Բակը (=Աղբակ), Քիսալը եւ Աբխազը, Ջարդանան (=Գարդան. կամ Գարդաբանի²) բերդը, Խայզանը, Շաքին եւ Բաբ քաղաքը... Նրանում (Կովկասում) կան բերդեր, ինչպէս Բաբ Սուլը (=Չոդայ դուռ), Բաբ ալ-Լանը (=Ալանաց դուռ), Բաբ Շարուրանը, Բաբ Լազիկանը, Բաբ Բարիկան, Բաբ Սամսախին (=Սամցխէի դուռ)...»²:

Արաբագիր պարսիկ աշխարհագետ Իբն ալ-Ֆակիհը (մահ. 903-ից յետոյ) իր «Գիրք երկրների մասին» երկում գրում է. «Կուբադը կառուցել էր Բայլական քաղաքը, նոյնպէս եւ Բարդա'ա եւ Կաբալա քաղաքները, Սուդդ ալ-Լաբիհը... Ապա նրանից յետոյ իշխեց որդին՝ Քիսրա Անուշիրուանը, որը կառուցեց Շարուրան, Սասքաթ եւ *Քարքարա* քաղաքները: Յետոյ կառուցեց ալ-Բաբ ու-ալ-Արուաբը»: Հետաքրքիր է նաեւ շարունակութիւնը (գուգորդուող՝ ալ-Բալազուրիի տեղեկութիւնների հետ). «Առան (=Ադուանք) երկրում նա (Քիսրան) կառու-

ցեց Շաքէի դռները եւ Դուդանիյայի (=Դիդոյք) դռները... Նա կառուցեց Դուրգուկիյան (=Դուրձուկք), որը տասներկու դուռ ունի... Ջուրգան երկրում կառուցեց մի քաղաք, որը կոչուում էր Սուդդաբիլ, ուր բնակեցրեց ցեղեր Սուդդի (=Սուդդիանայի) մարդկանցից ու Ֆարս (=Պարսք) երկրի որդիներից եւ այն դարձրեց սահմանային զինանոց (=գորանոց): Կառուցեց նաեւ Բաբ ալ-Լանը եւ Բաբ Սամսախին, Ջարդանան ամրոցը եւ Սամշուլդա ամրոցը...: Նա գրաւեց ամբողջ երկիրը, որ գտնուում էր Հռոմների ձեռքում, շէնացրեց Դաբիլ (=Դուլին) քաղաքը, ամրացրեց կառուցեց Նաշաւա (=Նախճաւան) քաղաքը, որը Բասֆորջանի (=Վասպուրական) նահանգի քաղաքներից է: Նա կառուցեց Վայս (=Վայք) բերդը եւ ամրոցներ Սիսաջանի (=Սիսական) հողում, որոնցից է Քիլաբ բերդը եւ Շահաբուսը (=Շահապոնք) եւ այնտեղ բնակեցրեց իր քաջ եւ կորովի Սիյասիջիյաններից»³:

Իբն ալ-Ֆակիհի՝ Իբն Խորդադբեհից տարբերուող հաղորդումները յաճախ բառացի համընկնում են Թ դ. պատմիչ ալ-Բալազուրիի «Երկրների նուաճում» երկի վկայութիւնների հետ: Հմնտ. «Ապա Կուբադը հասաւ նրան (*խազարներին հալածող իր զորաւարին*) եւ Առանում կառուցեց Բայլական քաղաքը, ինչպէս նաեւ Բարդա'ա քաղաքը ամբողջ սահմանային ամրութիւնների համար, իսկ Կաբալա քաղաքը՝ խազարների դէմ: Ապա շինեց հում աղիւսից պատնէշը Շարուանի եւ Բաբ ալ-Լանի միջեւ եւ աղիւստ պատնէշի վրայ երեք հարիւր վաթսուն քաղաք կառուցեց... Կուբադից յետոյ իշխեց Քիսրա Անուշիրուանը՝ Կուբադի որդին, որը կառուցեց Շարուրան, Սասքաթ քաղաքները, ապա շինեց ալ-Բաբը, եւ սա կոչուեց Արուաբ (=Դռներ)... Այս կառուցած վայրերում բնակեցրեց մի ժողովուրդ, որին կոչուում էին ալ-Սիյասիջին: Նա Առան երկրում կառուցեց Շաքան (=Շաքի) դռները, Կամբիզանը (=Կամբէճան) եւ Դուդանիյա դռները... Կառուցեց նաեւ Դուրգուկիյան, որը բաղկացած է տասներկու դռներից... Ջուրգան երկրում կառուցեց մի քաղաք, որը կոչուում է Սուդդաբիլ, ուր բնակեցրեց Սուդդից բերուած մարդկանց ու Պարսից որդիների եւ այն դարձրեց ամրակուռ աւան: Ջուրգան երկրում, Ռումից այն կողմ (°) մի ամրոց կառուցեց,

1 Արաբական աղբիւրներ, Գ (Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 16), Թարգմ. բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները **Ա. Տեր-Ղևանդեանի**, Եր., 2005, էջ 448 (մեր որոշ սրբագրումներով): Հմնտ. **Караулов Н.**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, СМОМПК, вып. XXXII, Тифлис, 1903, էջ 15: 2 Տե՛ս նոյն աշխատութիւններում, էջեր 448-449 եւ 15-16:

3 Արաբական աղբիւրներ, Գ, էջ 495 (մեր սրբագրումներով): **Караулов Н.**, Сведения арабских писателей..., СМОМПК, вып. XXXI, Тифлис, 1902, էջ 17:

որը կոչում էր Բար Ֆիրուզ Կուրադ եւ մի այլ անունով, որը կոչում էր Բար Լազիկան, եւս մի անունով, որը կոչում էր Բար Բարիկա եւ գտնում էր Թարաբուզանդայի (=Տրապիզոնի) ծովի վրայ: Նա կառուցեց նաեւ Բար ալ-Լանը, Բար Սամսախին, շինեց Ջարդանան եւ Սամշուրա ամրոցները: Անուշիրուանը... շէնացրեց ու ամրացրեց Դաբիլ քաղաքը, կառուցեց Նաշուա քաղաքը, որը Բասաֆուրջան նահանգի քաղաքն է: Շինեց Վախ բերդը եւ ամրոցներ Սիսաջանի հողում, ինչպէս Քիլաբ եւ Շահաբունս ամրոցները, եւ այս բերդերում ու ամրոցներում բնակեցրեց քաջարի ու կորովի մարդկանց Սիյասիջիյա կոչումներով»⁴: Ինչպէս տեսնում ենք, ալ-Բալազուրին բաց է բողնում միայն *Քարթարա* քաղաքանունը (հնարաւոր է, որ դա արդիւնք է մեզ հասած ձեռագրերի մայր օրինակի գրչի վրիպման):

Տեղին նշենք, որ հայ պատմիչներից Դերբենդի ամրութիւնների՝ Խոսրով Անուշիրուանի կողմից կառուցման մասին նշում ունի Է դ. 40-50-ական թթ. երկասիրած Սեբեոսը («Այս Խոսրով ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն կապեաց զՊահակն ճորայ եւ Ադուանից»)՝⁵: Իսկ Տղիշէ պատմիչի եւ Ղեւոնդ վարդապետի մօտ տեղեկութիւններ են պահպանուել Յազկերտ Բ-ի (439-457) օրօք Չողի (Դերբենդի) ամրութիւնների կառուցման մասին՝ անկասկած, նկատի ունենալով անուշիրուանեան՝ քարով ու կրաշաղախով պարիսպներին նախորդած կաւաղիսէ պարիսպը⁶:

Կարկառ քաղաքի մասին կարեւոր յիշատակում ունի ԺԳ դ. առաջին կէսի արաբ հանրագիտակ Յակուտ ալ-Համաւիի բազմահատոր «Աշխարհագրական բառարանը», որտեղ կարդում ենք. «Քարթար... (Կառկառ). Քարթաբ է Առանում, Բայլականի մօտ, կառուցուած Անուշիրուանի կողմից»⁷: Նոյն տեղում հեղինակը յիշատակում է նաեւ մերձեփրատեան նոյնանուն (Կարկառ) բերդաքաղաքը:

ԺԳ դ. 20-ական թթ. վրացի անանուն հեղինակն ուշագրաւ յիշատակութիւն ունի *Ղարդրի* (=Կարկրի **Կարկար-ի*) երկրի մասին, որի առնչութիւնը

Կարկառ քաղաքի հետ կասկածի տակ չի դրում: 1200-ական թթ. Ջաքարէ Երկայնաբազուկի գլխաւորութեամբ վրացական բանակի մի արշաւանքի մասին բնագիրը յայտնում է. «Երբեւէ, ի ժամ մի, հաւաքուելով, ելան Գելաքուն (=Գեղարունի գաւառ), անցան Խաչիանիով (=Խաչէն) եւ իջան *Ղարդրի* երկիրը, հասան մինչեւ Բելադուն (=Բայլական), աւերեցին ամբողջ Արեզը (=Երասխի հովիտը) եւ բարձրացան մինչեւ Գանձայի դռները... Եւ *Ղարդ(րի)ից* մինչեւ Շանքոր (=Շանքոր) անցան վեց օրում... ու յաղթանակած վերադարձան ու եկան»⁸:

Վերջապէս՝ Կիրակոս Գանձակեցին Կարկառը յիշատակում է Ներքին Խաչէնի իշխան Հասան Ջալալին պատկանած ամրոցների շարքում: Պատմիչի հաղորդմամբ՝ իշխանը մոնղոլ Բաթու դանի որդի ու իր բարեկամ Սարթախի օգնութեամբ այցելեց դանին 1251 թ. եւ նրա բարեսցականութեանն արժանանալով՝ մասնատրապէս յետ ստացաւ իր երեք ժառանգական կալուածքները (ճիշտ է, դա շատ կարճ տեւեց): Ըստ բնագրի՝ «Եւ տարեալ (*Սարթախը Հասանին*) առ հայրն իւր մեծապատիւ (*2 ձեռ.*՝ մեծապատիւ արար) եւ ետ ի նա *զհայրենիս* իւր զՉարաբերդ եւ զԱկանայ եւ զԿարկառն (*մի քանի ձեռ.*՝ զԿառկառն), զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն Թուրքաց եւ Վրաց... Եւ եկն Ջալալն ի տուն իւր ուրախութեամբ, բայց զկնի *աւուրց* նեղեալ ի հարկապահանջացն եւ յԱրդունէն՝ գնաց առ Մանգու դանն: Եւ թագաւորեաց Մանգու դանն յեօթն հարիւր թուականին Հայոց (=1251 թ.)»⁹:

Բերում արքիւրագիտական տուեալներով ուսումնասիրողներին չէր յաջողում հաստատապէս տեղորոշել Արցախ նահանգում միջնադարեան հեղինակների կողմից յիշատակուած փաստօրէն միակ քաղաքը¹⁰: Պատճառը տեղեկութիւնների որոշ հակասականութիւնն է. եթէ Գանձակեցու տեղեկութեամբ Կարկառն անիրաժէշտ էր տեղորոշել Խաչէնի տարածքում՝ Հասան Ջալալի տիրոջնեւում (թէեւ իրականում՝ նրա յաւակնութիւնների շրջանակում), ապա ըստ վրաց հեղինակի եւ Յակուտի՝ այն ընկնում էր Խաչէնից դուրս դէպի Բայլական, ուրեմն՝ հարաւային Արցախի՝ Վարանդա-Գիգակի հատուածում (կենտրոնական եւ հարաւային Արցախի սահմանը միշտ անցել է Վարարակն

4 Մարական արքիւրներ, Գ, էջ 265-266; **Балладзори**, Книга завоевания стран, Пер. **П. Жузе**, Баку, 1927, էջ 5-7:

5 **Սեբեոսի եպիսկոպոսի** Պատմութիւն, չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանի եւ ծանօթագրութեամբք ի ձեռն **Ստ. Մախատանց**, Երեւան, 1939, գլ. Է, էջ 29 (գլխարածանման արհեստական սխալներ ունեցող 1979 թ. հրատարակութեան մէջ՝ էջ 69):


6 **Տղիշէի** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ... աշխատութեամբ **Յ. Տէր-Մինասեան**, գլ. Գ, էջ 78, գլ. Զ, էջ 129; Պատմութիւն **Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց**, Ս. Պետերբուրգ, 1887, գլ. ԺԲ, էջ 40-41: Հմմտ. **Акопян А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, էջ 121-122:

7 Մարական արքիւրները Հայաստանի եւ հարեան երկրների մասին, կազմեց **Նարանդեան Հ.**, Եր., 1965, էջ 103; **Йакут ал-Хамави**, Муджам ал-булдан (Сведения об Азербайджане), пер. с арабского **З. Буниятова и П. Жузе**, Баку, 1983, էջ 30:

8 **Թորոսեան Խ.**, «Թագակիրների պատմութիւնն ու գովաբանութիւնը» որպէս Ջաքարեան Հայաստանի ու Ջաքարեանների պատմութեան սկզբնաղբիւր. բնագրի թարգմանութեամբ եւ մեկնաբանութիւններով հանդերձ, Երեւան, 1992, էջ 398-399: Հմմտ. История и восхваление венценосцев, пер. **К. Кекелидзе**, Тбилиси 1954, էջ 54-55:

9 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ **Կ. Մելիք-Օհանջանեանի**, Եր., 1961, գլ. ԾԵ, էջ 359:

10 Մի քանի յայտնի կամ անյայտ տեղորոշմամբ քաղաքներ արքիւրները յիշատակում են Արցախի յարակից Ուտիք նահանգում (Պարտաւ, Բայլական, Խաղխաղ, Շանքոր, Գարդան, Գանձակ եւ այլն):



օժանդակ-Կարկառ գետ գետագծով)¹¹: Ընդ որում, Իբն Խորդադբեհի եւ Իբն ալ-Ֆակիհի ենթատեքստերում քաղաքը յիշուած է Գերբենդից հարաւ ընկած քաղաքների կողքին (թէւս պարզ է, որ դա կարող էր առաջ գալ զուտ շարադրանքի բովում): Բացի այդ, հայերէն «քարքարոտ», «քարակոյտ» պարզ ստուգաբանութեամբ (ըստ Հայկազեան բառարանի, Հ. Հիւբշմանի, Բ. Ուլուբաբեանի եւ այլն) նոյնանուն բնակավայրեր ու մարզեր են յայտնի Հայկական լեռնաշխարհի մի քանի այլ շրջաններում՝ Արեւելեան Կիլիկիայում եւ Ծոփքում (Կարկառ-Քարքար բերդաքաղաքները Տփրատի զոյգ ափերին), Վասպուրականի հարաւում (Կարկառ-Գեառգեառ կազա-գաւառակը Վանից հարաւ), Մոկքում, Տաշիր, Չարեւանդ, Քուստի Փառնէս գաւառներում (Գեառգեառ-Կարկառ գիւղեր)¹², որը մեծ ու փոքր շփոթութիւնների տեղիք է տուել: Հմմտ., օր.՝ Ս. Սարգսեանի կողմից արցախեանի հետ Հանդալլահ Դազվիմիի յիշատակած հարաւերասխեան, զարեւանդեան Կարկառ-Գեառգեառ

քաղաքի (Լինչի քարտէզում՝ Գառգառ գիւղ, Ջուղայից հարաւ) համադրումը, որը ԺԳ դ. պարսիկ աշխարհագրտը տեղորոշում է Մարանդի թումանում¹³: Ըստ այդմ, մինչեւ քաղաքատեղիի յայտնաբերումը Կարկառի տեղորոշումները կարող էին կրել եւ կրում էին զուտ վարկածային գուշակումների բնոյթ: Ակադ. Ս. Երեմեանի «Վրաստանի աւատական պետութիւնը XIII դ. սկզբին» ռուսերէն քարտէզում (չիրատարակուած) *Կարկառ* երկրամաս է նշուած Բայլականից մի փոքր հիւսիս՝ *Ալգեօլ* կոչուած լճերի շրջանում: «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան»-ի հեղինակները Կարկառ (Գարգար, Քարքար) քաղաքը համադրում էին ԼՂՀ Մարտունու շրջանի Հերիեր գիւղի հետ, որը հէնց *Հերիեր* է կոչուած զոմէ ԺԷ դ. վիմագրերում ու փաստաթղթերում: Ս. Սարգսեանը եւ Բ. Կարապետեանը *Կարկառը* տեղորոշում էին Շուշի բերդաքաղաքի տեղում, իսկ Հ. Պետրոսեանը՝ մերձակայքում: Ալ. Յակոբեանի մի քարտէզում *Կարկառ* անուանումը նշուած է Վարարակն օժանդակից հիւսիս (այսինքն՝ Խաչէնի ափում)՝ հետազայի Կրկժան գիւղի տեղում եւ այլն:

11 Մանրամասն տես **Յակոբեան Ա.**, Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 306-313:

12 Ամփոփ տես **Էփրիկեան Ս.**, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 325-326; Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 47-48:

13 **Хамдаллах Казвини**, Нузхат ал-кулуб (Материалы по Азербайджану), пер. с английского **З. Буниятова**, пер. с персидского **И. Петрушевского**, Баку, 1983, էջ 50-51: Հմմտ. **Սարգսեան Ս.**, Խաչէնի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 151:



Կարկառ քաղաքանիստ սարահարթի հիւսիսային լանջը հիւսիսից (բարձունքում Շուշի քաղաքն է), նոյն սարահարթը արեւելքից՝ «Շղասար» գիւղատեղիից եւ արեւմուտքից՝ Շուշի բարձրացող ճանապարհից՝ «Վիշկի» ամրոցի մօտից

Սակայն 2011 թ. յունիսի 29-ին Ասկերանի շրջանի Քարաշեն (Դաշուշեն) գիւղի Սբ. Սարիքէկ սրբավայրում պեղման-մաքրման աշխատանքներ իրականացնելիս (ԼՂՀ կառավարութեանն առընթեր զբօսաշրջութեան վարչութեան ծրագրով) արշաւախմբի ղեկավարը՝ հնագէտ Գագիկ Սարգսեանը, նոյն գիւղի 70-ամեայ բնակիչ, վարորդ Վազգէն Աղաջանեանի ուղեկցութեամբ այցելեց Կարկառ գետի հանդիպակաց ընդարձակ սարահարթը, որին տեղացիները, ասես պահպանելով ինչ-որ ուշագրաւ պատմական մի յիշողութիւն, «Թագաւորեն

տեղ» խօսուն անունն են տալիս: Ուղեկցողի վկայութեամբ՝ այստեղ երեւում էին հին պատերի հետքեր, որոնց քարերը 1960-1970-ական թթ. Շօշ գիւղի բնակչութիւնը տանում էր՝ օգտագործելու որպէս պատրաստի շինաքար: Այս այցելութեան արդիւնքը եղաւ Արցախ-Ղարաբաղի երբեմնի գլխաւոր քաղաքի՝ նշանաւոր Կարկառի յայտնաբերումը:

«Թագաւորեն տեղ» սարահարթի վրայ փռուած քաղաքատեղին գտնուում է Ստեփանակերտ եւ Շուշի քաղաքների միջնամասում՝ Քարաշեն գիւղի հանդիպակաց ափին՝ ԼՂՀ մայրաքաղաքից դէպի



Միջնաբերդի բլուրը եւ քաղաքի կենտրոնական թաղամասը հարաւից՝ դիտակէտ-աշտարակից (հեռում Քարաշէն գիւղն է, ձախ անկիւնում՝ Ստեփանակերտ քաղաքը), միջնաբերդի տեսքը հիւսիս-արեւելքից՝ կենտրոնական թաղամասից, քաղաքի հիւսիսային պարսպապատի պահպանուած հիմնաքարերը

Շօշ եւ Կարմիր շուկա-Հաղորթ գնացող Հիւսիս-հարաւ աստոմայրուղու աջ եզրին գտնուող զօրամասի անտառապատ լանջի վերնամասում. տարածքը Շօշի գիւղական համայնքի հանդամասն է: Նրա միջնաբերդի բլուրը (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 39° 47.06,0'; E 46° 46. 01,5'; ծ.մ. 1015 մ)¹⁴ տեղակայուած է Ստեփանակերտի «Մագի» կամրջից ուղիղ գծով 2200 մ հարաւ, ազիմուտ 180°, իսկ Շուշիի «Ելիգաւետապոլեան» դարպասներից՝ 2600 մ հիւսիս-արեւելք, ազիմուտ՝ 30°: Քաղաքատեղիի զբաղեցրած հրուանդանը երեսուն է Ստեփանակերտից, Շուշիից, Շօշ եւ Քարաշէն գիւղերից: Յուշարձանը տեղակայուած է նստուածքային ապարներից կազմուած հրուանդանի ընդարձակ, հարթ մակերեսով սարահարթին (ծովի մակերեսոյթից 950-1015 մ բարձրութեամբ), որն ունի մօտաւորապէս արեւելք-արեւմուտք ձգուածութիւն եւ համեմատաբար մատչելի է հիւսիսից ու հարաւից: Արեւելքից այն եզերուում է Կարկառ գետի խոր կիրճով (150 մ), իսկ արեւմուտքից՝ Շուշիի բարձունքից իջնող «Չառուն բաղի ձեօրի ջուր» կոչուած

առուակի՝ ուղղահայեաց ժայռերով կտրուող ձորակով: Սարահարթի հիւսիսային լանջը պատուած է բնական անտառով, իսկ գագաթին խորհրդային շրջանում կատարուել է կաղնու անտառատունկ, այդ պատճառով պատմական քաղաքի կենտրոնական թաղամասերի զգալի մասը պատուած է անտառաշերտով: Ներկայումս սարահարթի տարածքը անջրդի է:

Սարահարթի հիւսիսարեւելեան եզրը հողմահարուած է եւ զուրկ անտառածածկոյթից: Այստեղ մասամբ մերկացող ժայռային հարթ մակերեսին երեսուն են քաղաքի հիւսիսային պաշտպանական համակարգը կազմող պարսպաշարի քարաշէն հիմնապատերի մօտ 250 մ երկարութեամբ հատուածի հիմնաքարերը: Պարսպի այս հատուածը պահպանուել է լաւագոյն դէպքում մէկ քարի բարձրութեամբ, իսկ շատ հատուածներում դա էլ է հանուած: Այն կառուցուած է այսպէս կոչուած «օրտոստատ» տեխնիկայով, երբ պատերը շարուած են երկշերտ, 1,20-1,30 մ լայնությամբ, կողքի վրայ ցից կանգնած քարերից, միջնամասում՝ լցուած կաւահողի ու մանր քարերի բուտով, առանց կրաշաղախի:

Պարսպագիծը դրուած է սարահարթի հարթ մակերեսից դէպի հիւսիս իջնող, արեւելք-արեւմուտք

14 Կոորդինատները տրուում են Պուլկովօ 1941 համակարգով:



Տեսարաններ հիւսիսային պարսպապատի ստորոտով ձգուող ջրի խանդակից

ուղղումներով լանջի եզրագծով Կարկառի կիրճից մինչև Ջառուն բաղի ձոր՝ ամբողջովին փակելով հարաւում ընկած քաղաքի կենտրոնական թաղամասը: Պարսպի ընդհանուր երկարությունը կազմում է ւելի քան 1100 մ: Արեւելեան վերջաւորութեան մօտ այն երկատում է, եւ մի ուղիղ գիծ, սկիզբ առնելով հիմնական պարսպագծի վրայ դրում կտր աշտարակից (պեղավայր 1), իջնում է դէպի հիւսիս-արեւելք՝ Կարկառի ձորի վրայ կախուող եռանկյունաձեւ հրուանդանի ծայրը, ուր աւարտում է կիրճի վրայ հսկող կտր աշտարակով: Իսկ դէպի արեւմուտք՝ սարահարթի կենտրոնից սկսուող անտառաշերտի մօտ, պարիսպը սահուն վերածում է գրեթէ ուղղաձիգ հողապատնէշի, որի քարաշէն հիմնամասը (եթէ այն կայ) արդէն չի երեւում: Հողապատնէշի բարձրությունը որոշ կէտերում հասնում է 10-12 մ նրա վերեւի մակարդակի եզրը կազմում է վերին դարաւանդի վերջնագիծը, իսկ ներքեւինը՝ ստորին մակարդակին նստած դարաւանդի սկզբնագիծը: Պարզ է, որ ժամանակի ընթացքում կաւաշէն պատերը զգալիօրէն սահել, լուացուել են, բայց դրանք այսօր էլ թողնում են ազդեցիկ տպաւորութիւն: Հողապատնէշը հիւսիսային պարսպաշարի համեմատաբար լաւ պահպանում մասն է, այն կառուցում է հում աղիսից, որը ժամանակի ընթացքում վերածուել է միասեռ կաւահողային զանգուածի (կաւաղիւսներն աղօտ դիտարկում են միայն երկու փոքրիկ հեղեղատների մէջ): Կորագծով գնալով դէպի արեւմուտք ւելի քան 400 մ՝ հողապատնէշը կտրում է վերջերս կառուցում Ստեփանակերտ-Շուշի գազատարի փորումքով, որից յետոյ շարունակում է եւս գրեթէ 400 մ՝ միաձուլուելով Ջառուն բաղի ձորի վերեւով ձգուող դաշտային ճանապարհի հետ: Խողովակաշարի փորումքը խրամատի կտրումքում պարզ երեւում է հրուանդանի եզրագծին դրում կաւային (հում աղիսի) կազմումքով մօտ 2,5-3 մ հաստութիւն ունեցող պարսպի կառուցումքի ուրուագիծը:

Կաւաղիւսով շարում հիւսիսային պարիսպն առանձնակի ուշադրութեան է արժանի նաեւ նրանով, որ նրա տակ առկայ է քաղաքի պաշտպանա-

կան համակարգի՝ խիստ ուշագրաւ բաղկացուցիչ մասը՝ ջրի խանդակը, որն այսօր ուրուագծում է իբրեւ խիտ անտառի մէջ փորումք ներճկումք, զոգաւոր կտրումքով երկարաձիգ խրամատ կան ճանապարհ: Խանդակի երեւացող լայնութիւնը չի գերազանցում 3-3,5 մ, իսկ խորութիւնը՝ 1,5 մ, բայց ակնյայտ է, որ հնում այն ունեցել է ւելի տպաւորիչ չափեր: Նրա ներքին պատը կազմում է հողապատնէշի ճակատը, արտաքինը՝ ստորին դարաւանդի հարթ մակերեսով անցնող հողաթումբը: Խանդակի արտաքին, տեղ-տեղ մինչև 2 մ բարձրութեան հասնող պատի կառուցումքը երեւում է լուացումք, քանդումք հատումքներում, ուր բացում է նրա հիմքում ընկած քարաշէն պատի շարումքը: Խանդակն անցնում է տեղանքի հորիզոնական տարբեր միջերով, եւ ջրի մակարդակը կայուն պահելու նպատակով այն իր ընթացքի մի քանի կէտերում պարբերաբար ընդհատում է՝ փակուելով պատնէշներով («շլիւզներով»): Պատնէշները դրում են հէնց այն կէտերում, ուր խանդակի մակարդակը կտրուկ իջնում է մի աստիճան ներքեւ եւ շարունակում ընթացքը ստորին, հորիզոնական գծով մինչև յաջորդ պատնէշը: Խանդակի ամենաբարձր կէտը նրա կենտրոնում է, որտեղից այն սնում է ջրով եւ աստիճանաբար իջնում՝ գնալով դէպի արեւելք ու արեւմուտք:

Քաղաքի կենտրոնական թաղամասը տարածում է հիւսիսային պարսպից հարաւ երկու տարբեր միջերին նստած դարաւանդների եւ սրանցից հարաւ ընկած հարթ մակերեսին, ուր նկատում են բազմաթիւ պատերի, փոտրակներով ուրուագծուող տների, մեծածաւալ կառուցների հետքեր ու տեղաշարժումք շինաքարեր: Թաղամասի հարաւային սահմանագծի հարցը մասամբ բաց է մնում, քանի որ, ի տարբերութիւն հիւսիսային կողմի, ուր պարսպագիծն ու նրա առջեւի ջրի խանդակը մեծապէս պահպանուել են շնորհիւ բնական անտառածածկոյթի, հարաւում մակերեսոյթը մերկ է եւ ենթարկուել է բազմապիսի ւերումների: Թաղամասի միջնամասում, ուր սարահարթի հորիզոնական

հարթութիւնն աւելի նեղ է (130-150 մ), հարաւային կողմի ռելիեֆի՝ համեմատաբար կտրուկ անկումների եզրագծերով հատուածաբար երևում են մեծ քարերով դրուած պատեր՝ «կիկլոպեան» շարուածքով: Վերջիններս տեղադրուած են աստիճանաձեւ, բարձրութեան տարբեր նիշերին եւ իրար յաջորդող երեք շարքերով, միմեանցից 10-30 մ հեռաորութեամբ: Թաղամասի կենտրոնում սարահարթի լայնութիւնը հասնում է 300 մ, եւ այստեղ հարաւային եզրագիծը կազմող «կիկլոպեան» պարիսպը երևում է միակ պահպանուած գծով, չնայած նրանից 110 մ հարաւ-արեւելք՝ Կարկառի ձորաեզրին պահպանուել են 10 մ տրամագծով քարաշէն մեծ աշտարակի հիմնապատերը: Ժամանակի ֆորտիֆիկացիայի սկզբունքների համաձայն՝ վերջինս պիտի որ լինէր քաղաքի հարաւային եզրագիծը կազմող պարսպապատի աշտարակը, բայց հետագայում պարսպապատի քարերի հեռացման եւ մերկացող ժայռերը քարհանքի վերածելու արդիւնքում մնացել է միայնակ: Մի այդպիսի «միմուճար», բայց արդէն ուղղանկիւն աշտարակ (նոյն՝ «կիկլոպեան» շարուածքով) երևում է հարթակի ռելիեֆի կտրուածքի հարաւային եզրագծի կենտրոնում: Կենտրոնական թաղամասի միջնամասի հարաւակողմի՝ մօտ 100-150 մ երկարութեամբ հատուած, էրոզիայի ենթարկուելով, ամբողջովին սահել-իջել է ցած՝ ռելիեֆին թողնելով գոգավոր ներճկուած հետք:

Այսպիսով կարելի է ենթադրաբար ընդունել, որ քաղաքի կենտրոնական թաղամասի հարաւային սահմանագիծը, հնարաւոր է, ունեցել է պաշտպանական երեք պարսպաշարերից կազմուած համակարգ, որոնք իրականացուել են «կիկլոպեան» շարուածքով հին, երկաթեղարեան պարիսպների վրայ մտած կաւաշէն (աղիսաշէն) պատերով: Վերջիններս քայքայուել, հողմահարուել են, իսկ «կիկլոպեան» պարսպի քարերը հետագայում հանուել, հեռացուել են (մասնատրասպէս ԺԸ դ. կէսերին տեղափոխուել են Շուշի նոր քաղաքի բերդապարիսպը կառուցելու նպատակով): Քաղաքի ներսում եւ առաւելապէս հարաւային պարսպաշարերից դուրս ընկած տարածքներում նկատուում են հնում հիմնովին կողոպտուած դամբարաններ, որոնց կառուցուածքը նմանում է Ք. ա. առաջին հազարամեակի սկզբի թաղումնային կառուցների: Հիւսիսային ու հարաւային պարիսպների միջեւ պարփակուած բուն քաղաքատեղին զբաղեցնում է 35-40 հա տպաւորիչ տարածութիւն: Համեմատութեան համար նշենք, որ, օր.՝ վաղմիջնադարեան Գերբենդ քաղաքն ունեցել է 26-27 հա բնակելի տարածք, միջինասիական Բուխարան՝ 35 հա, Թերմեզը՝ 20 հա, Փենջիքենդը՝ 13-14 հա, եւ միայն Սամարղանդը՝ 65, իսկ Մերուը՝ 200 հա¹⁵:

Սարահարթի արեւմտեան եզրին՝ Չառուն բաղի ձորի բերանին, շրջապատի վրայ իշխող 10-15 մ բարձրութեամբ երկարաւուն (մօտ 150 մ երկարութեամբ եւ 60 մ լայնութեամբ) բլրի վրայ է գտնուել քաղաքի միջնաբերդը (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 39° 47.32,6՝ E 46° 45.32,9՝; ծ.մ. 1105 մ): Բլրի մերկ մակերեսը մանրազնին դիտարկելիս կարելի է տարագատել նրա լանջերի միջնամասի հորիզոնական գծով անցնող եւ բլուրը ներփակող հողաթումբը, որն առաջացել է միջնաբերդը եզերող երբեմնի շրջապարսպի փլատակներից: Միջնաբերդի գագաթին պահպանուել են մեծ կլորաւուն քարաշէն շինութեան հետքեր: Վերջինից ներքեւ՝ շրջապարսպի ներսում, նկատուում են մեծ շինութեան՝ խիստ քայքայուած հետքերը, որը զննելիս կարելի է մտովի վերականգնել ընդարձակ, բաց բակին կից բազմասենեականոց համալիրի պատկերը: Միջնաբերդի հիւսիսային լանջին համեմատաբար լաւ են պահպանուել բազմաթիւ կառոյցների քարաշէն պատերի մնացորդները, որոնց հողմահարումից ու քայքայումից մասամբ փրկել է բնական խիտ անտառածածկոյթը:

Հնավայրի տարածքի վիզուալ հետազօտութիւնը պարզեց, որ հիւսիսային պարիսպն իր ստորոտի ջրի խանդակով տուեալ ուղղութեամբ քաղաքը պաշտպանող ֆորտիֆիկացիոն համակարգի վերջին, չորրորդ եւ յետնամասային գիծն է: Առաջնային գծերն ընկած են նրանից հիւսիս՝ սարալանջին: Այս ընդարձակ անտառապատ լանջը մարդու կողմից վերածուել է աստիճանաձեւ դասաւորուած եւ հորիզոնական հարթութիւնների բերուած երեք արհեստական դարաւանդի: Սրանց լայնութիւնը, ելնելով տեղանքի առանձնայատկութիւններից, տատանում է 30-90 մ: Դարաւանդները քաղաքատեղիի ամբողջ հիւսիսային թեք լանջով ձորից ձոր լայնութեամբ ձգուող հարթ հողածածկ «դարակներ» են, որոնք եզերուում են 3-8 մ բարձրութեամբ կտրուկ, գրեթէ ուղղաձիգ իջնող հողի կտրուածքով: Նախորդ դարաւանդի կտրուածքի ստորոտից սկսուում է յաջորդը: Նրանց եզրերին քարաշէն կառուցուածքների հետքեր չեն նկատուում, բայց կտրուածքների հողի կաւային կառուցուածքն ու դրանց եզրագծերին տեղ-տեղ պահպանուած երկարաձիգ ցածր հողաթմբերը թոյլ են տալիս ենթադրել, որ դարաւանդները եւս եզերուած են եղել կաւաշէն (հում աղիսէ) պարիսպներով: Գետնի մակերեսին շինութիւնների հետքեր չեն երևում, բայց հանդիպող սակաւաթիւ շինաքարերը վկայում են, որ այս տարածքները ժամանակին կառուցապատուած ու բնակեցուած են եղել եւ, ըստ ամենայնի, հանդիսացել են քաղաքի արուարձանը կամ, ինչպէս ընդունուած է անուանել, ռաբաթը: Նշելի է, որ սարահարթի հիւսիսային լանջի բազմաստիճան «դարակաւոր» կառուցուածքը յստակ երևում է տեղանքը հեռուից դիտարկելիս:

15 Кудрявцев А., Древний Дербент, Москва, 1982, էջ 115-116; Белецкий А., Бенгович И., Большаков О., Средневековый город Средней Азии, Ленинград, 1973, էջ 6:

Հիսիսային երեք դարսանդները լանջի կենտրոնից մի փոքր դեպի արեւմուտք սահուն հարթում են տեղ տալով դեպի քաղաք բարձրացող հին գլխատր ճանապարհին: Ճանապարհի ներքեւի մի փոքր հատուածը ցայտուն երեսում է այսօրուայ գորսանասի հարթակից քիչ վեր, ուր գտնում է զարգացած միջնադարի երկու խաչքարերից կազմուած «Կանաչ խաչ» սրբատեղին: Յուօք, զագատարն անցկացնող շինարարները, ընտրելով սարահարթ բարձրացող օպտիմալ ուղին, գծել են դա հենց պատմական ճանապարհի վրայով՝ գրեթէ ամբողջովին աւերելով այն: Մտնելով քաղաքի կենտրոնական թաղամաս՝ ճանապարհն անցնում էր միջնաբերդի արեւելեան ստորոտով, ապա շարունակուած երկու ուղղութեամբ՝ մէկը դեպի վեր, Շուշիի բարձունքը, Չառուն բաղի ձորի աջ լանջով (ուր ճանապարհի ժայռակերտ մասերը պահպանուել են ու գործում էին մինչեւ վերջերս) եւ այնուհետեւ հաւանաբար դեպի Քաշաթաղ, Միւնիք եւ կենտրոնական Հայաստան, միւսը՝ ներքեւ, դեպի Կարկառի վրայի «Շօշի» կամուրջը, այնուհետեւ դեպի Վարանդա, Դիզակ, Խուրափերիցի կամուրջ եւ Պարսկաստան: Ինչպէս կարելի է ենթադրել, սարահարթն արեւելքից եզերող ժայռերի տակով փորուած Շօշի «նոր» մայրուղին ուշ միջնադարի է:

Վերջին տարիներին ԼՂՀ-ում եւ մասնաւորապէս խնդրոյ առարկայ տարածքում մեր կողմից կատարուած հնագիտական հետախուզական աշխատանքների արդիւնքները համադրելով նորայայտ քաղաքի գոյութեան փաստի հետ՝ ստացում են ուշագրաւ հետեւութիւններ: Պարզուած է, որ լանդշաֆտի վրայ մարդու ակտիւ ներգործութեան հետքեր՝ առանձին պատերի պատահիկներ, ձեռակերտ կտրուած դարսանդներ ու հրուանդաններ, յենապատեր, ճանապարհների ու ջրատար առուների հետքեր, արհեստականօրէն հարթեցուած ժայռագագաթներ ու բարձունքներ, տարբեր ժամանակաշրջանների վերգետնեայ խեցեղէն պարունակող տեղավայրեր, տապանաքարեր, դամբարաններ ու թաղումնային կառոյցներ, կարելի է նկատել Շուշիի ամբողջ բարձունքով մէկ: Նմանատիպ հետքեր կան նաեւ Կարկառի աջափնեայ Քարաշէն, Շօշ, Միսիթարիշէն գիւղերի տարածքներում, որտեղ բացայայտուած մեծ դամբարանաբլուրներից կազմուած դամբարանադաշտերն ու բնակատեղիներն այս կամ այն ձեւով առնչուած էին շրջապատի մշակութային դամբարան հանդիսացող Կարկառ քաղաքի հետ՝ վերածելով նրա շրջակայքը Արցախ-Ղարաբաղի ամենախիտ բնակեցուած շրջաններից մէկի: Պատահական չէ թերեւս, որ Արցախի քաղաքական եւ մշակութային հին ու նոր կենտրոնները, կարծես պատմական ժառանգականութիւնը պահպանելով, շատ չեն հեռանում Կարկառից՝ մշտապէս պտտուելով նրա շուրջը:


Կարկառ քաղաքի պաշտպանական համակարգը չի սահմանափակուած միայն իր պարիսպներով

ու պատնէշներով: Կարկառն ունեցել է նաեւ իր մատոյցներում տեղակայուած առաջապահ պահակային գորակայան-ամրոցներից, դիտակետերից ու յենակետերից բաղկացած խորքային պաշտպանական գծեր, որոնք տեսողական կապով ուղիղ կամ միջնորդուած յարաբերուելով բուն քաղաքի հետ, ունեցել են առաջապահ պաշտպանութեան եւ արագ ահազանգման գործառոյթ: Փորձենք ներկայացնել այս համակարգի մի քանի բացայայտուած բաղկացուցիչ տարրերը:

Կարկառի միջնաբերդից ուղիղ գծով 1010 մ հիւսիս-արեւմուտք (ազիմուտ՝ 300°) Չառուն բաղի ձորի ձախ լանջին՝ Շուշիից Ստեփանակերտ իջնող մայրուղու աջ եզրին, «Վիշկի» կոչուած երկսապատ բլրի վրայ, ուր այժմ երեք ալեհաւաք աշտարակ է տեղակայուած, գտնուել է փոքր ամրոց-գորակայան (N 39° 47.32,6՝ E 46° 45.32,9՝; ծ.մ. 1105 մ): Բլրի բարձր գագաթին տեղադրուած է անկանոն կլորատուն (6-8 մ տրամագծով) յատակագծով, մեծածաւալ, «կիկլոպեան» քարերով շարուած դիտակետաշտարակ, իսկ բլրալանջի միջնամասը ներփակուած է մի շրջապարիսպ՝ շարուած աւելի փոքր քարերով: Յուշարձանի վերգետնեայ խեցեղէնը համադրելի է Կարկառի վաղ եւ միջնադարեան շրջանի նիւթին: Հետախուզական պեղումների արդիւնքները թոյլ են տալիս ենթադրել, որ նշուած ամրոցի «կիկլոպեան» աշտարակը եղել է Կարկառ բնակավայրի երկաթեդարեան ժամանակաշրջանի դիտակետ-աշտարակը, որը միջնադարում լայնացուել է ստորին պարսպաշարով եւ օգտագործուել արդէն իբրեւ պահակային ամրոց-գորակայան:

Քաղաքատեղիի հիսիսային մատոյցներում նոր յայտնաբերուած «Մէլիքեն դուգ» կոչուած ոչ մեծ ամրոցը, հնարաւոր է, եղել է առաջապահ պաշտպանական գծի հիսիսային յենակետը: Այն գտնուած է Կարկառի միջնաբերդից 2970 մ հիւսիս (ազիմուտ՝ 12°), կոորդինատներն են՝ N 39° 48.40,3՝ E 46° 46.27,6՝; ծ.մ. 803 մ: Ամրոցը տեղադրուած է Կարկառ գետի աջ ափին՝ Ստեփանակերտի դիմաց՝ ԼՂՀ քաղաքաշինութեան նախարարութեան մասնաշէնքի հանդիպակաց բլրին: Արեւելք-արեւմուտք ձգուածութեամբ բլրի արեւելեան եզրին բարձրացող կոնաձեւ գագաթին պահպանուել են միջնաբերդի քարաշէն, 8-10 մ չափերով ուղղանկյուն կառոյցի փլատակները եւ բլուրը ստորոտով ամբողջովին ներփակող պարսպի թոյլ նշմարուող ուղեգիծը: Արեւմտահայեաց լանջի հարթութիւնից դուրս ցցուող մեծ ժայռաբեկորի գագաթին տաշուած սեղանատիպ ելուստի վրայ փորուած են առուակներով կապուած երեք կլոր փոսրակներ, ինչը զրադաշտական զոհասեղան-կրակարան է յիշեցնում: Յայտնաբերուած վերգետնեայ խեցեղէնը ժամանակագործէն համադրելի է Կարկառի միջնադարեան նյութին:

Քաղաքատեղիի հարաւային մատոյցները հսկում էր միջնաբերդից 370 մ հարաւ (ազիմուտ՝







«Վիշկի» ամրոցի տեսքը հիւսիս-արեւմուտքից, «Մելիքեն դուզ» ամրոցի տեսքն արեւմուտքից եւ նոյն ամրոցի տարածքում գտնուող զոհասեղանը

200°) բարձրացող եւ տեղանքի վրայ գերիշխող ամենաբարձր բլրի գագաթին տեղակայուած կլոր, 5 մ տրամագծով, մեծ քարերով շարուած դիտակետաշտարակը, որի հիմնապատերը երեսում են տեղում: Այս բլրի գագաթին է տեղադրուած շրջապատի միակ գեոդեզիական եռոտանի կետը (N 39° 46.54,8' E 46° 45.56,4'; ծ.մ. 1062 մ): Չի բացառոււմ, որ դիտակետի դեր է խաղացել նաեւ միջնաբերդից 600 մ ուղիղ հարաւ ընկած (ազիմուտ՝ 270°), հարթ մակերեսով բարձրադիր բլուրը, որի գագաթի փոքր, հորիզոնական հարթակը արհեստականօրէն հարթեցման հետքեր է կրում: Արեւելքից քաղաքատեղին կարող էր պաշտպանել Կարկատ գետի աջ ափի բարձունքներից մէկի հարթ բացատում տեղադրուած «Շաղոտ» կոչուած գիւղատեղիում նշարտող հին բնակատեղին (կոորդինատներն են՝ N 39° 46. 54,8' E 46° 45.56,5'; ծ.մ. 1120 մ), որի տեղանքը յարմար է առաջապահ զօրակայանի տեղակայման համար (այն ուղիղ գծով հեռու է Կարկատի միջնաբերդից 2150 մ, ազիմուտ՝ 80°): Այստեղ բնական աղբիւր է բխում, եւ նրա բարձրադիր կետից ամբողջովին դիտարկում է ներքեւում տարածուող Կարկատ քաղաքի սարահարթը: Գիւղատեղիի խոնարհուած եկեղեցու աւերակներում պահպանուել է ԺԲ-ԺԳ դդ. նախազագարդերով խաչքար, բայց չի բացառոււմ, որ այն նաեւ աւելի վաղ մշակութային շերտ ունի:

Ամփոփելով նշենք, որ խորքային, առաջապահ պաշտպանական համակարգի կազմում մեր կողմից նշուած յուշարձանները չեն յաւակնում ամբողջական ու ճշգրիտ լինելուն: Ակնյայտ է, որ նման մեծ ու նշանաւոր բնակավայրը պետք է ունենար շատ աւելի ծաւալուն, բազմաստիճան պաշտպանական համակարգ, որի բաղադրիչները դեռ բազմիցս կը բացայայտուեն ու կը ճշտուեն:

Կարկատ քաղաքի յայտնաբերման մեծ նշանակութիւնը նկատի առնելով՝ ԼՂՀ կառավարութեանն առընթեր զբօսաշրջութեան վարչութիւնը միջոցներ հայթայթեց՝ ֆինանսաւորելու համար յուշարձանում փոքրածաւալ հետախուզական պեղումներ (2011 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր): Պեղող արշաւախմբի պետն էր հնագէտ Գագիկ Սարգսեանը, ճարտարապետը՝ Սամուէլ Այվազեանը, պեղավայրի ջոկատի պետը՝ երիտասարդ հնագէտ Արմէն Դադեանը. պեղող բանուորներ հաւաքագրուեցին մօտակայ Շօշ գիւղից: Պեղումների նպատակն էր հնարարինս պարզել քաղաքի սփռման տարածքը, յուշարձանի շերտագրութիւնը, ժամանակագրութիւնը, մշակութային եւ շինարարական շերտերի առկայութիւնն ու հզօրութիւնը, շինութիւնների պահպանուածութեան աստիճանը, կառուցուածքը, հնագիտական գտածոների խտութիւնը եւ այլն: Որոշուեց պեղումներն իրականացնել ոչ մեծածա-




Պեղավայր № 1. Իւսիսային պարսպի կլոր աշտարակը պեղումներից յետոյ եւ չափագրութիւնները (հեղ. Ճարտ. Ս. Այվազեան)

լալ խուզահորերի (շուրֆերի) միջոցով յուշարձանի բուն տարածքի տարբեր, միմեանցից հեռու դրուած պեղավայրերուն:

Առաջին պեղավայր ընտրուեց քաղաքատեղիի հիւսիսային պարսպապատի հիւսիսարեւելեան եզրամասուն նկատուող կլոր աշտարակը: Այն ուրուագծուն էր որպէս թփուտներով պատուած կլորացող քարախառն հողաթումբ՝ կենտրոնուն թոյլ ուրուագծուող ներճկուած իջուածքով: Պեղումների արդիւնքուն պարզուեց, որ աշտարակը կազմուն է պարսպի բաղկացուցիչ մասը, կառուցուել է նրա հետ նոյն ժամանակ, նոյն նախագծով ու տեխնիկայով: Այն դրուած է պարսպի ուղղագիծ ընթացքի կտրուածքի կետուն: Աշտարակը յատակագծուն կլոր է

(արտաքին տրամագիծը՝ 566 սմ, ներսինը՝ 317 սմ), ամբողջ ծաւալով դուրս է գալիս պարսպի գծից դէպի հիւսիս եւ միայն 85 սմ նեղ մուտքով բացուն ներսի՝ պարսպի հարաւային ճակատին: Պարսպի եւ աշտարակի պատերը շարուած են ոչ մեծ, տեղական ճեղքած կրաքարով եւ պահպանուել են մինչեւ 120 սմ բարձրութեամբ: Որպէս կապակցող նիւթ՝ շարուածքուն օգտագործուել է լաւ հունցած կան առանց լրացուցիչ խառնուրդների: Միջինուն 120 սմ լայնութեամբ պատերը կազմուած են երկշերտ դրուած քարերից, մէջը լցուն է համեմատաբար մանր քարերի ու կաւալուծոյթի բուտով: Շինութեան հիմքերը չեն փորուել, այն անմիջապէս նստած է պատաշարի գծի տակ պահպանուն հին, 5-10 սմ հաստութեամբ հու-



Պեղավայր № 2. կիկլոպեան պարսպի արտաքին և ներքին ճակատները պեղումներից յետոյ և չափագրութիւնները (հեղ. ճարտ. Ս. Այվազեան)


մուսային հողածածկոյքի վրայ, որի տակ մերկանում է սարահարթի բնական ժայռային զանգուածի հարթ մակերեսը: Աշտարակի յատակը կազմում է մանր քարերով շարուած-տոփանուած կաւաշերտը: Աշտարակի ներսը և դրսի՝ մինչեւ 2 մ շառաւղով շրջակայքն ամբողջովին պատուած էր նրա շարի քարերից կազմուած փլատակներով, որի ծաւալից կարելի է ենթադրել, որ կառոյցն ունեցել է առնուազն 3-4 մ բարձրութիւն:

Աշտարակի պեղման ընթացքում յայտնաբերուած խեցեղէնն աղքատիկ է: Այն միջնադարեան է, շատ կան մանր, խիստ լուացուած խեցեղէնի բեկորներ, որոնք, ամենայն հաւանականութեամբ, այստեղ են յայտնուել բնակավայրի այլ կէտից վեր-

ցուած և հունցուած կաւի հետ մէկտեղ¹⁶: Աշտարակի շուրջը, գետնի մակերեսին, փլուզման գծից դուրս յայտնաբերուել են նաեւ զարգացած և ուշ միջնադարին վերաբերուող ջնարակած խեցեղէնի և հախճապակու մանր բեկորներ:

Երկրորդ պեղավայրը դրուեց առաջինից 300 մ հարաւ-արեւմուտք՝ սարահարթի կենտրոնական հարթ հատուածի մակերեսին՝ դէպի հարաւ նայող լանջի եզրագծին երեսացող «կիկլոպեան» շարուածքով պատի (պարսպի¹⁷) վրայ: Նման կառու-

16 Քաղաքանիստ սարահարթի անտառածածկ, չհողմահարուած հատուածներում՝ հողածածկոյքի հումուսային շերտի տակ, ժայռային հիմքի վրայ համատարած նստած է բնական, մանրահատիկ կաւի հզօր շերտը:



Պեղավայր № 3. Կենտրոնական թաղամասի կլոր կացարանը նախքան պեղումները, պեղումներից յետոյ եւ չափագրութիւնները (հեղ.՝ Ճարտ. Ա. Այվազեան)

ցուածքով պատեր հատուածաբար նկատում են նաեւ հնավայրի արեւմտեան մասի հարաւային կողմում: Պեղավայրի ընտրութիւնը պայմանաւորուած էր նաեւ նրանով, որ այստեղ համեմատաբար լաւ երեւացող պատը պատկանում է գետնի մակերեսին մասամբ ուրուագծուող ուղղանկյուն մեծ շինութեանը, որի ճակատով գնում է երկարաձիգ գոգաւոր խրամատի տեսքով պահպանուած ջրատար առու՝ ջրանցք: Վերջինիս սկզբնամասը երե-

ւում է արեւմուտքում, ուր եւս ուրուագծում է մի համանուն «կիկլոպեան» պարսպի ճակատ, ապա պարսպի հետ մէկտեղ կորչում քայքայման ենթարկուած կենտրոնական հատուածում: Անցնելով պեղավայրի պատի տակով՝ ջրանցքն անկիւն է տալիս ու թեքում դէպի հիւսիս եւ գնալով 65-70 մ ու շրջանցելով կլոր կացարանը (պեղավայր 3)՝ թեքում է հիւսիս-արեւմուտք, ընթանում մօտ 100 մ եւ կտրուկ իջնում դարաւանդով ներքեւ՝ դէպի հիւսի-

սային պարսպապատի եզրով ձգուող ջրի խանդակը: Այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք հիսիսային պարսպին կից խանդակը ջրով մատակարարող ջրանցքի հետ:

«Կիկլոպեան» պատի ներսի հիսիսահայեաց ճակատին կից դրուեց խուզահոր՝ 3 մ երկարութեամբ, 1 մ լայնութեամբ, որն իջեցուեց մինչև 1 մ խորութեամբ նստած մայր հողը: Խուզահորը հիմնականում ուշ երկաթի դարաշրջանի՝ Ք. ա. է-Չ դդ. թուագրուող նյութեր տուեց (փայլանախշով խեցեղեն, սարդիոնից ուլունքներ, քարե կոկիչներ, աղորիք), իսկ նոյն պարսպի արտաքին ճակատը մաքրելիս երկաթեղարեան նմուշներից բացի ի յայտ եկան ուշ անտիկ գունազարդ եւ միջնադարեան կամ անօթների բեկորներ: 2,1 մ լայնութեամբ «կիկլոպեան» պատը շարուած է երկշերտ, մօտաւոր խորանարդի բերուած մեծածաւալ ճեղքած, «պոչիկավոր» ժայռաբեկորներով, ներսը լցուած է մանր քարերի եւ կաւահողի բուտով¹⁷: Այս կէտում 1 քարի բարձրութեամբ պահպանուած պատը նստած է մայր հողի (կաւահողի) վրայ: Արտաքին ճակատի բոլոր քարերը, բացի մէկից, որի արտաքին եզրն ամրացուած էր մի այլ քարով, թեքուել եւ սկզբնական ճակատային գծից սահել-իջել են կործանուած ջրանցքի թեք լանջով ցած մինչև 1 մ:

Երրորդ պեղավայրը դրուեց երկրորդից 60 մ հիսիս, ուր վերը նշուած ջրանցքը, անկիւն տալով, շրջանցում, ներփակում է ուրուագծուող բնակելի համալիրի անկիւնային մեծ կլոր կացարանը: Վերջինս ամբողջովին պատուած լինելով ծառերից ու թփուտներից կազմուած խիտ բուսականութեամբ՝ գրեթէ չէր նկատուում: Կացարանը յատակագծում ոչ ճիշտ կլոր է, արտաքին տրամագիծը՝ 7,54-7,17 մ: Անմիջապէս մայր հողին նստած պատերը պահպանուել են մինչև 0,9 մ բարձրութեամբ, 1,21-1,35 մ հաստութեամբ եւ շարուած են միջին չափի անմշակ, ճեղքած քարերով, նոյն շինտեխնիկայով, ինչ առաջին պեղավայրի պարսպին ու կլոր աշտարակը: Այն միակ մուտքով բացում է դէպի հարաւ-արեւելք, ուր գետնի մակերեսին ներճկուած փոսերի ձեւով ուրուագծուած է 3-4 կից սենեակներից բաղկացած կառոյց: Կլոր շինութեանը հարաւից ու արեւմուտքից միանում են կաւաշէն (աղիսաշէն) պատեր, այնպէս որ տպաւորութիւն է ստացում, թէ կացարանը մի մեծ բազմասենեականոց բնակելի համալիրի անկիւնային կլոր սենեակ-աշտարակն է: Մաքրուեց կլոր շինութեանը միացող կաւաշէն պատի 1 մետրանոց հատուած: Այդ պատը կազմուած է աւազախառն կաւի միատարր զանգուածից, ուր հում աղիսի շարի գծերը չեն նկատուում: Կլոր կացարանում, ի տարբերութիւն առաջին պեղա-

վայրի, շինաքարերի փլուածքներ գրեթէ չհանդիպեցին, իսկ ներսը լցուած էր միատարր կաւահողով, ինչը ենթադրել է տալիս, որ նրա պատերը բացուածից վեր շարուած են եղել հում աղիսով եւ այն ծածկուած է եղել կենտրոնական սեանը յեմուած կոնաձեւ փայտաշէն, ծղօտածածկ տանիքով: Պեղուեց նաեւ կլոր կացարանի ճակատով անցնող ջրանցքի մի մասը: Վերջինս փորուած է կացարանի 0-ական միջից ներքեւ՝ նրա պատերի արտաքին ճակատից 120-130 սմ դուրս եւ իր՝ կիսաշրջանի մօտեցող գոգաւոր կտրուածքով ամբողջովին նստած է կաւահողային մայր հողի մէջ: Ջրանցքը, որի խորութիւնը 0,6-0,8 մ է, լայնութիւնը՝ 1,20-1,50 մ, պեղման ընթացքում տարբերակուած էր մակերեսի անբնական շիկաւուն, համեմատաբար կարծր կառուցուածքով: Կլոր կացարանին հիսիսային կաւաշէն պատի միացման կէտի դիմաց ջրանցքը կտրուկ խորանում է մինչև 1,3 մ միջը եւ կիսով չափ փակուում թեքութեամբ դրուած քարաշէն պատով, ինչը ջրարգելակ (շիւզ) կամ կամրջի խել է յիշեցնում: Յաւօք, եղած միջոցները թույլ չտուեցին այդ պահին տրամաբանական աւարտին հասցնել ջրանցքի պեղումները, բայց յուսով ենք շարունակել աշխատանքներն առաջիկայում:

Այս պեղավայրում ի յայտ եկան խեցեղէնի ոչ ցայտուն ընդամենը 3-4 բեկորներ, որոնք վաղմիջնադարեան են, եւ մի վաղ ջնարակի նմուշ: Ուշագրաւ է, որ նոյն ջրանցքի վրայ՝ միմեանցից 60 մ հեռու դրուած երկրորդ եւ երրորդ պեղավայրերում բացայայտուեցին աւելի քան մէկ հազարամեակի հասնող ժամանակագրական կտրուածքով երկու տարբեր մշակութային շերտեր, ընդ որում, երկուսն էլ միաշերտ: Այս անսովոր իրողութիւնը պարզաբանելու համար երկարատեւ ու սիստեմատիկ նոր պեղումների կարիք կայ:

Ամփոփելով Կարկառ քաղաքատեղիում կատարուած փոքրածաւալ հետախուզական պեղումները՝ նշենք, որ գործնականում ապացուցուեց յուշարձանի առկայութիւնը: Փաստուեց, որ այն ունի առնուազն յստակ տարբերակուող շինարարական երկու շերտ. առաջինը՝ Վանի թագաւորութեան՝ Բիախնելե-Ուրարտուի ժամանակի տեղական, ուշերկաթեղարեան՝ Ք. ա. է-Չ դդ. թուագրուող վաղ շերտն է, երկրորդը՝ վաղմիջնադարեան, ուշ Արշակունեաց եւ Մասանեան շրջանի՝ Ք. յ. Գ-Չ դդ. թուագրուող ուշ շերտը: Վերջինիս թուագրութեան հիմքում ոչ այնքան յայտնաբերուած խեցեղէնի վերլուծութիւնն է, որը փոքրաքանակ է եւ ոչ խօսուն, որքան կառոյցների շինտեխնիկայի իւրայատկութիւնը՝ զարգացած միջնադարին բնորոշ կրաշաղախի իսպառ բացակայութեամբ: Շինարարական երկու հորիզոնները փաստագրուել են տարբեր պեղավայրերում հնագիտական մէկական շերտով: Իսկ պեղումներից դուրս յայտնաբերուած նիւթերը, մասնաւորապէս առաջին պեղավայրի շրջակայքում եւ

17 Նման «կիկլոպեան» շարուածքով պատեր (պարսպներ) կան Հայաստանի երկաթեղարեան մշակութային շերտ ունեցող բոլոր ամրոցներում (Շամիրամ, Ծաղկահովիտ, Գեղադիր, Հոռոն, Կուռքան, Ծովինար, Լճաշէն եւ այլն):

գագատարի խրամատում ի յայտ եկող վերգետնայ խեցեղէնի նմուշներն աւելի բազմազան են ու ներկայանում են Ք. ա. է-ից մինչեւ Ք. յ. ԺԲ-ԺԳ դարեր ընկած ժամանակահատուածների բնորոշ արտեֆակտներով, ինչը վկայում է յուշարձանում կեանքի անընդհատ յարատեւման մասին մինչեւ զարգացած միջնադար:

Արդ, ինչպէս տեսանք յօդուածի սկզբում, արաբական աղբիւրները Կարկառի կառուցումը վերագրում են Սանանեան շրջանին, այն է՝ Խոսրով Անուշիրուան արքային (531-579): Տուեալ պնդման վերջին կէտը թերեւս չի կարող ընդունուել, քանի որ Անուշիրուանի մի շարք կառոյցներ՝ մասնատրապէս Գերբենդի քարէ պարիսպը եւ Խոտափերիւնի կամուրջը, մեծապէս պահպանուած են եւ դրանք կառուցուած են կրաշաղախով: Փոխարէնը լաւ յայտնի են Խոսրովի նախորդների կառուցուած կառոյցները (որոնց հետ էական նմանութիւններ է դրսեւորում մեր քաղաքատեղիի հիւսիսային պարըսպատն իր խանդակով): Մասնատրապէս յայտնի են Յազկերտ Բ-ի կառուցած Գերբենդի կառուցուած պարիսպը (կառուցուած չափերը՝ 40-43x40-43x10-12) եւ նրանից 18-20 կմ հարաւ ընկած Թովրախ-կալա քաղաքատեղիին Բելիջի աւանի մօտ (պատերի երկարութիւնը՝ 950-1150 մ). վերջինս համադրում է ատրական Կարքա դը-բեթ-Սելոխ քաղաքի «Ժամանակագրութեան» մէջ յիշատակուած «Շահրիստան-ե Յեզդիգերդ» անունով քաղաքի հետ՝ կառուցուած «Չոլ (Չողայ) երկրում»¹⁸: Ըստ Ի դարի հնագիտական պեղումների արդիւնքների՝ կառուցուած են եղել անգամ Կուատ Ա արքայից արքայի (488-496, 498-531) կողմից կառուցուած (ըստ արաբական բազմաթիւ, այդ թում՝ վերը բերուած աղբիւրների) Բայլական եւ Պարտա (Բարդա'ա) քաղաքների պարիսպները¹⁹: Նոյն շինարարական տեխնիկան ակնյայտ է Սասանեանների միջագետքեան կենտրոնի, ինչպէս նաեւ Արեւելեան Իրանի յուշարձաններում (Նիշապուր-Նիսա եւ այլն), որոնք կարող են վերագրուել վաղ Սասանեան ժամանակաշրջանին²⁰:

¹⁸ Hoffmann G., Auszüge aus Syrischen Akten Persischer Mätyrer, Leipzig, 1880, էջ 50; Гаджиев М., К вопросу о местоположении сасанидского города Шахристан-и Йездигерд, – "Древние и средневековые археологические памятники Дагестана", Махачкала, 1980, էջ 111-118; նոյնի՝ Торпах-кала – сасанидский город-крепость на границе албанов и хонов, – <http://www.caucasian-albania.net/?p=32> (2007 թ. Երեսնամյակ տեղի ունեցած աղոսանագիտական միջազգային գիտաժողովի նիւթեր); Кудрявцев А., Древний Дербент, էջ 83-86:

¹⁹ Тревер К., Очерки по истории и культуре Кавказской Албании, IV в. до н. э. – VII в. н. э., Москва-Ленинград, 1959, էջ 265-267:

²⁰ Юсупов Х., Сходства в фортификации Старой Нисы и Игдыкала, – "Ниса – древний очаг развития мировой культуры". Материалы международной научной конференции. 5-7 декабря 2007 г., Ашгабад, 2007, էջ 319-320:

Բայց խանդակներ ունեցող կառուցուած քաղաքային պարիսպները մեծապէս արձանագրուած են նաեւ ուշ անտիկ եւ վաղմիջնադարեան Հայաստանում (ուր կրաշաղախի կիրառման առաջին ակնառու դէպքը համարում է Աղոցքի արքայական դամբարանը՝ կառուցուած 360-ական թթ.): Ամբողջապէս այդ տեխնիկայով է Խոսրով Բ Կոտակի օրօք (330-339) կառուցուել Արտաշատին փոխարինած Դուին մայրաքաղաքը, որի կառուցումը պարսպի առջեւ անցնող ջրի խանդակը մանրամասն նկարագրել են հնագետները²¹: Ըստ Մովսէս Խորենացու՝ կառուցումը պարսպի առջեւ խանդակ է ունեցել արդէն Ք. յ. Բ դարում Հայոց Սանատրուկ արքայի կողմից կառուցուած Մծուրն (Մծուին) քաղաքը²²:

Աղբիւրագիտական նիւթի ուշադիր քննութիւնը թոյլ է տալիս մեզ ենթադրել, որ Կարկառի վաղմիջնադարեան կառուցուածքը հնարար է վերագրել ոչ թէ Սասանեան որեւէ արքայի եւ ոչ էլ պարզապէս Գ-Գ դդ. հայոց թագաւորներին, այլ վերջիններիս հրամանով գործած Սիւնեաց իշխաններին: Նրանք, ըստ Գ. դ. 30-ական թթ. պատկերն արտայայտող «Չօրանամակ»-ի, պատասխանատու են եղել Մեծ Հայքի «Արեւելեան դրան», իմա՝ Ատրպատականի կողմի պաշտպանութեան համար: Ըստ նոյն աղբիւրի՝ Սիւնեաց իշխանի հրամանատարութեան տակ այդ կողմի պաշտպաններից է եղել նաեւ Գրգճունի նախարարութիւնը²³, այսինքն՝ Գորգուտի իշխանութիւնը (*Գ(ո)ր(ո)գճունի): Վերջինս վաղմիջնադարեան հարաւային Արցախի իշխանատոհմն էր՝ Երասխից մինչեւ Վարարակն-Կարկառ գետագիծը հասնող իր տիրոջներով²⁴: 967 թ. Մեսրոպ Վայոցճորեցու երկուն բերուած «Գահնամակ»-ի տարբերակում (կոչուած՝ «Ներսիսեան» կամ «Կեղծ» գահնամակ՝ թագաւորական ու նախարարական 167 տոհմերի անուններով) տրուած է այդ իշխանատոհմի «Գորգուայք» անունատարբերակը²⁵:

²¹ Ղաֆարբեան Կ., Դուին քաղաքը եւ նրա պեղումները, հ. Ա, Երեւան, 1952, էջ 28-30:

²² Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեանը Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիպիս, 1913, գլ. Բ. Գ. էջ 160 (պատմաօր մօտ քաղաքանունը դարձել է «Մծրին»): Հմմտ. Չարեան Ա., Ակնարկներ հին եւ միջնադարեան Հայաստանի քաղաքաշինութեան պատմութեան, Երեւան, 1986, էջ 47-49:

²³ Адоци Н., Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, СПб., 1908, էջ 251:

²⁴ Հմմտ. Յակոբեան Ա., Պատմաաշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ, էջ 281-283, 413-415; նոյնի՝ «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց հայոց», հետազոտութիւն եւ բնագիր, «Մերձատր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հ. XXVIII, Երեւան, 2011, էջ 62:

²⁵ Адоци Н., Армения в эпоху Юстиниана, էջ 259: Ի դէպ, փորձ է կատարուած՝ ցոյց տալու, որ Գորգուտի իշխանատոհմը յիշատակուած է եղել նաեւ բուն Սահակ Պարթեի կողմից կազմուած գահնամակի վերջին հատուածում, որը, ցաւօք, բացակայում է այդ եզակի փաստաթղթի՝ մեզ պատահականօրէն հասած ԺԲ դարի պատարիկում (տես Յակոբեան Ա., «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց հայոց», էջ 62):

Յայտնի է, որ 428 թ. Մեծ Հայքի Արշակունեաց թագաւորութիւնը վերացնելուց եւ Այսրկովկասում մարգպանութիւններ կազմաւորելուց յետոյ պարսից արքաները եւս պարբերաբար Միւնիքի իշխաններին են վստահել Կովկասեան սահմանագծի, յատկապէս նրա արեւելեան կողմի (Չող-Դերբենդի հատուած-Բաղասականի թագաւորութիւն) պաշտպանութիւնը (կուսակալ-բղեշխի լիազօրութիւններով)²⁶: Ի դէպ, Կովկասեան սահմանագծի արեւմտեան կողմում նմանատիպ գործառոյթը դեռ Արշակունի թագաւորների յանձնարարութեամբ վարում էին Գուգարքի բղեշխ-կուսակալները (Վրաց թագաւորութեան ռազմական ներուժի ներառումով) Յուրտա-Մուղդաբիլ կենտրոնից, իսկ կենտրոնական կողմում՝ ըստ ամենայնի, Գարդմանացի կուսակալ-իշխանները (Աղուանից թագաւորութեան ռազմական ներուժի ներառումով) Գարդման-Ջարդաման կենտրոնից²⁷: Տեսանք, որ արաբ հեղինակները եւ Սուղդաբիլի, եւ Ջարդամանի կառուցումը վերագրում են նոյն Անուշիրուանին: Երկու դէպքում էլ նրանք իրականութիւնից շեղում են գոնէ մէկ դարով, քանի որ Գարդմանն ու Յուրտաւը հայ եւ վրացի հեղինակները յիշատակում են Ե դ.: Մասնատրապէս, ըստ Ժ դ. պատմիչ Մովսէս Դապխուրանցու (նաեւ՝ *Կաղանկատուացի*) ունեցած աւանդախառն տեղեկատուութեան, Գարդմանի կառուցողն էր «Միհրանեան» յորջորջուած Վարդան Քաջ Գարդմանացի իշխանը («Վարդ ծնաւ գՔաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զերխս ամս»); «Քաջ Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս եւ որ (*ձեռագրերում վաղ վրիպակով՝ ոչ փխս որ*) շինողն Գարդման բերդոյ»²⁸, իսկ նա Չ դ. սկզբին Աղուանից վերջին Արշակունի արքայ Վաչագան Բարեպաշտի (485-523)²⁹ գումարած Աղուեմի ժողովի մասնակիցներից էր («Վարդան Քաջ՝ Գարդմանայ տէր...»)³⁰: Տեղին նշենք, որ Դապխուրանցու՝ ուշ ասանդութիւնից եկող մի պնդում Պարտաւի կառուցումը վերագրում է Աղուանից Վաչէ Բ թագաւորին (451-461/462) եւ Կուստ Ա-ի հորեղբայր Պերոզին («Եւ ի հրամանէ Պերոզի՝ Պարսից արքայի, շինեցաւ ի Վաչէէ Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ»)³¹: Բայց նոյն պատմիչի մօտ բա-

նացի արտագրուած՝ «684 թ. պատմութիւն» պայմանական անուամբ երկուսն Պարտաւը 7 անգամ կոչուած է «Պերոզ-Կուստ», որը պարսկերէն նշանակում է «Կուստը՝ յաղթող» եւ ցոյց տալիս Պարտաւ-Բարդաւայի իրական կառուցողի մասին արաբական աւանդոյթի հաւաստիութիւնը³²:

Մեր խնդրի համար կարեւոր է նաեւ Միւնիքում («Միսաջանում») Սասանեան արքաների *կողմից* (իմա՝ *օրօք*) կառուցուած ամրոցների մասին արաբ հեղինակների հաղորդումների (վերետում բերուած) արժեւորումը: Այդ ամրոցներից մէկի՝ ամենայն հաւանականութեամբ, Գորդուի շրջակայքում գտնուած *Քիլաբի* մասին պահպանուել է ալ-Բալազուրիի ուշագրաւ վկայութիւնը, ըստ որի՝ այնտեղ պատսպարուել էր Ը դ. կեսերին Խալիփայութեան դէմ Բայրականում ապստամբած Մուսաֆիր ալ-Կասսաբ ամիրան³³: Ի դէպ, միւս ամրոցի՝ «Շահաբունս»-ի մասին հետաքրքրական աւանդախառն տեղեկութիւն է պահպանել Ստեփաննոս Օրբէլեանը. «Շահապանից բերդ՝ ի Շահապայ *պարսկէ* շինեալ, եւ ձորն յիւր անուն՝ Շահապանից ձոր, որ հատուածի պատճառաւ եկեալ էր առ նահապետս Միւնիք»³⁴:

Այսպիսով, ըստ ամենայնի, Կարկառ քաղաքը կառուցուել էր (վերակառուցուել) հենց Մեծ Հայքի արեւելեան ու հիւսիսարեւելեան պաշտպանական ուղղութիւնների առանցքում եւ Գ-Չ դարերում (մինչեւ Պարտաւի կառուցումը Չ դ. սկզբին) լիովին կարող էր, իբրեւ կենտրոն-գօրակայան, ապահովել երկրի խորքից Միւնեաց իշխանների եւ այս գործում նրանց ենթակայ հարաւային Արցախի *Գորդունիների*³⁵ կողմից ղեկավարուող գործողութիւնները դէպի այդ ռազմավարական կողմերը: Միաժամանակ Արցախի հարաւային ու կենտրոնական շրջանների սահմանագծում եւ նրանց կարող հիմնաւորց «հիւսիս-հարաւ» մայրուղու վրայ գտնուելով³⁶ Կարկառը երկար դարեր պիտի պահ-

26 Հմմտ. **Бархударян С.**, Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, научн. редакторы: **Акопян А. и Асатрян К.**, Ереван, 2011, էջ 126-130:

27 Այդ գործառոյթի վրայ հիմնուած սերտ կապն էր պատճառը, որ 428-ին Գարդմանք-Ուտիքը մտցուեց Աղուանից մարգպանութեան (նաեւ՝ թագաւորութեան) կազմի մէջ, իսկ Արցախը՝ ոչ (վերջինս մտցուեց նրանց մէջ լոկ 450-451 թթ.):

28 **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածութիւնը **Վ. Առաքելեանի**, Երեւան, 1983, գլ. Բ. ժէ, էջ 172 եւ գլ. Գ. իր, էջ 339:

29 Հմմտ. **Յակոբեան Ա.**, Պատմաաշխարհագրական եւ վիճագրագիտական հետազօտութիւններ, էջ 187-188:

30 **Մովսէս Կաղանկատուացի**, գլ. Ա. իր, էջ 94; Մատենագիրք Հայոց, հ. Գ, 2 դար, Անթիլիաս, 2004, էջ 139:

31 **Մովսէս Կաղանկատուացի**, գլ. Ա. ժէ, էջ 42; Մատենագիրք Հայոց, հ. Գ, էջ 66:

32 «Պերոզա-պատ»-ի մասին ուշ աւանդոյթը բերեւս հետեւանք է «Պերոզ-Կուստ» անուն ժողովրդական ստուգաբանութեան՝ «Վաղարշա-պատ»-ի զուգորդութեան հիման վրայ (հմմտ. **Акопян А.**, Албания-Алуанк, էջ 123):

33 Արաբական աղբիւրներ, Գ, էջ 280: Հմմտ. վերետում, ծնր. 3, 4:

34 **Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի** Պատմութիւն տանն Միսական, Մոսկվա, 1861, գլ. Բ, էջ 8:

35 Անշուշտ, այս տոհմն է, որ Խորենացու մօտ (Բ.ը, էջ 113) կոչուած է *Գարգարացիք*՝ իբրեւ Մեծ Հայքի «մեծ եւ անուանի» հիւսիսարեւելեան կուսակալութեան («ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն... Հնարակերտ») Առան, Միսակ եւ Հայկ նահապետներից սերող չորս իշխանութիւններից վերջինը: Այդ անուանատարբերակի հիմքը Ազաթանգեղոսի մի վաղ ձեռագրի՝ *Գուգարացոց* բղեշխին «Գարգարացոց» կոչած վրիպակն է (տես **Համբարեան Յ.**, Գուգարացիք, թէ՛ Գարգարացիք, «ՀԱ», 1910, էջ 242; **Акопян А.**, Албания-Алуанк, էջ 65): Իսկ այժմ պարզ է, որ դրանում դեր է յաղագել նաեւ *Գորդուի* իշխանների տիրոջներում *Կարկառ* անունով (խօսուածքային՝ *Գարգառ*) քաղաքի գտնուելու իրողութիւնը:

36 Հէնց այդ դիրքի պատճառով Կարկառը նաեւ Խաչէնի իշխանների յաւակնութիւնների շրջանակում էր, ինչպէս որ երեւում է Հասան Ջալալի ու մոնղոլների բանակցութիւնների մասին Կիրակոս Գանձակեցու հաղորդումից (տես վերետում, ծնր. 9):



«Կանաչ խաչ» սրբատեղի Կարկառ քաղաքատեղիի ստորոտում



Կարկառ քաղաքատեղի առաջնորդած քարաշենցի Վազգեն Աղաջանեանը հիւսիսային պարսպահատուածի մօտ

պաներ իր միւս՝ տարածաշրջանի կարեւոր առեւտրատնտեսական կենտրոնը լինելու գործառնալով:

Համադրելով առկայ աղբիւրագիտական նիւթը եւ Կարկառ քաղաքատեղիի հետախուզական հնագիտական պեղումների ու շրջակայքի հետազոտութեան արդիւնքները՝ ընդգծենք, որ յուշարձանի գոնէ վաղմիջնադարեան ինֆրակառուցուածքի պատկերը միանգամայն բնորոշ է քաղաքային բնակավայրին՝ հէնց քաղաք բնութագրող բոլոր յատկանիշներով: Դրանք են՝

ա. դաշտավայրային գոտուց դէպի նախալեռնային գոտի անցնելու ամենամատչելի ու յարմար ուղու վրայ տեղադրուած լինելը,

բ. զբաղեցրած մեծ տարածքը,

գ. մեծածաւալ, մոնումենտալ շինութիւնների (ղրանց հետքերի) առկայութիւնը,

դ. առանձնացուած պաշտպանուած, բարձրադիր, տարածքի վրայ գերիշխող միջնաբերդը,

ե. քաղաք մտնող, կառուցապատմամբ շեշտադրուած հիմնական, գլխաւոր ճանապարհը,

զ. քաղաքի հիմնական պարսպից դուրս տեղադրուած բնակելի թաղամասերը (շահաստան, ռաբաթ),

է. բազմաշերտ ու բազմաստիճան պաշտպանական համակարգը,

ը. հասարակութեան ներքին կազմակերպութեան բարձր՝ պետական մակարդակ պահանջող կառոյցը (իռիզացիոն ցանցը ջրանցքով ու պարսպատակի ջրի խանդակով),

թ. մօտակայքում գտնուող բազմաթիւ ընդարձակ (որոշ հաշուարկներով՝ մի քանի հազարի հասնող թաղումնային կառոյցներով) դամբարանադաշտերը,

ժ. քաղաքի շրջակայքում տեղադրուած, այն ուղեկցող սատելիտ ամրոց-բնակավայրերը եւ այլն:

Ամենայն հաւանականութեամբ, Կարկառը քաղաք է եղել սկսած Բ. ա. Է-Չ դարերից, քանի որ վերը նշուած յատկանիշների մի զգալի մասը ձեւատրուել է արդէն Վանի թագաւորութեան երկաթե-

դարեան ժամանակաշրջանում³⁷: Ըստ բացայայտուած հնագիտական նիւթի՝ քաղաքում կեանքը չի ընդհատուել նաեւ արեւմենեան ու հելլենիստական շրջաններում: Իսկ վաղ միջնադարում՝ ուշ Արշակունեաց եւ Սասանեան դարաշրջաններում, քաղաքը վերակառուցուել, ընդլայնուել ու ամրացուել է (զբաւոր աղբիւրների խօսքերով՝ Չ դարի պարսից տիրակալ Խոսրով Անուշիրուանի կողմից): Այդ ժամանակ կառուցուել են նրա հիւսիսային պարսպի իր ջրի խանդակով, բազմասենեականոց բնակելի համալիրը կենտրոնում (պեղավայր 3) եւ այլն: Աւելին, վաղ միջնադարում վստահաբար օգտագործել են հնում ձեւատրուած քաղաքային ենթակառուցուածքը՝ ընդլայնելով այն եւ յարմարեցնելով նոր խնդիրներին ու պահանջներին. մասնատրապէս հիւսիսային պարսպատակի ջրի խանդակը սնոււմ էր երկաթի դարում փորուած մայր ջրանցքով (որին, հնարաւոր է, կցուել է խանդակը սնող մի նոր թել):

37 Այդ շրջանին են պատկանում նաեւ քաղաքից ոչ հեռու յայտնաբերուած ընդարձակ դամբարանադաշտերը: Դրանցից երկուսում՝ Շօշի «Շղասար» եւ Շուշիի «Օղակայան» դաշտամասերի դամբարաններում կատարուած պեղումները տուել են Կարկառի վաղ շերտին համաժամանակեայ գտածոներ: Տես Պետրոսեան Հ., Մաֆարեան Վ., Հնագիտական պեղումներ Արցախում, «ՀՀ-ում 1989-90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան», գեկուցումների թեզիսներ, Երեւան, 1991; Ենգիքարեան Ն., Տիտանեան Մ., Շուշիի երկաթեդարեան դամբարանները, «Շուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան» (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նուիրուած գիտաժողովի նիւթեր), Երեւան, 2007:

ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ԱՂՃԱՏՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Սամվել Կարապետյան

Հայանի է, որ խորհրդային տարիներին պատմական հուշարձանների վերականգնման աշխատանքներն իրականացվում էին Նախարարների խորհրդին առընթեր հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության գլխավորությամբ: Սահմանված կարգով վերականգնելիք յուրաքանչյուր հուշարձան մախ տեղում մանրակրկիտ չափագրվում էր, ապա դրա և հարակից նյութերի ուսումնասիրությունների հիմքի վրա ստեղծվում էր տվյալ հուշարձանի վերականգնման նախագիծը: Դրանից հետո պատրաստ նախագիծն անպայմանորեն ներկայացվում էր գիտական խորհրդի քննարկմանը և միայն դրական կարծիքի արժանանալուց հետո հաստատվում էր և գործադրվում՝ տվյալ հուշարձանը համաձայն այդ հաստատված նախագծի վերականգնելու համար:

1990-ական թվականներից ի վեր տարբեր պատճառներով պատմական հուշարձանների վերականգնման գործընթացներում ավելի ու ավելի հաճախ են արձանագրվում գիտական նորմերից տարատեսակ շեղումներով հուշարձանների վերականգնման այն դեպքերը, որոնք աշխատանքների ավարտից հետո երբեմն նույնիսկ ավելի ճիշտ է բնութագրել ոչ թե որպես վերականգնված, այլ վերակառուցված:

Ակնհայտ է, որ անցանկալի այս երևույթները հետևանք են ինչպես ոլորտում պետական պատկան մարմինների գործադրելիք հսկողության լծակների թուլացման, այնպես էլ նյութական մշակույթի հուշարձանների պահպանության խնդրում որոշ հաստատությունների և անհատների դրսևորած կամայականությունների:

Իրապես ցավալի է և, ինչու չէ, նաև տարօրինակ, որ հուշարձանների աղճատումը փաստացի տեղի է ունենում դրանց պահպանության խնդրով մտահոգություն դրսևորելու արդյունքում: Չէ՞ որ նախնիներից ավանդված հիշատակների հարատևմանը միտված ներդրումներն առհասարակ թելադրված են ամենաազնիվ մղումներով, և դրանց պահպանության նպատակին հատկացված նյութական միջոցներն էլ, որպես կանոն, անշահախնդիր նվիրաբերություններ են: Ուրեմն միայն խորին ավստասանք կարելի է հայտնել բոլոր այն դեպքերի համար, երբ անկեղծ հայրենասիրական զգացումներից բխած և ծավալված վերականգնողական աշխատանքներն առաջնորդվում և առաջ են մղվում ոչ թե հուշարձանի վերականգնման գիտա-

կան սկզբունքների, այլ գեղեցիկի մասնավոր ընկալումների համեմատ:

Ինչևէ, առանց համապատասխան գիտական խորհրդի քննության և հաստատման (այլ խոսքով՝ առանց վերականգնման նախագծի), առանց նույնիսկ անհատ վերականգնող ճարտարապետի ներգրավվածության վերջին երկու տասնամյակների ընթացքում թե՛ Հայաստանի Հանրապետությունում, թե՛ Արցախում և Ջավախքում փաստացի ոչ թե վերականգնվել, այլ վերակառուցվել են պատմական տասնյակ հուշարձաններ: Բոլոր այն հուշարձանները, որոնք «վերականգնվել» են այս կերպ, առանց բացառության անդառնալիորեն կորցրել են իրենց պատմական, ճարտարապետական և գեղարվեստական արժանիքները կամ առնվազն դրանց մեծ մասը:

Հայանի են նաև ինքնագործունեության առավել վատթար դեպքեր, երբ հնօրյա շինությունը «բարեգործի» ճաշակին չհամապատասխանելու պատճառով ընդհանրապես ջնջվել է երկրի երեսից և դրա փոխարեն «հայրենասիրական» մղումներով տեղում վեր է հառնել բոլորովին նոր շինություն:

Յավալի է, անշուշտ, որ նույնիսկ այսօրինակ դեպքերում, երբ հանդուգն տգիտությունը փաստացի ավեր և չարիք է գործում, եղելությունը հասարակությանը հաճախ հրամցվում է իբրև բարեգործություն:

Տարիներ շարունակ այս կարգի երևույթներն ընդհանուր առմամբ առանձնահատուկ ուշադրության չեն արժանացել, բայց 2011 թ. Գանձասարի շրջապարսպի երեսապատման խնդրո առթիվ ծայր առած բռնա քննարկումները¹ թերևս լրջորեն բեկեցին հարցի նկատմամբ սովորական դարձած անտարբերությունը:

Պայմանավորված այն հանգամանքով, որ վերականգնման անհրաժեշտության կարիք ունեցող հուշարձանները քրիստոնեական պաշտամունքային կառույցներ են (այսինքն՝ վանքեր, եկեղեցիներ և մատուռներ, որոնք այլազան հուշարձանների շարքում ավանդաբար առանձնահատուկ հոգածության ներքո են), հենց այս հուշարձանատեսակներն էլ մեծ մասամբ ենթարկվում են տարաբնույթ աղճատումների:

Ստորև ներկայացնում ենք բաղձալի վերականգնումների արդյունքում կերպարանափոխված և անդառնալիորեն աղճատված մի խումբ հուշարձաններ:



¹ Մանրամասն տե՛ս մեր «Գանձասարի շրջապարսպի երեսապատման և հարակից հարցերի մասին» հոդվածը, «Հայոց աշխարհ», 2011, № 160-162 (7-9 սեպտեմբերի):




Ջավախք. Սերենիա գյուղ. «Կոտրած եկեղեցու» տեսքը հյուսիս արևմուտքից (1988 թ.) և կամայական «վերականգնումից» հետո (2001 թ.)



Արցախ. Մարտունու շրջան, Սամնա գյուղ. Շոշկա վանքի (1651 թ.) տեսքն արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 թ.) և հիմնահատակ ոչնչացնելուց հետո 1999 թ. տեղում կառուցված միանգամայն նոր եկեղեցին (լուս.՝ Բ. Քորթոշյանի, 2011 թ.)



Արցախ. Շուշիի շրջան, Բերդաձորի ենթաշրջան, Մեծչեն գյուղ, Պարին Պիժ վանքի եկեղեցու (1658 թ.) տեսքը հարավ-արևմուտքից (1989 թ.) և «վերականգնումից» հետո (2009 թ.)




Արցախ. Մարտակերտի շրջան, Վանք գյուղ, Գանձասարի վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից (ԺԹ դարի վերջ), հատված անմշակ քարով կառուցված միաբանական սենյակներից (1980 թ.) և դրանք նախնական շարվածքին հարազատ սկզբունքով վերականգնման պահին (1999 թ.): Դրվագներ շրջապարիսպն ինքնահնար և նախնական շարվածքին անհարազատ սրբատաշ քարե սալիկներով երեսապատելու ընթացքից (լուս.՝ Արեգ Բալայանի, 2011 թ.)



Հայաստանի Հանրապետություն. Կոտայքի մարզ, Բջնի գյուղ, 2000-ական թթ. վերջերին Սբ. Աստվածածին եկեղեցու հնամենի, միանգամայն անխաթար պահպանված բազալտե սալահատակը հեռացվեց և փոխարինվեց գրանիտե սալիկներով (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.), իսկ Տաթևի վանքի (Սյունիքի մարզ) Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու հատակն անհանդուրժելի միևնույն մոտեցումով դեռևս 1980-ական թթ. մարմարապատվեց (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ.):

ՀՃՈՒ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անին մայրաքաղաք հռչակելու 1050 ամյակի կապակցությամբ 2011 թ. ՀՀ Սփյուռքի նախարարության պատվերով Սփյուռքի և Մշակույթի նախարարությունների համատեղ հովանավորությամբ 2012 թ. տարեակգրին լույս ընծայվեց «Անի-1050» եռալեզու պատկերազարդ հատորը, որն ընդգրկում է հին և նոր գրեթե 700 լուսանկար, բազմաթիվ չափագրություններ, քաղաքի հատվածական և գլխավոր հատակագծեր և օժանդակ այլ նյութեր:



Ի նշանավորումն Հայ տպագրության 500-ամյակի՝ լույս է տեսել նաև «Տպարանները Հայոց Հայրենիքում» (1771-1920 թթ.) քարտեզը:

